ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԱԿՆԱՐԿՆԵՐ
ԱՖՈՐԻԶՄՆԵՐ



ARTICLES
ESSAYS
APHORISMS

ԵՐԵՎԱՆ-2015

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Առանձին գրքույկով հայ ընթերցողին է ներկայացվում Դավիթ Միրզոյանի մի շարք առանցքային հոդվածների, ակնարկների ու աֆորիզմների ժողովածուն։

Իր հոդվածներով ու ակնարկներով Դավիթ Միրզոյանը մշտապես անդրադարձել է մեր ազգային ճգնաժամին ու դրանից դուրս գալու ճանապարհներին։ Հեղինակի համոզմամբ ճգնաժամից դուրս գալու միակ միջոցը գաղափարական հեղափոխությունն է՝ մեր ազգային ոսմունքի վերականգնումն ու սերմանումը։ Մեր ազգային ոսմունքն ազգայնացված տնտեսությունն է ու նահապետական՝ միապետական, կառավարումը։ Մեր ազգային ոսմունքի հիմնարար դրույթները ներկայացված են Դավիթ Միրզոյանի կողմից կազմված «Արարչական օրենքներով» և «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությամբ»։

Ժողովածուի հոդվածների ու ակնարկների հիմնական միտումն է՝ ներկայացնել Արարչական ոսմունքի ու համատիեզերական կարևոր օրինաչափությունների էությունը, մեր ազգային ճգնաժամի պատճառներն ու դրանից դուրս գալու ճանապարհը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ և ԱԿՆԱՐԿՆԵՐ

Արիականություն 4
Մշակույթ-օրենսդրություն 11
Տեսակ-աշխարհճանաչողություն-ոամունք-օրենք-
մշակույթ 12
Ոամունք-կրոն 14
Հայկ և Բել 18
Հայոց պատմություն 21
Երջանկության մեխանիկան 23
Տգիտության կուլտը 24
Նախ հայ մտավորականները պիտի համախմբվեն 27
Բաց նամակ/դիմում համայն հայ մտավորականությանը 29
Շանթ Հարությունյանի «Ժողովուրդ և
քաղաքականություն» հոդվածի շուրջ 32
Ինքնակենսագրական/կոչ հայ մտավորականներին 37
Մեր դժբախտությունը 40
Անցում դեպի նահապետական կառավարման՝
միապետության 43
Մեր օտարամոլության պատճառը 45
Մեր ճգնաժամը 46
Նացիոնալ-սոցիալիզմ 48
Հանցագործությունների դրդապատճառները 52
Սիրահարվածություն, համակրանք, սեր 56
Դիմակահանդես 58
Մեր հանրահայտ ներազգային գզվռտոցի պատճառը 62
Միապետություն-բռնապետություն-դեմոկրատիա 94
Հեղափոխություն 103
Ինչո՞ւ է դեմոկրատիան վտանգավոր 107
Մեր պառակտվածությունը՝ առավելություն 109
ԱՖՈՐԻԶՄՆԵՐ 111

ՀՈԴՎԱԾՆԵՐ և ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԱՐԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արիացիներն արարվել են Արարչի կողմից։
Արիացիներն արարվել են Արարչի նմանությամբ։
Արիացիներն արարվել են Արարատում։
Արիացիների մի մասը, հետագայում տարածվելով դեպի արևելք ու արևմուտք, իրենց հետ տարել է գենը, լեզուն ու մշակույթը։

Արիացիներն իրենց արտագաղթի ճանապարհին կորցրել են իրենց լեզվի ու մշակույթի շատ առանձնահատկություններ, բայց հիմնականում պահպանել են իրենց գենի էությունը։ Իսկ ո՞րն է արիական գենի էությունը։ Արիական գենի էությունն է արդարության, ճշմարտության, բարու ու գեղեցիկի ընկալումն ու ձգտումն այն աստիճան, որ արիացին պատրաստ է զոհաբերել իր, նույնիսկ իր հարազատների, կյանքը՝ արդարության, ճշմարտության, բարու ու գեղեցիկի համար։

Արիացու այս բացառիկ հատկությունն է, որ շատերը սխալմամբ որակում են մեկ՝ որպես ռազմամոլություն, մեկ՝ որպես խիզախություն, կամ անվախություն, նույնիսկ խելագարություն, անգամ անխելքություն, ընդհուպ մինչև միամտություն՝ առանց փորձելու խորանալ հարցի բուն էության մեջ։

Արիացու արդարությանը, ճշմարտությանը, բարուն ու գեղեցիկին անսահման նվիրվածությունն է պայմանավորում արիական մշակույթը։ Մշակույթը ֆոլկլորը չէ։ Մշակույթն այն ներքին մեխանիզմն է չգրված օրենքների տեսքով, որ պայմանավորում է միջանձնային հարաբերությունները։ Արդարության, ճշմարտության, բարու ու գեղեցիկի վրա հիմնված արիական մշակույթը բերում է միայն էգալիտարյան հասարակության։ Էգալիտարյան հասարակու-

թյունն իրավահավասարների հասարակություն է, ուր չկա մեկը, որ ավելի շատ իրավունք ունենա, քան մյուսը։ Ասենք, օրինակ՝ իրավունք ունենա սեփականացնել որևէ հողատարածք՝ իր լճերով, գետերով, անտառներով կամ հանքավայրերով՝ թույլ չտալով մյուսներին օգտվել դրանցից կամ վարձատրություն պահանջել՝ օգտվելու համար։

Արիական, էգալիտարյան հասարակությունում բոլորը հավասար իրավունք ունեն՝ օգտվելու մայր հողի բարիքներից։ Արիական էգալիտարյան հասարակությունում ամեն մարդ իրավունք ունի որևէ ազատ տեղ հող վերցնել, մշակել այն ու ընտանիք պահել։ Հետևաբար, արիական հասարակությունում չկան հարուստներ ու աղքատներ։ Արիական էգալիտարյան հասարակությունը քաղաքակիրթ հասարակություն է, ուր ամեն ոք հարգում է մյուսին այնպես, ինչպես ինքն իրեն։ Այստեղ հարկ է նույնականություն տեսնել Քրիստոնեություն ուսմունքի «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում» ամենագլխավոր պատվիրանի հետ։ Արիական մշակույթն ենթադրում է եղբայրների ու քույրերի հասարակություն, ուր իշխում է միայն փոխվստահությունն ու համագործակցությունը, ուր ուժեղները հոգ են տանում թույլերի մասին, կռվում նրանց փոխարեն։

Ի հակադրություն՝ կապիտալիստական հասարակությունը, ուր մրցակցությունն ու հակամարտությունն են իշխում (անգլերեն՝ dog eat dog world. թարգմանաբար՝ միջավայր, ուր շունը շան միս է ուտում), բոլորը թշնամի են միմյանց։ Հետևաբար, կապիտալիստական տնտեսավարման ձևը ոչ միայն պառակտում ու թուլացնում է հասարակությունը, այլ նաև անհարիր է արիական գենին ու մշակույթին։

ՀԱՅ ԱՐԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հին Հայաստանը թեկուզև ագրարային, բայց միևնույն ժամանակ էգալիտարյան հասարակություն էր՝ իրավահավասարների հասարակություն, ուր չկար մարդու կողմից մարդու շահագործում։ Էգալիտարյան կացութաձևը համարյա նույնությամբ պահպանվել էր Հայաստանում քաղաքնե-

րից հետու, գյուղական համայնքներում ընդհուպ մինչև XIX դարի կեսերը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ մինչև XX դարի սկիզբը։ Կապիտալիզմի մուտքն ամբողջովին խաթարեց հայ արիական մշակույթը։ Մենք իսպառ կորցրինք մեր ազգային նկարագիրը։ Մարդու կողմից մարդու անխնա շահագործումը դարձավ ընդունելի, հետագայում, ցավոք, նաև՝ կյանքի նորմ։ Հազարամյակներ շարունակ իր առաքելությունը պատվով կատարած ազգը կորցրեց իր երբեմնի արիացու նկարագիրը։

ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Ամեն ինչ սկսվեց, երբ Քրիստոնեությունը Հայաստանում որպես կրոն տարածելու համար ոչնչացվեց ողջ հոգևոր դասն ու գրականությունը, ուսմունքն ու օրենքները, ամեն ինչ, ընդհուպ մինչև այբուբենը։ Հետո, երբ Պավլիկյան ու հետագայում Թոնդրակյան շարժումները խեղդվեցին արյան մեջ։ Հետո, երբ 1828-ին Ռուսական Կայսրությունը գրավեց Հայաստանը պարսիկներից ու 1861 թվականին ճորտատիրության վերացումից հետո երկրում կապիտալիզմ մտցրեց։ Հետո, երբ բոլշևիկները գրավեցին Հայաստանը 1920-ին ու մտցրին բռնի կոմունիզմ, որն իր յոթանասուն տարիների գոյության ընթացքում, սակայն, չհաջողեց արմատապես ազդել մեր մշակույթի վրա։ 1991-ից այս կողմ մենք միայն բռնի կոմունիզմից վերադարձել ենք դեպի կապիտալիզմ։

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նկատենք, որ մեր դժբախտությունների շարանի սկիզբը համընկնում է վերը նկարագրված ժամանակաշրջանի սկզբի հետ, երբ Քրիստոնեությունը որպես կրոն հրով ու սրով մտցվեց Հայաստանում։ Ընդ որում եկեղեցին, հողեր սեփականացնելով, դարձավ առաջին ֆեոդալը։ Իմիջիայլոց և՛ ֆեոդալիզմը, և՛ ստրկատիրությունը կապիտալիզմի դրսևորման ձևեր են միայն։ Շահույթի նպատակով մարդու կողմից մարդու ցանկացած շահագործում ենթադրող կացութաձև կապիտալիզմ է։ Ի դեպ, եկեղեցիների որոշ մասն էլ եկեղեցու դեմ ընդվզած հայերն են քանդել՝ ո՛չ բոլորն են քանդվել երկրաշարժից կամ օտար նվաճողների կող-

մից։ Նկատենք նաև, որ մեր դժբախտությունները գնալով բազմապատկվեցին։ Ու, ցավոք, ավելի ու ավելի անտանելի են դառնալու կապիտալիզմի, ավելի ճիշտ՝ մոնոպոլիստական կապիտալիզմի խորացմանը զուգընթաց։ Ինչո՞ւ։ Որովհետև կապիտալիզմն ենթադրում է հակամարտություն հասարակության մեջ, բաժանելով այն միմյանց թշնամի խավերի։ Կապիտալիզմն, ըստ էության, լեգալացված կողոպուտ է։ Իսկ արիացու էությանը խորթ է կողոպուտի, ընդհանրապես բռնության որևէ դրսևորում, քանզի կողոպուտն ենթադրում է անիրավահավասարություն, որն անընդունելի է արիացու համար։

Ի՞ՆՉ ԱՆԵԼ

Մենք՝ արիացիներս, իրավունք չունենք կով գնալու կապիտալիզմի անքաղաքակիրթ, լեգալացված կողոպուտի, ջունգլիների օրենքների «մշակույթին»։ Պետք է հասկանանք, որ կապիտալիզմը պառակտում է մեզ ու ազգովի կործանում է տանում, նաև, որ անիրավահավասարների ազգը երբեք հզոր չի լինի։ Բայց մյուս կողմից կոմունիզմը, ավելի ճիշտ՝ բոլշևիկյան բռնի կոմունիզմն է սարսափեցնում մեզ։

Եթե շարունակենք սովետական բռնի կոմունիզմը շփոթել համանուն ուսմունքի հետ, ապա կմնանք փակուղում։ Պավլիկյանների ու Թոնդրակյանների պես, աշխարհի բոլոր առաջադեմ մտածողների բաղձանքն է եղել կառուցել իրավահավասար ու հավասարազոր անհատների արիական՝ էգալիտարյան, հասարակություն, որին տարբեր ժամանակներում տվել են տարբեր անուններ՝ «Ուտոպիա»-ից մինչև «Կոմունիզմ»։ Սովետական բռնի կոմունիզմից զանազանելու համար մեր բաղձանքների հասարակությունն անվանենք ԱՐիական ԷԳալիտարյան՝ ԱՐԷԳակնային հասարակություն։

Շատերը կհիշեն Թումանյանի թարգմանությամբ հնդկական «Ոսկի քաղաքը» հեքիաթը, Թոմաս Մորի «Ուտոպիան», Թոմաս Կամպանելայի, Ֆրենսիս Բեկոնի նկարա-

գրած հասարակությունները, ֆրանսիացի ուտոպիստ-սոցիալիստների գաղափարախոսությունը և այլն։ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ հասարակությունն աշխարհի բոլոր առաջադեմ մտածողների մշտական բաղձանքն է եղել։ Ներկայումս աշխարհում մեծ թափ է առնում ազնվաբարո՝ արի, մարդկանց շարժումը կապիտալիզմի դեմ, քանզի ներքևներում այլևս չեն ուզում հանդուրժել ստրուկի ապրելակերպ։

Մենք՝ արիացիներս, պարտավոր ենք կառուցել էգալիտարյան՝ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ, հասարակություն, մեր սերունդների երջանկությունն ապահովելու համար։

ԻՆՉՊԵՂ

Նախ հարկավոր է վերականգնել մեր նախնյաց արիական ոամունքը, օրենքներն ու մշակույթը։ Դա անվանենք ազգային գիտակցության զարթոնք։

Մտավորականությունը պատասխանատվություն ու պարտավորություն ունի սկսելու ազգային գիտակցության զարթոնքը, նախ բացատրելով մեր ժողովրդին իր դժբախտությունների իսկական պատճառները, միաժամանակ վերականգնելով ու տարածելով մեր նախնյաց Արարչական ոամունքը, օրենքներն ու մշակույթն՝ իր բոլոր դրույթներով ու ենթադրույթներով։ Այդ ընթացքում աստիճանաբար դուրս կմղվեն օտարածին ազդեցությունները մեր մշակույթից ու կհաստատվի ճշմարիտ արիական մշակույթ։ Կբարելավվեն միջանձնային հարաբերությունները։ Ազգային զարթոնքի այս ճանապարհին հայ ժողովուրդն աստիճանաբար կվերածվի իր արմատներին արժանի արիացի ազգի։ Կառաջանա իմաստուն այրերի դաս։ Բարոյահոգևոր բարձր արժեքների տեր ազգն արդեն կիմանա՝ ինչպես բարելավել երկրի ներքին կյանքը, կառավարման ու տնտեսավարման համակարգերը։

ԿՈՆԿՐԵՏ ՔԱՅԼԵՐ

Արիացած ազգը կհրաժարվի տնտեսավարման կապիտալիստական ու կառավարման ժողովրդավարական ձևերից ու կանցնի նահապետական կառավարման։ Ազգի իմաս-

տուն այրերը՝ նահապետները, իրենց ենթակա կառույցների միջոցով կվերահսկեն օրենքների ու մշակույթի պահպանումը գյուղական, քաղաքային ու մարզային մակարդակներում։ Երկրի ընդհանուր ու միջազգային հարաբերությունների պատասխանատուն կլինի ազգի ամենաիմաստուն գերագույն նահապետը՝ Համայն Հայոց Արքան՝ իր խորհրդականների խորհրդատվական աջակցությամբ։

Տնտեսավարման ոլորտում կազգայնացվի ողջ տնտեսությունն ու կդրվի գերագույն նահապետի՝ Համայն Հայոց Արքայի, իշխանության տակ՝ հողը, ընդերքը՝ իր ջրային ու օգտակար հանածոներով, աղբյուրները, գետերն ու լճերը, անտառները, մարգագետինները, ոռոգման, ջրամատակարարման ու ջրահեռացման ողջ համակարգը, ճանապարհներն ու հաղորդակցության ողջ համակարգը, ազգային գանձարանը, էլեկտրաէներգիայի ու բոլոր տեսակի էներգակիրների արտադրության ու ներկրման ձեռնարկությունները, բոլոր տեսակի արտադրական ու ֆինանսական ձեռնարկությունները, հասարակական տրանսպորտի համակարգը, գիտության, կրթության ու առողջապահության ողջ համակարգը, զինված ուժերը, ազգային անվտանգության համակարգը, օրինապահ համակարգը, դատաիրավական ողջ համակարգը, զանգվածային լրատվության բոլոր միջոցները, առաջին հերթին՝ հեռուստատեսությունը, արվեստի բոլոր բնագավառները, հատկապես՝ թատրոնը, կինոն, կերպարվեստը և այլն, բացի քաղաքացիների անձնական սեփականությունից՝ կացարանից, կահույքից, փոխադրամիջոցներից, գործիքներից ու անհատական, նաև՝ ընտանեկան ձեռնարկություններից։

Միայն ազգին նվիրված նահապետը՝ երկրի հիմնական պատասխանատուն, կկարողանա արդյունավետ կերպով օգտագործել երկրի ռեսուրսները։ Ներկայիս լիբերալ կապիտալիստական տնտեսավարման պայմաններում ամեն անհատ փողատեր, առաջնորդվելով իր եսասիրական մղումներով, կարող է ըստ իր քմահաճույքի վատնել իր տնօրինության տակ գտնվող երկրի ռեսուրսները կամ ներդրումներ կատարել օտար երկրներում։ Համայն Հայոց

Արքան, կենտրոնացնելով երկրի բոլոր ռեսուրսները, արագորեն կհզորացնի ռազմական ու կենսական նշանակության ոլորտները, հետո, հեռահար ներդրումներ կատարելով երկրի տնտեսության ու անվտանգության բնագավառներում, կամրապնդի ազգի բարօրությունը: Արքայական համակարգում աշխատողները կվարձատրվեն՝ ըստ իրենց ներդրման: Ողջ եկամուտը կմտնի ազգային գանձարան:

Ներկա օրենսդրության ու օրինապահ մարմինների առկայությունը կպահպանվի որոշ բարեփոխումներով, քանի որ դրա անհրաժեշտությունը հակադարձ համեմատական է ժողովրդի բարոյահոգևոր մակարդակին: Որքան ցածր է ժողովրդի բարոյահոգևոր մակարդակը, այնքան բարձր է օրենսդրության խստությունն ու օրինապահ մարմինների անհրաժեշտությունը: Որքան բարձր է ժողովրդի բարոյահոգևոր մակարդակը, այնքան ցածր է օրենսդրության խստությունն ու օրինապահ մարմինների անհրաժեշտությունը: Ամենաբարձր բարոյահոգևոր մակարդակի ազգը կարիք չունի որևէ օրենսդրության ու օրինապահ մարմինների համակարգի:

Մեր երկրի հզորացումն ու հատկապես երկրում արդարության թագավորությունը հետ կբերի բոլոր վտարանդի հայերին: Մեր երկրի օրինակով իրենց երկրներում նմանատիպ բարեփոխումներ կկատարեն մեր հարևան ազգերն ու ի վերջո՝ մոլորակի բոլոր ազգերն ու ժողովուրդները: Բարոյահոգևոր բարձրագույն արժեքների տեր ազգերի միջև կայուն խաղաղություն կհաստատվի: Այս ճանապարհով միայն հնարավոր կդառնա լուծել մեր ամբողջական հայրենիքի վերականգնման ու վտարանդի հայության վերադարձի գերխնդիրը:

©Դավիթ Միրզոյան, Դեկտեմբեր 2011
www.davitmirzoyan.com

ՄՇԱԿՈՒՅԹ - ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Նախկինում մարդիկ ապրում էին առանց որևէ սահմանադրության ու օրենքների համակարգի, նաև՝ առանց օրինապահ մարմինների։ Հասարակության ներսում մարդկանց փոխհարաբերությունները կարգավորում էր մշակույթը։ Մշակույթը ֆոլկլորը չէ։ Մշակույթն այն զսպաշապիկն է, այն ներքին մեխանիզմը՝ չգրված օրենքների տեսքով, որ կարգավորում է միջանձնային փոխհարաբերությունները՝ առանց որևէ օրինապահ մարմինների օժանդակության։

Մշակույթը բխում է ուսմունքից։ Ուսմունքը փոխանցվել է սերնդե սերունդ։ Ազգի նահապետները եղել են ազգային ուսմունքի պահապանները և ուսուցիչները՝ ազգի գերագույն նահապետի գլխավորությամբ։ Հետագայում, երբ առաջացավ առանձին «հոգևոր» դաս, այն սկսեց վիճարկել ուսմունքի պահապանի և ուսուցչի մենաշնորհը, ազգի առաջնորդին՝ գերագույն նահապետին, վերապահելով միայն ռազմական ու տնտեսական գործառույթներ։

Երբ ոմանք պնդում են, թե մենք՝ հայերս, փչանալ սկսեցինք մեր պետականության կորստի հետևանքով, ապա ճշմարիտ են ասում այնքանով, որ գլխավորապես պետությունն է՝ ազգի գերագույն նահապետի գլխավորությամբ, ազգային ուսմունքի պահապանը և ուսուցիչը։ Բայց պետականության բացակայության դեպքում հոգևոր դասն ամբողջովին իր վրա է վերցնում ազգային ուսմունքի պահապանի և ուսուցչի դերը (օրինակ՝ հրեաների դեպքը, որոնք երկու հազարամյակ շարունակ կարողացան պահպանել իրենց մշակույթն ու խուսափել ուծացումից)։

Համուրաբի օրենքների համակարգն առաջին փորձն էր մշակույթը փոխարինել օրենսդրությամբ։ Ինչո՞ւ։ Որովհետև ժողովուրդն արդեն կորցրել էր հիմնարար ուսմունքն ու այդ ուսմունքի հիման վրա առաջացած մշակույթը։ Մարդիկ փչացել էին, հանցագործությունն էլ՝ բնականաբար շատացել։ Բայց օրենքների հետ միասին անհրաժեշտ էին օրինապահ մարմիններ, որովհետև արդեն չկար մշակույթ՝

միջանձնային հարաբերությունները կարգավորող զսպաշապիկը: Համուրաբի օրինակով մշակույթի բացակայության պայմաններում աշխարհի բոլոր իշխանությունները դեռ ապավինում են միևնույն համակարգին:

Ներկայիս անմշակույթ աշխարհում շատ են դեպքերը, երբ որևէ մեկի արարքը կարող է միանգամայն օրենսդրության սահմաններում համարվել, սակայն միևնույն ժամանակ լինել անբարոյական: Խնդիրն այն է, որ օրենքներն երբեմն գրվում են չունենալով կամ չուզենալով հաշվի առնել որևէ բարոյական ուսմունք: Առանց նման ուսմունքի շատ դժվար է գրել օրենքներ ու փակել բոլոր հնարավոր անբարոյական արարքների ճանապարհը:

Մեր ժամանակակից աշխարհի դժբախտությունն այն է, որ բարոյական ուսմունքի ու համապատասխան մշակույթի բացակայության պայմաններում մարդիկ հիմնականում անբարոյական են: Հետևաբար, համատարած անկարգություններից՝ սպանություններից ու կողոպուտներից, խուսափելու համար անհրաժեշտություն կա ունենալ օրենսդրություն՝ զուգակցված օրինապահ մարմինների ու դատաիրավական համակարգի հետ:

©Դավիթ Միրզոյան, Հունվար, 2012
www.davitmirzoyan.com

ՏԵՍԱԿ - ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ - ՈՒՍՄՈՒՆՔ - ՕՐԵՆՔ - ՄՇԱԿՈՒՅԹ

Ամեն տեսակ ունի իր գենետիկ կոդն ու այդ կոդից բխող ուրույն մտածելակերպ: Այդ մտածելակերպից՝ աշխարհընկալում, աշխահճանաչողություն, որը սկզբնական շրջանում ավելի շատ ենթագիտակցական է, զգայական: Աշխարհճանաչողությունը, հետագայում բազմաթիվ ու կրկնական դիտարկումներից և ուսումնասիրություններից հետո, բերում

է համակարգված ուսմունքի՝ գիտության։
Ուսմունքը ներկայացնում ու բացատրում է մակրոկոսմի ու միկրոկոսմի օրինաչափությունները։ Ինչպես ամեն գիտություն, այն՝ ուսմունքը, ունի դրույթներ։ Կան հիմնարար դրույթներ, կան ենթադրույթներ։ Մարդիկ, հատկապես աճող սերունդը, ուսանում է ուսմունքը՝ այն ստեղծած ուսուցիչների մոտ, ուսում առնում ու շարունակում հաղորդել այն հաջորդ սերունդներին։ Ուսմունքը հաճախ բանավոր է փոխանցվել։ Սակայն գրի գյուտից հետո՝ նաև գրավոր։ Բայց, քանի որ բոլորը չէին կարող ուսանել, քանզի ուսուցիչների քանակը սովորաբար սահմանափակ է, ժամանակն ու հնարավորությունները՝ ևս (մարդիկ համարյա միշտ զբաղված են եղել ռազմականով, տնտեսությամբ, և այլն), ապա գրվել են օրենքներ՝ ուսմունքի հիման վրա ձևավորված «կարելի»-ներն ու «չի կարելի»-ները ժողովրդին արագ ու պարզ հասցնելու համար։

Մարդիկ պետք է իմանան որն է լավը, որը՝ վատը, ինչը դատապարտելի, ինչը՝ ոչ, այլապես խոսք չի կարող լինել ազատ ընտրության մասին։ Դատապարտելի նշանակում է պարսավելի, նախատելի, անընդունելի՝ «չի կարելի»։

Ուսմունքի վրա հիմնված օրենքների միջոցով նոր առաջանում է մշակույթը՝ չգրված օրենքների համակարգը, այն ներքին մեխանիզմը, զսպաշապիկը, որ կարգավորում է միջանձնային հարաբերությունները։

Մշակույթն, իհարկե, գրավոր չի լինում։ Բայց օրենքները պետք է գրավոր լինեն։ Ուսմունքն էլ պիտի գրավոր լինի։ Այլապես կարող է կորել։ Մեր դեպքում հենց այդպես էլ եղել է՝ այն կորել է դարերի թոհ ու բոհի մեջ։ Կորել է նաև օրենքների ամբողջական տեքստը։ Մեզ են հասել որոշ պատառիկներ միայն։ Իսկ օրենքների վրա ձևավորված մշակույթը դեռ երկար ժամանակ պահպանվում էր։ Մշակույթը շատ կայուն է ու դժվարությամբ է վերանում։ Բայց, եթե վերացավ, ապա շատ դժվար է վերականգնվում։ Հարկավոր է սկսել նորից՝ օրենքներից, ու այն տարածել ժողովրդի մեջ, զուգահեռաբար մեր ուսմունքը ներ-

կայացնող դասախոսություններ կարդալ կրթության ողջ համակարգում։

Ճիշտ է՝ թունդ Արարչական գենակիրների վրա հեշտությամբ չեն ազդում շրջապատի օտար գաղափարական հոսանքները։ Բայց բոլորը չի, որ թունդ Արարչական գենակիրներ են։ Օրենքների գրավոր տարբերակն անհրաժեշտ է՝ մեր կորած մշակույթը վերականգնելու համար։

©Դավիթ Միրզոյան, Փետրվար, 2012
www.davitmirzoyan.com

ՈՒՍՄՈՒՆՔ - ԿՐՈՆ

Ուսմունքն ու կրոնը միանգամայն տարբեր բաներ են։ Անհրաժեշտ է տարբերել մեկը մյուսից։ Ուսմունքն աշխարհճանաչողություն է, գիտելիքների համակարգ համատիեզերական օրինաչափությունների մասին։ Այլ կերպ ասած՝ ուսմունքը գիտություն է, լույս, անընդհատ պրպտում, նորանոր ճշմարտությունների բացահայտման գործընթաց։

Կրոնը հակառակը՝ քարացած դոգմաների ու մարդու միտքը պարալիզող, նրա վրա իշխելու միտված ծիսակատարությունների համակարգ է, հույսի՝ ցանկալիի անհիմն ակնկալիքի, ու հավատի՝ ոչ լիարժեք գիտելիքի կամ ցանկալիի անորոշ ակնկալիքի խառնափնթոր։ Կրոնը համեմատական խավար է, համարյա՝ տգիտություն։

Բոլոր կրոնների հիմքում որոշակի ուսմունք կա։ Բոլոր կրոններն առաջացել են որևէ ուսմունքի հիման վրա։ Ոչ մի ուսմունք իր նախասկզբնական վիճակով չի պահպանվել։ Բոլորն ի վերջո կրոնների են վերածված։ Կրոնի հետևորդները, մանավանդ՝ մոլեռանդ հավատացյալները, չեն նկատում, որ իրենց պաշտելիները կրոնավորներ չեն եղել, այլ՝ ուսմունքի հիմնադիրներ։ Հատկապես քրիստոնյանե-

ը չեն նկատում, որ Քրիստոսը կրոնավոր չէր, ուսմունքի ուսուցիչ էր, որ նրա պայքարը հենց կրոնավորների դեմ էր, որոնք էլ, ի վերջո, սպանեցին նրան։

Ներկայիս ամեն կրոնամոլ առանց երկմտելու ընդունում ու հնազանդվում է իր կրոնական կառույցի պահանջներին։ Ընդհանրապես բոլորս ենք մոռանում, որ ոչ մի ուսմունք տարածող կրոնավոր չի եղել։

Ճշմարիտ ուսմունքը մեկն է ու համատիեզերական։ Հետևաբար, այն համամարդկային է՝ չնայած բացահայտվում է է որոշակի ազգի կամ անհատի աշխարհճանաչողության շնորհիվ։ Աշխարհճանաչողությունը ներառում է ոչ միայն մակրոկոսմի՝ արտաքին աշխարհի, տիեզերքի հետ միասին, այլ նաև միկրոկոսմի՝ մարդու ներքնաշխարհի ու արժեքների համակարգի, ճանաչողությունը։

Մեր նախնյաց աշխարհճանաչողությունը ներառում էր արևի պաշտամունք՝ մակրոկոսմի շրջանակներում, քանի որ արևը կենտրոնական տեղ ուներ երկնքում։ Իսկ միկրոկոսմի շրջանակներում կար ճշմարտության, արդարության, բարու ու գեղեցիկի պաշտամունք՝ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում» Արարչական դրոսմի գլխավորությամբ։ Բայց, քանի որ ճշմարտությունն ու արդարությունը վերացական հասկացություններ են, ապա պատկերվում էին կամ արևի տեսքով, կամ՝ մարդկային կերպարանքներով, ցուլին՝ սեփական էգոյին, սպանող Միհրի տեսքով, օրինակ։

Զորոաստրը, նաև՝ Քրիստոսը, Միհրի պես ճշմարտության ու արդարության մարմնացումներն են։ Տարբեր ժողովուրդների կրոններում (չմոռանանք, որ ուսմունքները միշտ էլ կրոն դառնալու միտում են ունեցել) առկա են մեր նախնյաց ամենաառաջնային ուսմունքի տարրեր։ Բացառություն չէ նաև Քրիստոնեություն ուսմունքը։ «Գործք Առաքելոց» գրքում կարելի է տեսնել «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում» դրոսմի կիրառման օրի-

նակներ։ Առաջին դարի քրիստոնյա համայնքներն իրավահավասար ու հավասարազոր անհատների եղբայրական համայնքներ էին, որ չկար մարդու կողմից մարդու շահագործում։ Եթե նմանություն եք նկատում «Ոսկի քաղաք»-ի կամ «Ուտոպիա»-ի հետ, ապա դա բնական է։ Ուտոպիստ-սոցիալիստները ճշմարտության ու արդարության գաղափարները վերցրել են միևնույն աղբյուրից՝ Նոր Կտակարանից։ Գաղափարի բոլշևիկյան կամ ավելի ճիշտ՝ ջհուդա-մասոնական, տարբերակն ու կիրառումը՝ սովետական կոմունիզմը, խնդրում եմ, չշփոթել գաղափարի հետ։ Մենք՝ հայերս, մեր շուրջը տիրող թեժ ու պարալիզող մթնոլորտի պատճառով հաճախ անկարող ենք շատ բան տեսնել ու հասկանալ՝ չենք կարողանում տարբերել գաղափարը դրա խեղաթյուրված կիրառումից։

Նույնիսկ Ցեղակրոնությունը՝ առանց ճշմարտության, արդարության, մարդկանց իրավահավասարության ու հավասարազորության արժեքների, թերի ու հետևաբար ոչ մի տեղ չտանող գաղափարախոսություն է։ Ներկայիս հայ «ազգայնականները», հայ կրոնավորների պես, մեր ուսմունքի հիմնարար դրույթը լիովին արհամարհած՝ կենտրոնացել են հիմնականում ազգայնապաշտական գաղափարների վրա, միաժամանակ ամենակարևորն անտեսած, ոմանք՝ միամտաբար, ոմանք էլ՝ դիտավորյալ կերպով, երկրի ողջ հարստությունը կողոպտելու ու իրենց հանցավոր գործունեությունից ժողովրդի ուշադրությունը շեղելու համար։

Քրիստոնեություն ուսմունքն ամբողջական չէ, չնայած՝ պարունակում է մեր նախնյաց Արարչական ուսմունքի ամենագլխավոր դրույթը՝ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում»։ Այն նաև իր մեջ հակասական թվացող դրույթներ ունի։ Բայց դրանք հիմնականում պատվիրաններ չեն, այլ՝ իմաստնություններ ու խորհուրդներ։ Վարկած կա, որ Քրիստոսն ուսանել է Հայաստանում, Մոկաց աշխարհում, ուր դեռ պահպանվել էր մեր վաղնջական Արարչական ուսմունքը։ Որոշ ուսումնասիրողներ

պնդում են, որ Քրիստոսի նախահայրերի որոշ մասը զուտ հայկական անուններ են ունեցել։ Քրիստոսն ինքը, ջհուդերեն չի խոսել։ Խոսել է միայն արամեերեն, որն արխայիկ հայերենից սերված լեզու է։ Ինչևէ... Ամենակարևորն ուսմունքի էությունն է։ Դժբախտությունն այն է, որ ուսմունքի բուն էությունն արհամարհելով, խեղաթյուրելով նրա ենթադրույթներն ու իմաստնությունները, նաև՝ հետագայում հավելելով այլ դրույթներ ու մեկնաբանություններ, իհարկե՝ նաև անկապ ծիսակատարություններ և այլն, ուսմունքն, ի վերջո, կրոն են դարձրել։

Չորրորդ դարում Քրիստոնեությունն կրոնի մուտքը վերացրեց բոլոր հայ վարդապետներին՝ մեր նախնյաց ուսմունքի ուսուցիչներին, ոչնչացրեց մեր նախնյաց Արարչական ուսմունքը պարունակող բոլոր գրավոր աղբյուրները, ընդհուպ մինչև այբուբենը։ Իսկ դրանից հետո արդեն ժամանակի հարց էր։ Մեզանում դարերով արմատացած մշակույթն աստիճանաբար մարեց օտար հոսանքների ազդեցության տակ ու հասանք ներկա ճգնաժամին, երբ ո՛չ մեր ազգային ուսմունքը կա, ո՛չ էլ մշակույթը գոյություն ունի։ Թունդ Արարչական գենակիրները դեռ դիմանում են, նույնիսկ փորձեր են անում վերականգնել մեր ազգային ուսմունքը, բայց ընդհանուր առմամբ ժողովրդի մեծամասնությունը և՛ դրսում, և՛ ներսում, ուծացել ու դեռ շարունակում է ուծանալ համատարած գլոբալիզացիայի՝ դեմոկրատիայի, կապիտալիզմի, լիբերալիզմի ու սրանց հետևող անբարոյականության ու այլասերվածության ճնշման տակ։

Գլոբալիզացիան թարգմանաբար հնչում է համամարդկայնացում։ Սակայն անհրաժեշտ է տարբերել գլոբալիզացիան համամարդկայնացումից։ Գլոբալիզացիան ենթադրում է արևմտյան աշխարհի ներկայիս «արժեքների»՝ լիբերալիզմ, կապիտալիզմ, դեմոկրատիա և այլն, ու արևմտյան աշխարհի ընդհանուր ճգնաժամային վիճակի տարածում ողջ մոլորակի վրա։ Սա կործանում տանող ուղի է՝ արևմտյան «արժեքների», իրականում՝ հակաարժեքների, քայքայիչ էության պատճառով։

Բայց, եթե վերականգնվի մեր նախնյաց Արարչական ուսմունքն ու մշակույթը, սկզբում տանը՝ ներսում՝ Հայաստանում, իսկ հետո նաև՝ ողջ աշխարհում, քանզի մեր ազգային արժեքները համամարդկային արժեքներ են, ապա կունենանք ճիշտ համամարդկայնացում ու կվերականգնվի հավասարակշռությունն ու խաղաղությունը մոլորակի վրա։ Մեր նախնիներն, ի դեպ, հենց դա էլ արել են հազարամյակներ շարունակ՝ նավարկել են համաշխարհային օվկիանոսներն ու կրթել աշխարհի բոլոր ժողովուրդներին։

©Դավիթ Միրզոյան, Մարտ, 2012
www.davitmirzoyan.com

ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

Ընդհարման ճշմարիտ էությունը հասկանալու համար հարկ կլինի մի փոքր հետ գնալ ժամանակի մեջ։ Վաղնջական ժամանակներից սկսած մարդիկ ապրում էին՝ ազատորեն օգտվելով մայր հողի բարիքներից։ Նույնիսկ «Ծննդոց»-ում ասվում է, որ առաջին մարդկանց արարելուց հետո, Արարիչը նրանց տեղավորեց իր հիմնած պարտեզում ու պատվիրեց ապրել՝ ազատորեն օգտվելով պարտեզի բարիքներից։

Թե կոնկրետ ինչ պիտի անեին մարդիկ, շատ պարզ չի երևում «Բազմացեք ու լցրեք աշխարհը» ամենաառաջին պատվիրանից։ Սակայն հաշվի առնելով, որ պարտեզը հիմնել էր հենց ինքը՝ Արարիչը, մարդկանց որևէ գործ չթողնելով՝ բացի այգին խնամելուց, նաև, մի փոքր մտորելով, կարելի է հանգել այն եզրակացության, որ մարդիկ պիտի անեին այն, ինչ ինքն՝ Արարիչն էր արել. հիմնել պարտեզ, սերունդ տալ, կրթել նրանց, ամուսնացնել ու տեղավորել նորաստեղծ պարտեզում՝ պատվիրելով նրանց անել նույնը։ Եվ այսպես շարունակ, մինչև լիովին կատարվեր Արարչի առաջին պատվիրանը՝ բազմանալ ու լցնել

աշխարհը։
Լցնել ասելով սովորաբար հասկացվում է միայն մարդկանց քանակով։ Սակայն հաշվի առնելով, որ Արարիչը ստեղծել էր ոչ միայն մարդկանց, այլ նաև նախնական պարտեզի բոլոր բնակիչներին՝ ընտանի կենդանիներին ու մշակովի բույսերի բոլոր տեսակները, ապա տրամաբանական կլինի ենթադրել, որ հենց դրանցով էլ պիտի լցվեր աշխարհը։ Այսինքն՝ մարդուն պատվիրված էր ոչ միայն բազմանալ, այլ նաև բազմացնել Արարչի ձեռքի բոլոր գործերն ու դրանցով լցնել աշխարհը՝ այն ի վերջո վերածելով մի մեծ դրախտային պարտեզի։

Ուրեմն առաջին պատվիրանի կատարումը պիտի բերեր նախնական պարտեզի սահմանների ընդարձակմանը, մինչև ողջ մոլորակը վերածվեր մի մեծ պարտեզի, ուր մարդիկ կապրեին ազատ ու երջանիկ։ Արարչի այս մտահղացումն, ինչպես գիտենք, չիրականացավ։ Մարդիկ անհնազանդ գտնվեցին, չավարտեցին իրենց կրթությունը, չստացան անհրաժեշտ գիտելիքի ողջ պաշարը, վռնդվեցին պարտեզից՝ հայտնվելով տափաստաններում, փուշ ու տատասկի մեջ, հետևաբար՝ ստիպված լինելով իրենց ճակատի քրտինքով ձեռք բերել այն, ինչ առանց չարչարվելու ունեին պարտեզում։

Մարդիկ ստիպված էին սնունդ հայթայթել, մաքառելով ու մեծ տառապանքների գնով կառուցել իրենց կացարանն ու պարտեզ հիմնել։ Բայց նրանք դեռ ազատորեն կարող էին օգտվել մայր հողի բարիքներից։ Ստիպված չէին վճարել շինանյութի, սննդի ու հագուստի համար։ Թեկուզև չկար Արարչի ուսուցանող ներկայությունն ու դրախտի նախկին ճոխությունը, բայց դեռ կար հիմնական պայմանը՝ ազատորեն՝ անվճար, վերցնել մայր բնությունից այն ամենն ինչ անհրաժեշտ էր մարդու կենսագործունեության համար, թեկուզև քրտնաջան աշխատանքով։

Բայց այս ամենն էլ էր դատապարտված։ Մարդկանցից մեկը, իր նմանների ոհմակ հավաքելով շուրջն ու այդպիսով հզորանալով, հայտարարեց, որ սարերն ու ձորերը,

ծառերն ու թփերը, անտառներն ու մարգագետինները, ողջ մայր բնությունն իր մասնավոր սեփականությունն է ու, որ մնացածն իրավունք չունեն առանց վարձատրության օգտըվել «իր» սեփականությունից։ Փաստորեն այդ մարդը՝ Բելը, դարձավ առաջին օլիգարխը, ու մեր նախահոր՝ Հայկի, կռիվը հենց օլիգարխիայի դեմ էր։ Այլ կերպ ասած՝ Բելն առաջին ստրկատերն էր, առաջին ֆեոդալը կամ կապիտալիստը, իսկ մեր նախահայր Հայկը՝ առաջին ազատամարտիկը։

Հետևաբար, Հայկի ու Բելի կռվի պատճառն այն չէր, որ Բելն ուզում էր, որ իրեն երկրպագեն՝ որպես աստված կամ կիսաստված, Հայկն էլ՝ համառորեն կողի էր ընկել։ Իր կյանքը դեռ ոչինչ, բայց չէ՞ որ Հայկ Նահապետը վըտանգում էր նաև իր մերձավորների կյանքը։ Արդյո՞ք Հայկի մերձավորները կվտանգեին իրենց կյանքը միայն այն պատճառով, որ իրենց նահապետը կողի էր ընկել ու իր արժանապատվությունից ցածր էր համարում երկըրպագել Բելին։ Բայց գուցե բոլորն էլ Հայկի պես համա՞ռ էին... Մի՞թե նրանցից ոչ մեկը չառաջարկեց առերևույթ երկրպագության գնալ ու պրծնել գլխացավից։ Չէ՜, այստեղ խնդիրը հեշտերից չէր։ Ձևական երկրպագությամբ չէին պրծնի։

Բելը զորք էր հավաքել ու հզորացել, բոլոր տարածքներն իրենն էր հայտարարել ու արգելում էր մյուս բոլորին ազատորեն՝ անվճար, օգտվել «իր» հողի բարիքներից կամ վարձատրություն էր պահանջում օգտվելու դիմաց՝ աշխատանքի կամ դրամական փոխհատուցման ձևով։ Հիմնականում՝ աշխատանքի։ Բելը նպատակ ուներ մարդկանց մի մասին աշխատեցնել շինարարության, մի մասին՝ սննդի արտադրության, իսկ մյուս մասին՝ կենսական անհրաժեշտության այլ պարագաների, հատկապես զենքի ու զինամթերքի արտադրության մեջ, նպատակ ունենալով ավելի հզորացնել իր ոհմակն ու ընդլայնել իր տիրապետությունը։

Գլոբալիզացիայի նախահայրը հենց նա էր։ Մեր նախա-

հայր Հայկն էլ հերոսաբար կասեցրեց առաջին գլոբալիզացիայի փորձը: Բայց, ավաղ, ոչ մի հաղթանակ վերջնական չէ: Չարի ուժերն անընդհատ պատերազմի են ելել: Մեր՝ հայերիս, պասիվությունը բերեց չարի ուժերի տարածմանն ու հզորացմանը: Պատմությունն անընդհատ կրկնվում է:

Ներկայումս գլոԲԵԼիզացիայի ոհմակներն իրենց իշխանության տակ են առել աշխարհի բոլոր ժողովուրդներին ու դեռ շարունակում են սեղմել օղակը: Ո՞վ կարող է բռնել նրանց ձեռքն ու հետ շրջել այդ չարաբաստիկ գործընթացի անիվը: Էլի մենք, երևի...

©Դավիթ Միրզոյան, Ապրիլ, 2012
www.davitmirzoyan.com

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հնում մարդու աշխարհճանաչողությունը խիստ սահմանափակ էր: Նրա համար շրջապատն անհուն տիեզերք էր, ինքն էլ՝ խղճուկ մի կետ: Մարդը մաքառելով էր քարշ տալիս իր գոյությունը՝ ճնշված ու վախեցած: Փորձի, գիտելիքների, նաև ինքնաճանաչողության աճին զուգընթաց, աճեց մարդու գոռոզությունը: Ու սկսվեց «քաղաքակրթությունը»: Ներազգային, նաև ազգամիջյան գզվռտոցն այլ պատճառներ ևս ունի, բայց գոռոզությունը՝ սեփական անձն ամեն գնով մյուսներից վեր դասելու մղումը, առաջինն է: Այն դժբախտաբար դեռ ամենատարածվածն է մեզանում՝ ամենաբանական ու բազմատաղանդ մարդկանց շրջանում: Ու, ցավոք, բերում է ներազգային թշնամանքի, հետևաբար՝ պառակտման ու թուլացման:

Բայց միշտ չի, որ այսպիսին ենք եղել: Երկար հազարամյակներ շարունակ ունեցել ենք Արարչական մշակույթ, եղել ենք օրինակելի ազգ մյուսների համար: Նույնիսկ սեփա-

կան կյանքի գնով պատերազմի ենք ելել՝ ազատելու մեր հարևան ժողովուրդներին իրենց բռնակալներից։ Երբեք չենք մտածել ստրկացնել նրանց։ Ազատագրելուց հետո արդար կարգ ու կանոն ենք հաստատել ու վերադարձել։ Ստրկությունն ու ճորտատիրությունն անընդունելի էին մեզ համար։ Բայց ժամանակները փոխվեցին, որդեգրեցինք միայն ինքնապաշտպանության մարտավարություն։ Բարի դրացիական հարաբերությունների մեջ մտանք մեր հարևանների բռնակալների հետ, թույլ տվեցինք, որ ներս սողոսկեն նրանց բարքերն ու արժեքները, որոնք էլ քայքայեցին ու, ի վերջո, խպառ ոչնչացրին մեր մշակույթը։ Փաստորեն, մեր ինքնապաշտպանության անցնելը կործանարար եղավ մեզ համար։ Մեր հարևանները դեռ շատ լավ գիտեն, որ ամենալավ պաշտպանությունը հարձակումն է ու դեռ շարունակում են նույն մարտավարությամբ։ Շրջապատել են մեզ ու շարունակում են խեղդել։ Մենք էլ, կիսախեղդ վիճակում, կամ իրար ենք ուտում կամ լավագույն դեպքում հեռանում իրարից, հետո կով գնում ու անհետանում։

Եթե այսպես շարունակվի, գուցե այլևս հայ չմնա ու կըտրվի այն հույսը, թե կառաջանա մի ուժ մոլորակի վրա, ազնվագույն մշակույթ, հետևաբար՝ երկրագնդի վրա կայուն խաղաղություն հաստատելու համար։ Ուրեմն պետք է կասեցնել մեր մշակույթի քայքայման գործընթացը։ Մեր դժբախտությունը մեր կառավարողները չեն, ոչ էլ՝ նրանց դրսի տերերը, այլ մեզանում մշակույթի բացակայությունը։ Միայն անմշակույթ ժողովրդի միջից են դուրս գալիս գոռոզ ու ամբարտավան, հաճախ էլ տգետ ու հանցագործ իշխանավորներ, նաև՝ իշխանության ձգտող լայն զանգվածներ ու նրանց ամեն գնով սատարողներ։

Մեր մշակույթի վերականգնումն ու սերմանումը կբերի կործանարար ուղուց աստիճանական շրջադարձի։ Ժողովուրդը կճանաչի իր գենետիկ էությունից բխող ուժումքն ու մշակույթը և կսկսի աստիճանաբար ինքնաշակվել, կբարելավվեն միջանձնային հարաբերությունները։ Հետևաբար կսկսի նվազել արտագաղթը։ Մշակույթի արմատավորումը

կառավարման լծակների մոտ կբերի ազնիվ մտավորականների։ Դրանից հետո գուցեև հնարավոր դառնա թագավորության վերականգնումն ու երկրի հզորացումը։

Ավելի կարճ տարբերակ էլ կա, բայց անկանխատեսելի հետևանքներով լի։ Սակայն երկու դեպքում էլ մշակույթի վերականգնումն ու ամեն մեկի սեղանին հասցնելն անհրաժեշտություն է։ Ու այդ գործը միայն ազնիվ ու բանիմաց մտավորականները կարող են անել։

©Դավիթ Միրզոյան, Ապրիլ, 2012
www.davitmirzoyan.com

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԿԱՆ

«Ձեզ ինչ է պետք երջանիկ լինելու համար» հարցին ճնշող մեծամասնությունը կպատասխանեն՝ փող ու ինչքան հնարավոր է շատ։ Ճիշտ է՝ մեծամասնության կարծիքը միշտ էլ սխալ է ներկա հակամշակույթի ու համատարած տգիտության պայմաններում, բայց այստեղ պատասխանը մշակույթի հետ շատ կապ չունի։ Այն ավելի շատ կապ ունի մարդու ինքնապահպանման բնազդի հետ։ Հետևաբար պատասխանը ճիշտ է։

Իսկ, եթե ավելի մանրամասն, ապա նկատենք, որ բնության մեջ ոչ մի արարած ստիպված չէ աշխատել իր անհրաժեշտի համար։ Ամեն արարած բնությունից ազատորեն՝ անվճար, վերցնում է այն ամենն, ինչ անհրաժեշտ է։ Ոչ ավել, բայց նաև ոչ պակաս։ Մարդն է միակ արարածը, որ անհրաժեշտից ավել նյութական բարիքներ կուտակելու ու իր նմանների վրա իշխելու անսահման մարմաջ ունի։ Մարդն է նաև այն արարածը, որ այդ ամենի համար իր նմաններին ստրկացրեց «Ով աշխատի, նա կուտի» հնարովի պոստուլատի օգնությամբ։ Նույնիսկ աշխարհի ամենա-

պայծառ մտածողները չեն կարողացել դուրս գալ այս ստրկացնող պոստուլատի տակից։

Ներկա կապիտալիստական աշխարհում մարդիկ կրկնակի ստրկության մեջ են, որովհետև աշխատում են և՛ գործատերերի, և՛ իրենց անհրաժեշտի համար։ Ցավոք, մեծամասնությունն էլ տեր դառնալու ու մյուսներին ստրկացնելու ձգտում ունի։ Մարդ չի կարող երջանիկ լինել, երբ ստրուկ է՝ ստիպված է աշխատել իր անհրաժեշտի համար։

Ճիշտ է՝ երջանկության բաղադրիչներից են նաև անշահախնդիր փոխադարձ սերն ու համատիեզերական օրինաչափությունների խորը իմացությունը։ Սակայն ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսն էապես չեն ազդում մարդու վրա, երբ նա ստիպված է քրտնաջան աշխատել իր անհրաժեշտի համար, միաժամանակ կքալով դրա ձեռքբերման, նաև՝ իրավական, առողջական, հարկային, վարկային և այլ խնդիրների ծանր բեռի տակ։

©Դավիթ Միրզոյան, Մայիս, 2012
www.davitmirzoyan.com

ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏԸ

Մեզանում համատարած տգիտության, ընդհանրապես տըգիտության պաշտամունքի խնդիրը կա ու դրա պատճառները շատ խորն են։ Պրոբլեմն արմատախիլ անելու համար արմատին է պետք հասնել։ Այն ավելի հեռու է գնում, քան սովետական տարիները։

Ամեն ինչ սկսվեց, երբ Քրիստոնեություն կրոնի մուտքը ոչնչացրեց մեր ուսմունքը, ամեն գիտություն, գիր ու գրականություն։ Կրոնավորները գիտավորյալ կերպով տգիտության մատնեցին ժողովրդին։ Հողեր սեփականացնելով՝ դարձան ֆեոդալներ։ Սկսեցին ճորտի տեղ բանեցնել երբեմնի ազատ մարդկանց ու թշնամություն մտավ ազգի

մեջ։ Բայց ամենակարևորը, որ խարդավանքների դիմելով՝ սպանեցին մեր արքաներին։ Երբեմն էլ օտարների ռազմական ուժը Հայաստան հրավիրելով՝ վերջնականապես թուլացրեցին երկիրը։ Հայաստանի բնակչությունը, հայտնվելով տգիտության մեջ ու անգրագիտ, սկսեց պառակտվել ու թուլանալ։ Թուլանալու պատճառով սկսեցինք տարածքներ կորցնել։ Տարածքներ կորցնելուց հետո՝ խըտանալ Հայաստանի այլ շրջաններում։ Բնակչության խըտացմանը հետևեց միմյանցից պատառ խլելու մշակույթն ու համատարած ներազգային գզվռտոցը։ Ներազգային գզվռտոցն ավելի թուլացրեց երկիրն ու, որպես հետևանք, ավելի շատ տարածքներ սկսեցինք կորցնել։ Ավելի շատ տարածքներ կորցնելով՝ ներազգային գզվռտոցն ավելի սրվեց ու երկիրն ավելի թուլացավ։ Եվ այդպես շարունակ, Մինչև հասանք ներկա իրավիճակին։

Հիմա ներազգային լարվածությունը մեզանում ծայրաստիճան սրված է, որն ավելի շատ կապ ունի մեր սահմանափակ տարածքի հետ։ Պատկերացրեք մի կաթսայի մեջ փակված առնետների վիճակը։ Կամ պիտի դուրս գան փախչեն, կամ պիտի իրար միս ուտեն՝ մի կտոր հացի համար։ Այստեղից էլ՝ գզվռտոցը։

Բայց ինչո՞ւ են տգետ կամ ինչո՞ւ են տգետ ձևանում։ Որովհետև տգիտությունը = գաղանություն = անողոքություն = ուժ։ Իսկ ներազգային գզվռտոցի պայմաններում մի կտոր հացի տեր դառնալու համար հարկավոր է ուժեղ լինել կամ, որ նույնն է՝ անողոք = գաղան = տգետ։

Քաղաքակիրթ՝ բարոյահոգևոր բարձր արժեքներ կրող, մարդը գաղան չի կարող լինել, հեևաբար՝ նաև ուժեղ։ Սա է պատճառը, որ քաղաքակիրթ մարդուն մեզանում բանի տեղ դնող չկա։ Քաղաքակիրթ մարդն իրենից վտանգ չի ներկայացնում։ Իսկ գաղանի կամ տգետի հետ հաշվի են նստում ու, որպես կանոն, անում ամեն ինչ՝ նրան գոհացնելու համար։ Բայց սա ոչ միայն, որովհետև գաղանն ուժեղ է, այլ նաև, որովհետև իր տգիտության պատճառով անկարող է որևէ բան հասկանալ։ Նկատած կլինեք, որ

հաճախ այդ տգետները կամ տգետ ձևացողները, չբավարարվելով տգիտության զրահով, հաճախ նաև գիժ են ձևանում, խելագար, կամ՝ անհասկացող։ Սա լրացուցիչ զրահի շերտ է հավելում արդեն իսկ առկա տգիտության զրահին։ Խելագար ձևանալով՝ տգետները կամ տգետ ձևացողներն ենթագիտակցորեն իրենք իրենց ավելի մարտունակ են դարձնում համատարած գզվռտոցի պայմաններում։ Խելագար տգետն ավելի վտանգավոր է, քանի որ, ի տարբերություն սովորական տգետի, կարող է նախահարձակ լինել կամ անկանխատեսելի հակահարված տալ։ Որքան էլ տգետ, բայց և այնպես ենթագիտակցորեն հասկանում են, որ ամենալավ պաշտպանությունը հարձակումն է։ Իսկ խելագարներն առանց որևէ պատճառի կարող են հարձակվել։

Ցանկացած գզվռտոց հսկայական ներուժ է պահանջում՝ անկախ տգիտության աստիճանից։ Մեր տգետներն էլ դուրս կգային փակ կաթսայից ու կփախչեին արտասահման. ումի՞ց են պակաս, որ... Բայց վախենում են չկարողանալ ավելիին հասնել դրսում, նաև, որովհետև ալարում են ամեն ինչ զրոյից սկսել։ Հետո դրսում իրենց տգիտությունն ու խելագարությունը գուցե չանցնի։

Քանի որ մեզանում տարբեր մակնիշի տգետները շատ են ու գնալով շատանում են, արդեն ստիպված են միմյանցից պատառ խլել (քաղաքակիրթ մարդիկ գզվռտոցին չեն մասնակցում. շատերն ապրում են դրսից օգնության հաշվին)։ Իսկ ներառնետային գզվռտոցում որևէ պատառի տիրանալու համար հարկավոր է դիմանալ անողոք մրցակցությանը՝ հակառակորդից ավելի ուժեղ, ավելի տգետ լինելով։ Իսկ, երբ տգիտության ու խելագարության բոլոր սահմաններն արդեն նվաճված են, մնում է ոհմակներ կազմել։ Տգետների ոհմակն ավելի ուժեղ է որևէ անհատ տգետից։ Պայքարն արդեն ծավալվում է տգետների ոհմակների միջև։ Անհատ տգետն իրենից արդեն որևէ ուժ չի ներկայացնում։ Խմբակային տգիտության դաշտում մրցակցությունը բերում է տգիտության նորանոր հորիզոնների նվաճման, ու «տգիտության կուլտը» ստանում է համազգային բնույթ։

Իսկ նորելուկ տգետները միանում են տգետների այն ոհմակին, որն ավելի տգետ է ու մեծաքանակ: Կուսակցությունները մեզանում ոհմակներ են ու հետապնդում են նեղ խմբակային շահեր: Ոհմակներ կային նաև սովետական տարիներին, բայց դրանց մեծ մասը փողոցի կամ, լավագույն դեպքում, թաղի մակարդակից չէին անցնում: Հիմա այդ թաղային ոհմակները հասել են իշխանության գլուխ: Մարդիկ էլ ո՛չ իշխանության գլուխ անցած ոհմակներին են վստահում, ո՛չ էլ իշխանության ձգտող ոհմակներին:

Դրությունը կսկսի փոխվել միայն, երբ սկսենք հասկանալ երևույթի բուն պատճառները:

©Դավիթ Միրզոյան, Մայիս, 2012
www.davitmirzoyan.com

ՆԱԽ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՀԱՄԱԽՄԲՎԵՆ

Հայ մտավորականների կողմից անիմաստ է ժողովրդին համախմբման կոչեր անել՝ առանց օրինակ ծառայելու, կամ գոնե որևէ իրական փոփոխություն առաջարկելու տնտեսավարման ու կառավարման համակարգերում: Ժողովրդին չես խաբի: Ժողովուրդը հասկանում է, որ իշխանափոխության կոչերն իրականում մարդափոխության կոչեր են, նաև, որ մարդափոխությամբ ոչ մի հարց հիմնարար լուծում չի կարող ստանալ:

Ժողովրդին հարգելով ու պատասխանատվությունը նրա վրայից չվերցնելով՝ հարկավոր է նրան ողջ ճշմարտությունն ասել: Այսինքն, որ մենք՝ հայերս, սկսեցինք փչանալ ոչ թե պետականության կորստի պատճառով, այլ՝ արժեհամակարգի կորստի: Այդ գործընթացը սկսվեց, երբ հելլենիզմն ու հետագայում հունա-հռոմեական մշակույթը մտան ու բացիլի պես սկսեցին քայքայել մեր մշակույթը:

Երբ Քրիստոսն ասում էր «հեթանոսներ», նա ի նկատի ուներ հունա-հռոմեական մշակույթի կրողներին։ Ի դեպ, Նա հենց մեր Արարչական ուսմունքն էր տարածում։ Մի կողմ թողնենք Հին Կտակարանը։ Այն իրականում գրքերի հավաքածու է շումերական, իրականում՝ հին Արիական ավանդույթների, հրեաների պատմության ու որոշ մարգարեների քարոզների մի հավաքածու։ Իսկ Նոր Կտակարանի ուսմունքը՝ Քրիստոնեություն ուսմունքը, հենց մեր Արարչական ուսմունքի մի մասն է։ Հրեաներն այն, իհարկե, չեն ընդունում, որովհետև իրենցը չի։ Այն ավելի շատ մերն է ու ըստ էության համամարդկային է։ Մենք ոչ թե պիտի քարկոծենք այդ ուսմունքը, այն համարելով ապազգային, այլ հպարտանանք, որ մեր ազգայինը լինելով հանդերձ, այն համամարդկային է՝ իր արժեհամակարգով։

Իսկ ինչ վերաբերում է Քրիստոնեություն կրոնին, ապա այդպիսի բան ընդհանրապես նախատեսված չէր Քրիստոսի կողմից։ Ոչ՛ եկեղեցի պիտի լիներ, ոչ՛ էլ՝ եկեղեցական։ Քրիստոսը կրոն ստեղծելու ցուցումներ չի տվել։ Ընդհանրապես, բոլոր մարգարեներն ուսմունք են տարածել։ Ոչ մի մարգարե կրոն ստեղծելու ու եկեղեցի կառուցելու միտումներ չի ունեցել։

Քրիստոնեություն ուսմունքն ամբողջական չէ, սակայն ունի մեր Արարչական ուսմունքի հիմնական դրույթներից մեկը՝ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում»։ Այս դրույթի շուրջը կարելի է վերակառուցել մեր արժեհամակարգը՝ «Արարչական օրենքներ»-ի տեսքով, անպայման գրավոր ու դնել ամեն հայի սեղանին։ Առանց ուսմունքի, առանց չափորոշիչ ունենալու՝ ոչ մի հեղափոխություն չի կարելի ակնկալել։ Իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է։ Այն սկսվում է ուսմունքից։ Ոչ մի հռետորական տաղանդի դրսևորում, կամ թատերական ներկայացում ժողովրդին տեղից չի շարժի։ Ազգայնամոլական կամ հեթանոս ցեղակրոնական շարժումները բազում հետևորդներ չունեն, որովհետև կամ թատերական ներկայացումներ են կամ՝ դատարկ ազգայ-

նական կոչեր՝ առանց որևէ ուսմունքի։ Ուսմունքը դատարկ հայրենասիրությունը չէ։ Երբ երկրի ողջ հարստությունը մի քանիսի ձեռքում է՝ բոլոր իրավունքների հետ միասին, ապա մյուսները զենք չեն վերցնի՝ այդ ամենը պաշտպանելու համար։ «Գիքորներ»-ը «Բազազ Արտեմ»-ների համար կամավոր կռիվ չեն գնա։ Ժողովրդին պետք է առաջարկել տնտեսության տոտալ ազգայնացում, ու, որպես անցումային փուլ՝ միապետության վերականգնում՝ առանց կուսակցությունների ու արհմիությունների։

Բայց ամենակարևորը՝ ոչ մի կատարյալ տնտեսավարման կամ կառավարման համակարգ օգուտ չունի անբարոյական ժողովրդի համար։ Անբարոյական ժողովրդի միջից միայն անբարոյական ղեկավարներ են դուրս գալու։ Հարկավոր է ժողովրդին վերափոխել մեր նախնյաց Արարչական, առաքինի ուսմունքով։ Համախմբվելու համար ընդհանուր դիրքորոշում է պետք։ Ու այդ դիրքորոշումն առաջին հերթին մտավորականները պիտի ձևավորեն ու համախմբվեն։ Առանց մտավորականության համախմբման մեկ գաղափարի կամ դիրքորոշման շուրջը, չկա ժողովրդի համախմբում։

©Դավիթ Միրզոյան, Հունիս, 2012
www.davitmirzoyan.com

ԲԱՑ ՆԱՄԱԿ/ԴԻՄՈՒՄ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Մտավորականն իր ազգի ճակատագրով լրջորեն մտահոգված անհատն է՝ անկախ ճանաչումից ու մասնագիտությունից։ Հայ մտավորական է նա, ով ոչ միայն մտահոգված է իր ազգի ճակատագրով, այլ նաև պատրաստ է ինքնազոհաբերությունների՝ իր ազգի ապագայի համար։

Մտավորականությունն ազգային ուսմունքի շուրջ համա-

խմբված մտավորականների կորիզն է։ Մտավորականությունն ազգի գլուխն է՝ միտքն ու խիղճը։ Մարմնի անկանոն ու աննպատակ դեգերումների պատճառն աններդաշնակ ու անկանոն, հաճախ էլ իրարամերժ, նաև սխալ կամ թերի ու անկարևոր տեղեկատվությամբ ծանրաբեռնված ազդակներն են գլխից։
Այլ կերպ ասած՝ չի կարելի ժողովրդից սպասել միաբանություն, երբ այն չկա մտավորականության մեջ, չի կարելի սպասել խոհեմություն, երբ այն չկա մտավորականության մեջ, չի կարելի սպասել իմաստնություն ու կազմակերպվածություն, երբ այն չկա մտավորականության մեջ։

Մտավորականությունն ինքնակրթվելու և ժողովրդին կրթելու և ուղղորդելու պարտավորությունն ունի։ Եթե ժողովուրդը անգրագետ է, ուրեմն մտավորականությունն ընդհանուր առմամբ չի արել իր գործը, կամ՝ լավ չի արել։ Գուցե երբեմն հնարավորություն չի ունեցել անելու... բայց հիմնականում անմիաբան է եղել՝ միայնակ է թողել ազգի գաղափարակրին ու, անուշադրության մատնելով, թույլ չի տվել նրան ժողովրդին հասցնել իր խոսքը։ Ամեն դեպքում ժողովրդի ներկայիս վիճակի պատճառը հայ մտավորականների հավաքական մեղքն է։

Եթե համապատասխան հետևություններ չանենք հիմա, ապա հետագա սերունդները մեզ չեն ների։ Մեզ իրավացիորեն մեղավոր կհամարեն՝ իրենց ծանր իրավիճակի համար։

Ազգի ձևավորումը սկսվում է մտավորականությունից։ Առանց մտավորականության միասնականության ու համախմբվածության մեկ գաղափարի շուրջ չկա ժողովրդի միասնականություն ու համախմբվածություն։ Իսկ առանց ժողովրդի միասնականության ու համախմբվածության չկա ազգ, չկա պետություն կամ հայրենիք։
Հարգելի հայ մտավորականներ, բոլորս էլ արժեքավոր բացահայտումներ ու գիտելիքներ ենք կուտակել։ Սակայն մեկ մտավորականի ուժերից վեր է համապարփակ պատասխան տալ մեր ազգի առջև ծառացած բոլոր խնդիրնե-

րին։ Պատկերավոր ասած՝ ամեն մեկս խճանկարի միայն մի մասն ենք կառուցել։ Մեկը մի քիչ ավելի շատ, քան մյուսը, կամ մի քիչ ավելի շուտ, քան մյուսը։ Ոմանք էլ դեռ չեն հասցրել մեծ ձեռքբերումներ ունենալ։ Սակայն դա երբեք չի նսեմացնում որևէ մեկին՝ որպես մտավորական, եթե նա իրոք լրջորեն մտահոգված է իր ազգի ճակատագրով։

Մեր ազգին ներկա ճգնաժամային իրավիճակից հանելու գործը հայ մտավորականների առաքելությունն է։ Դափնեպսակներ կամ ծափահարություններ ակնկալելու կամ միմյանցից խլելու փոխարեն, հայ մտավորականների պարտականությունն է համախմբվել ու առանց որևէ ամբիցիաների՝ փառամոլության կամ սնափառության, լծվել մեր ժողովրդին առաջնորդելու, նրան դեպի մեր ազգային արժեհամակարգն ուղղորդելու գործին։ Այլապես մեզ ազգովի միայն կործանում է սպասվում։

Ոչ մի կարիք չկա հայ մտավորականների միություն ստեղծել։ Այն կա մի անպտուղ կառույց կդառնա, եթե չկարողանանք թոթափել մեր ճանապարհի ամենամեծ խոչնդոտը՝ մեր անձնական սնափառությունն ու գոռոզության հասած մեր սեփական եսապաշտությունը։

Ինչպես արդեն ասվեց, մտավորականն ազգի ճակատագրով լրջորեն մտահոգված անհատն է՝ անկախ ճանաչումից ու մասնագիտությունից։ Մտավորականը ո՛չ միայն ինքնազոհաբերության, այլ նաև մյուս մտավորականների հետ համախմբվելու պարտականություն ունի։ Կոչ եմ անում բոլոր հայ մտավորականներին՝ թոթափել գոռոզության ու եսամոլության որևէ մղում ու համագործակցության ձեռք մեկնել միմյանց։ Դժվարինն առաջին քայլն է։ Հազար փառք ու պատիվ նրան, ով կանի այդ քայլը։

©Դավիթ Միրզոյան, Հունիս, 2012
www.davitmirzoyan.com

ՇԱՆԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀՈԴՎԱԾԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում առկա են որոշ անճշտություններ ու գնահատականներ։ Օրինակ՝ Առաջին Համաշխարհային Պատերազմում գերմանացիների կորուստները չի կարելի ուղղակիորեն համեմատել հայերի կորուստների հետ։ Գերմանացիները, նախ՝ մի քանի անգամ ավելի շատ բնակչություն ունեին, քան հայերը։ Երկրորդ՝ ի տարբերություն հայերի, գերմանացիներն իրենք էին սանձազերծել պատերազմը։ Հետո՝ գերմանացիները ո՛չ ցեղասպանվեցին, ո՛չ էլ կորցրեցին իրենց հայրենիքը։

Սխալ է նաև, որ հայերը բացարձակապես անհաղորդ են եղել ազատության, հավասարության ու եղբայրության արժեքներին։ Նույնիսկ Քրիստոնեություն ընդունելուց հետո, նախաքրիստոնեական ազատատենչ արժեքների մասին էլ չասած, հայերը բազմիցս են զենքի դիմել ազատության համար։ Իսկ հավասարության արժեքը պահպանվել էր Հայաստանում նույնիսկ Քրիստոնեություն կրոնի մուտքից հետո։

Քրիստոնեություն կրոնից առաջ Հայաստանն ազատ, իրավահավասար ու հավասարազոր անհատների հասարակություն է եղել։ Հայաստանում ստրկատիրություն կամ ֆեոդալիզմ չի եղել մինչև Քրիստոնեություն կրոնի մուտքը։ Առաջին ֆեոդալը հենց հայ առաքելական եկեղեցին դարձավ։ Հայերն անընդհատ պայքարել են եկեղեցու դեմ՝ իրենց ազատության համար։ Եկեղեցիների որոշ մասն ապստամբած հայ գյուղացիներն են քանդել։ Բոլորը չի, որ ավերվել են երկրաշարժի հետևանքով կամ՝ օտարների ձեռքով։

Եղբայրության արժեքի մասին ավելորդ է խոսելը։ Աշխարհում չկա մեկ այլ ազգ, որ մինչ օրս միմյանց դիմի «եղբայր»-ով, «հայրիկ», «մայրիկ»-ով, «հորեղբայր»-ով և այլն։ Հայերն երկար դարեր շարունակ ապրել են երջանիկ

ազատության, հավասարության, եղբայրության սկզբունքներով։

Ի դեպ, Քրիստոնեության մեջ «ազատություն»-ը որպես արժեք կամ գաղափար չի արծարծվում։ Արծարծվում է միայն եղբայրության գաղափարը, որն, այո, ներառում է նաև հավասարությունն ու արդարությունը, բայց ոչ՝ ազատությունը։

Հայաստանում ազատության, հավասարության ու եղբայրության արժեքները ոտնահարվել են հիմնականում կապիտալիզմի պատճառով։ Կապիտալիզմը չի ընդունում ո՛չ հավասարություն, ո՛չ էլ եղբայրություն։ Մեզանում հավասարության, մանավանդ եղբայրության արժեքները ոչ թե «հնացած են», այլ դուրս են մղված միայն կապիտալիզմի գայլային «արժեքների» պատճառով։ Դեպի օտար երկրներ արտագաղթող մեր ազգակիցները նպատակ ունեն դուրս պրծնել ներազգային գզվռտոցից ու ապրել համեմատական հավասարության պայմաններում։ Ճիշտ է՝ բոլոր երկրներն էլ կապիտալիստական են, սակայն արևմտյան քաղաքակրթությունը կարողացել է փոքրիշատե տանելի հավասարակշռություն հաստատել հասարակության ներսում, կապիտալիստական տնտեսական հարաբերություններում սոցիալական բարեփոխումներ իրականացնելու միջոցով։

Այո, ազատությունը մեզանում ընկալվում է «ազատություն կամայականությունից»։ Այս տեսակ ազատությանը ներկայիս կապիտալիստական գայլային փոխհարաբերությունների միջավայրում, այո, կամ «փողն է բերում, կամ էլ՝ պետական պաշտոնը»։ Բայց իսկական ազատությունն ազատություն է ո՛չ միայն կամայականություններից ու բռնություններից, այլ նաև՝ շահագործումից, կեղեքումից, ճնշումից, նվաստացումից և այլն։

Ցավոք հոդվածի հեղինակը՝ Շանթ Հարությունյանը, «նախաքրիստոնեական» ասելով, Հելլենիստական մշակույթից

բացի ուրիշ ոչինչ չի պատկերացնում։ Այնինչ, Հելլենիստականից առաջ Հայաստան է եղել՝ իր ուրույն Արարչական մշակույթով, ուր բոլոր առաքինի արժեքները պաշտվում ու պահվում էին, արդարության արժեքը ներառյալ։

Հեղինակը ճիշտ է նկատել, որ հայ եկեղեցին ո՛չ հասկացավ, ո՛չ էլ քարոզեց ճշմարիտ քրիստոնեական արժեքներ։ Ճիշտ է նկատել նաև, որ հայ ժողովուրդն իր ապագան չի կարող կերտել առանց ազատության, հավասարության ու եղբայրության արժեքների վերականգնման ու կիրառման։ Սակայն չի կարելի մոռանալ մեկ այլ, միգուցե ամենակարևոր մի սկզբունք՝ արդարությունը։ Սա ևս քրիստոնեական սկզբունք է։ Ավելի ճիշտ՝ բոլորն էլ բուն հայկական, նախահելլենիստական, Արարչական ուսմունքի սկզբունքներ են։

Հոդվածի հեղինակը գուցե ճիշտ է, որ միայն ազատության սկզբունքի կիրառումը կհանգեցնի անարխիայի ու կտանի կործանման (չնայած՝ անարխիան տեսականորեն ի վերջո բերում է հավասարակշռության), սակայն նույնը չի կարելի ասել հավասարության, եղբայրության, մանավանդ արդարության սկզբունքների մասին։ Ավելին՝ միայն եղբայրության սկզբունքի կիրառումը կապահովի և՛ արդարություն, և՛ հավասարություն, հետևաբար նաև՝ երջանկություն։

Ի դեպ, ազատությունը ստորադաս սկզբունք է։ Եղբայրության, հավասարության ու հետևաբար արդարության սկզբունքներով ապրող ազգն արդեն երջանիկ է ու կարիք չունի անհանգստանալ ազատության սկզբունքի մասին։ Բոլոր ժողովուրդներն ազատության են ձգտել՝ արդարության ու հավասարության հասնելու համար։ Ազատության կարգախոսներով շարժումներն իրականում ձգտել են ազատության անարդարությունից, անհավասարությունից, շահագործումից ու կեղեքումից, ճնշումից ու նվաստացումից, այլ կերպ ասած՝ անեղբայրությունից։

Ընդհանրապես երջանկության հիմնական բաղադրիչը եղ-

բայրությունն է։ Եղբայրությունն իր մեջ ներառում է և՛ հավասարության, և՛ արդարության սկզբունքները։ Իսկ, երբ կա եղբայրություն, որտեղ չկա բռնություն, հետևաբար չկա դրանից ազատվելու մղում, չկա ազատության գաղափարի որևէ կարիք։

Հեղինակը ճիշտ է իր այն եզրակացության մեջ, որ մինչև հայ ժողովուրդը չորդեգրի եղբայրության, հավասարության ու արդարության բարձր իդեալները՝ շարունակելով գերի մնալ նյութապաշտ, կապիտալիստական, գայլային, լեգալացված կողոպուտի մշակույթին, ապա վերջը միայն կործանումն է լինելու։ Բայց որպեսզի հայությունը կարողանա կերտել իր հավաքական երջանկությունը, ապա նախ պետք է կարողանա ձերբազատվել կապիտալիզմի գաղափարախոսությունից, վերադաստիարակվել, վերաիմաստավորելով եղբայրության, հավասարության ու արդարության արժեքների մասին իր ներկա պատկերացումները։

Հայաստանը բարեփոխված քաղաքակրթություն կդառնա եղբայրության, հետևաբար՝ հավասարության ու արդարություն սկզբունքների կիրառման շնորհիվ։

Ցավոք, միայն տնտեսական նախագծերը դեռ ծրագիր չեն ու փրկության ոչ մի հեռանկար չեն պարունակում։ Այո, եղբայրության, հավասարության ու արդարության իդեալները պետք է հռչակվեն որպես Հայաստանի հիմնարար արժեքներ՝ առանց սպասելու արևմտյան քաղաքակրթության քայլերին։ Նույնիսկ Զինգիզ Խանն օրենսգիրք էր ստեղծել, որի մեջ ամրագրված էին հավասարության ու եղբայրության սկզբունքները։ Նկատենք, որ նրա օրենսգրքում ազատության սկզբունքը բացակայում էր։ Ինչո՞ւ։ Որովհետև դրա կարիքը չկար։ Եղբայրության ու հավասարության սկզբունքները բերում են արդարության, հետևաբար՝ երջանկության, այսինքն՝ ազատության որևէ բռնությունից։

Ճշմարիտ է հեղինակի այն պնդումը, որ Հայաստանը՝ որդեգրելով բարձր արժեքներ, պետք է դառնա տարածաշրջ-

ջանի դրոշակակիր ու ընդօրինակման կենտրոն։ Ես կասեի՝ ոչ միայն տարածաշրջանի, այլ նաև՝ ողջ մոլորակի։ Սակայն ավելի լավ կլինի, որ դա անենք առանց արևմուտքին սպասելու՝ ինքներս վերականգնենք մեր Արարչական արժեհամակարգն ու գրավոր ամրագրելով այն, ի ցույց դնենք որպես ստանդարտ։ Ստանդարտ, որին հետևելով նախ ինքներս կինքնաշտկվենք ու հետո, օրինակ ծառայելով մյուս բոլորի համար, կբարեփոխենք նաև մյուսներին։

Եղբայրության, հավասարության ու արդարության արժեքներն, ի սկզբանե Արարչական լինելով հանդերձ, նաև քըրիստոնեական արժեքներ են, Քրիստոնեություն ուսմունքի արժեքներ, որը դժբախտաբար մեզանում միայն որպես կրոն է ընկալվում։ Հայաստանում հազար յոթ հարյուր տարի շարունակ Քրիստոնեություն իրականում չի եղել։ Եղել է միայն համանուն կրոնի իշխանություն։ Իսկ Քրիստոնեություն ուսմունքն ու համանուն կրոնը միանգամայն տարբեր բաներ են։

Այո, եղբայրության, հավասարության ու արդարության բարձր իդեալները որդեգրելու ու ըստ այդմ վերափոխվելու ճանապարհով է միայն հնարավոր կերտել երջանիկ, ազատ, խաղաղ ու կայուն հասարակարգ։

Ամենազզվելին, այո, ներազգային գզվռտոցն է։ Չնայած կորուպցիա, միջկուսակցական ու ներկուսակցական գզվըռտոց ամեն երկրում էլ կա, բայց մեր դեպքում դա շատ ցավալի է, քանի որ այն կատարվում է խորտակվող նավի վրա։ Չի կարելի հույսեր փայփայել, թե ամեն ինչ ինքն իրեն կկարգավորվի։ Եթե հայ մտավորականները միմյանց հետ ընդհանուր համաձայնության չգան, ապա ի՞նչ կարելի է սպասել ժողովրդից։

©Դավիթ Միրզոյան, Հուլիս, 1912
www.davitmirzoyan.com

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ/
ԿՈՉ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հարգելի ազգակիցներ, ես գեղանկարիչ եմ: Ավարտել եմ Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Նկարչա-գծագրական ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատել եմ՝ որպես կերպարվեստի ուսուցիչ, գծագրող, նկարիչ ձևավորող: Դարձել եմ ԽՍՀՄ և ՀԽՍՀ Նկարիչների միության Երիտասարդական Սեկցիայի անդամ: Հետո նաև՝ Բելգիայի Թագավորական Նկարիչների միության անդամ: Միացյալ Նահանգներում ավարտել եմ Բրիգամ Յանգի Համալսարանը՝ մագիստրոսի աստիճանով, արվեստի ու արվեստի տեսության գծով: Իմ մասին ավելի մանրամասն տեղեկություն կարող եք ստանալ իմ անձնական կայքէջում՝ www.davitmirzoyan.com:

Մասնագիտական ձեռքբերումները, սակայն, որոշիչ գործոն չեն մտավորական համարվելու համար: Ի վերջո կարևոր չէ, թե ով է ասում կամ ինչպես, կարևոր է, թե ինչ է ասվում: Ընդհանրապես մտավորականն ազգի մասին լրջորեն մտահոգված անհատն է՝ անկախ մասնագիտությունից, տարիքից, ճանաչումից, կրթական մակարդակից ու հասարակական դիրքից:

Սակայն մեկ անհատի ուժերից վեր է համակողմանի լուծում գտնել ազգի առջև ծառացած խնդիրներին: Մեր դեպքում համայն հայության մտավորականների միացյալ ջանքերն են անհրաժեշտ՝ մեր ազգին փակուղուց դուրս բերելու համար:

Հնարավորին չափ շատ մտավորականների ներգրավվածությունն ավելի արդյունավետ լուծումների կարող է բերել: Սակայն մտավախություն կա, որ կրկնվի այն, ինչ շատ հաճախ է եղել մեր ողջ պատմության ընթացքում՝ հայ իշխանավորներն ու, ավա՜ղ, նաև մտավորականները սեփական ամբիցիաները, եսապաշտությունը, փառամոլությունը և այլն, ավելի բարձր են դասել ազգի ընդհանուր շահից: Հուսով եմ, որ հիմա այդպես չի լինի: Հուսով եմ,

որ մենք՝ հայ մտավորականներս, մի կողմ դնելով մեր ամբիցիաները, գոռոզությունը, մեծամտությունը, եսապաշտությունն ու կառչած չմնալով մեր սեփական գաղափարական ձեռքբերումներին, խորամուխ կլինենք անկեղծորեն լսել ու լրջորեն քննարկել միմյանց առաջարկները։

Ներկայումս նյութապաշտ աշխարհն արագորեն դեպի կործանում է գնում՝ իր անհագ շահամոլության ու հակամշակույթի հետ միասին։ Մենք կամա, թե ակամա, կրնկակոխ ընթանում ենք նույն ճանապարհով։ Ժողովրդավարության որոգայթները խճճել ու պարալիզել են մեր ժողովրդին։ Կապիտալիզմը թշնամացրել, պառակտել ու թուլացրել է մեզ։ Մեր երկրի 90%-ը տնօրինում է արտաքին թշնամին, իսկ մնացած 10%-ը շրջափակել ու արնաքամ են անում և՛ արտաքին, և՛ ներքին թշնամիները։ Ստեղծված իրավիճակը ստիպում է մեր ազգակիցներին կամ լքել հայրենիքը, կամ էլ ահագնացող անողոքությամբ մասնակցել ներազգային գզվռտոցին, ոմանք՝ մի կտոր հացի, մյուսները՝ շահույթի համար։ Վաղնջական ժամանակներից մեզ հասած առաքինի մշակույթը, որը պայմանավորում էր մեր ազգի ներդաշնակ ապրելակերպը, անհույս քայքայվել ու օրեցօր շարունակում է քայքայվել օտար «արժեքների» ազդեցության տակ մեր «առաջնորդների» հանցավոր անտարբերության, շատ հաճախ էլ՝ հանցավոր գործունեության հետևանքով։

Ոչ մի տնտեսական կամ քաղաքական նախաձեռնություն, նախագիծ կամ ծրագիր հարցի լուծում չի կարող ապահովել։ Նույնիսկ ամենալավ տնտեսական կամ կառավարման համակարգն ի զորու չէ դրական արդյունքներ ապահովել անբարոյական հասարակությունում։ Մյուս կողմից՝ բարոյահոգևոր բարձր արժեքների մշակույթ ունեցող հասարակությանը ոչ մի վնաս չի տա նույնիսկ ամենավատ տնտեսավարման կամ կառավարման համակարգը։

Ուրեմն խնդրի լուծման բանալին ժողովրդի բարոյահոգևոր ու մտավոր մակարդակի բարձրացումն է։ Ինչպես ժամանակին մի իմաստուն է ասել՝ «Սովորեցրեք մարդկանց

ճշմարիտ արժեքներ, ու իրենք իրենց կկառավարեն»։ Իսկ այդ ճշմարիտ արժեքները կան մեր նախնյաց Արարչական, նաև՝ Քրիստոնեական ուսմունքների մեջ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում» դրույթի գլխավորությամբ։ Հարկավոր է գտնել մեր մոռացված ուսմունքի բոլոր դրույթներն ու ենթադրույթները, վերականգնել ողջ համակարգն ու դնել այն ամեն հայի սեղանին։ Սկզբում այդ ուսմունքի շուրջն իրենց արյան կանչով կհավաքվեն ազգի ընտրյալները, հետո աստիճանաբար նաև՝ ողջ ժողովուրդը։

Մեր նախնյաց արժեհամակարգի արմատավորումը հասարակության ներսում կբերի աստիճանական փոփոխությունների։ Կբարելավվեն միջանձնային հարաբերությունները։ Կձևավորվի իմաստուն, հոգևոր այրերի դաս՝ բարոյահոգևոր արժեքների կերտողը, կրողն ու կիրառողը, որն էլ կստանձնի ժողովրդի առաջնորդի դերը։ Հասարակությունը կհրաժարվի կապիտալիզմից՝ որպես տնտեսավարման ձև, կազգայնացնի ողջ տնտեսությունն ու, վերականգնելով միապետությունը, կդնի այն միապետի՝ ազգի գերագույն նահապետի, իշխանության տակ։ Նոր համակարգում ավելորդ կլինեն կուսակցությունները, այլ կազմակերպություններն ու կրոնները, ժողովրդավարությունն իր խճճված ու կոռումպացված համակարգով և այլն։

Միայն այս կերպ վերափոխված Հայաստանն ի վիճակի կլինի լուծել մեր ամբողջական հայրենիքի վերականգնման ու համայն վտարանդի հայության վերադարձի գերխնդիրը, կկարողանա իր օրինակով վերափոխել աշխարհի մյուս ժողովուրդներին ու, հաստատելով սկզբունքորեն նոր միջազգային հարաբերություններ՝ խարսխված բարոյահոգևոր բարձրագույն արժեքների վրա, կվերականգնի մոլորակի հավասարակշռությունն ու համայն մարդկության երջանկությունը։

©Դավիթ Միրզոյան, Օգոստոս, 2012
www.davitmirzoyan.com

ՄԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ազգային դժբախտությունների պատճառն անկասկած, մեր ազգային ոսմունքի՝ մեր արժեհամակարգի, կորուստն է: Մենք կորցրինք այն 301-ին՝ կրոնավորների հրով ու սրով ասպատակությունների հետևանքով, երբ ոչնչացվեցին մեր նախնյաց ոսմունքը պարունակող բոլոր մեհենական մատյանները, նաև՝ այդ ոսմունքի ուսուցիչ հոգևոր դասը: Սրան հետևեցին կրոն-ոսմունք բախումները, նաև առճակատումներ՝ իշխանական որոշ տների, իրականում՝ եկեղեցու ու մեր արքաների միջև: Երկիրը սկսեց պառակտվել ու թուլանալ: Մեր թշնամիներն աշխուժացան, մանավանդ, երբ եկեղեցին օտար ուժեր էր հրավիրում ներքին ընդվզումներ, Պավլիկյանների ու Թոնդրակյանների՝ զօրինակ, ճնշելու համար:

Անընդհատ, հատկապես ներքին պատերազմների հետևանքով, ամայանում էր երկիրը: Սննդի պակասը ստիպում էր մարդկանց միմյանցից պատառ խլել, որի հետևանքով սկսեց ձևավորվել ներազգային գզվռտոցի մշակույթը: Ներազգային գզվռտոցի հետևանքով երկիրն ավելի էր ամայանում ու խորացնում ներազգային գզվռտոցը: Ներազգային գզվռտոցն աստիճանաբար վերաճեց ներազգային թշնամանքի: Կապիտալիզմի մուտքն է՛լ ավելի խորացրեց ու սրրեց ներազգային թշնամանքը: Իսկ 1915 թվի Մեծ Եղեռնից հետո, երբ մեր հայրենիքի միայն մեկ տասներորդը մնաց, ներազգային թշնամանքի մշակույթը թևակոխեց ավելի անմարդկային փուլ:

Ներկայիս կապիտալիստական, ավելի ճիշտ՝ մոնոպոլիստական կապիտալիզմի, իսկ ավելի ճիշտ՝ խուլիգարխիկ կապիտալիզմի պայմաններում ներազգային թշնամանքն անասելի է խորացել: Ընթացիկ շրջափակման պատճառով իրավիճակն այնքան սրված է, որ հայը հայի հետ վարվում է ավելի վատ, քան թշնամու հետ: Չգիտեմ... գուցե ավելի վատանալու տեղ կա: Ինչպես ասում են՝ լավից լավը կա, վատից էլ՝ վատը: Բայց այսպես շարունակելը միայն դեպի լիակատար կործանում կտանի մեր ազգին: Անհապաղ

հարկավոր է կասեցնել այս կործանարար ընթացքը։ Բայց ինչպե՞ս։

Միակ ճանապարհը մեր նախնյաց արժեհամակարգի վերականգնումն է։ Այդ արժեհամակարգի հիմնարար դրույթները կան «ԱՐԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ»-ում։ Հարկավոր է միայն հրապարակել այն համացանցում, նաև՝ տպագիր՝ հասցնելով այն ամեն հայի սեղանին, ու ժողովրդի լավագույն հատվածը կսկսի ինքնաշտկվել, բարձրացնել սեփական արժեհամակարգը՝ հասցնելով այն «ԱՐԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ»-ի ստանդարտին։ Նրանց աստիճանաբար ու անխոսափելիորեն կհետևեն մյուսները։ Բարոյահոգևոր բարձր արժեքների տեր հասարակությունը հենց այն է, ինչին ձգտում ենք։

Մեր հանրահայտ ներազգային գզվռտոցի ավելի խորքային պատճառ կա։ Բայց գլխավոր պատճառն արժեհամակարգի բացակայությունն է։

Հ. Գ.
Հարգելի բարեկամներ, ոմանք հայտնել են իրենց անհանգստությունն ակնարկիս բովանդակության վերաբերյալ։ Նախ ասեմ, որ հասկանում եմ այդ անհանգստությունները։ Ասեմ նաև, որ գրածս իմ ֆեյսբուքյան կոմենտներից մեկն է՝ հարմարեցված առանձին ընթերցման համար ու չի հավակնում սպառիչ վերլուծություն հանդիսանալ։ Սպառիչ վերլուծության համար համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտություն կա։

Դառնալով ոմանց մտահոգություններին, ասեմ, որ, այո, 301 թվից առաջ արդեն սկսվել էր քայքայվել մեր ազգային մշակույթը։ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով տարածաշրջան էր ներխուժել հունա-հռոմեական հեթանոս ու խաբեբա մշակույթը, գահակալական կռիվներ, հայրասպանություն, որդեսպանություն և այլ տեսակի այլասերվածություններ։ Նկատենք նաև, որ պալատական խարդավանքների մշակույթը Հայաստան էր եկել նաև Ասորեստանից, ընդհանրապես՝ հարևան երկրներից։ Պա-

լատական խարդավանքները բուն հայկական ծագում չունեն, այլ ներմուծված օտար «արժեքներ» են։ Մեր ազգային, առաքինի արժեքների աղճատումն, իհարկե, աստիճանական գործընթաց է եղել։ Պարզապես 301-ին տեղի ունեցավ արյունալի հեղաշրջում։ Համատիեզերական գիտելիքի կրող հոգևոր դասը կոտորվեց։ Նրանց զավակներին տարան լցրեցին ճեմարանները և ուղեղները մի լավ մշակելուց հետո, դարձրին եկեղեցու սպասավորներ։ Մեսրոպ Մաշտոցն այդ որբուկներից մեկն է եղել։ Եկեղեցու չարագործությունները միայն դրանով չեն սահմանափակվել։ Մաշտոցին հալածել են։ Մովսես Խորենացու գերեզմանը քանդել, ոսկորները հանել, թափել են գետը և այլն։

Քրիստոնեական համայնքներն, այո, շատ տարածված էին Հունաստանում, Փոքր Ասիայում, նաև՝ Հայաստանում։ Առաջին դարում, փաստորեն, հայերը հունա-հռոմեական հեթանոսությունից հեռանում ու մղվում էին դեպի ավելի պարզ ու մեր ազգային արժեհամակարգին ավելի մոտ ուսմունքի՝ Քրիստոնեություն ուսմունքին։ Բայց հարկ է նկատել, որ 301-ին Քրիստոնեություն ուսմունքը չէր, որ հրով ու սրով մտավ ու ավերեց Հայաստանը, այլ՝ կրոնը։ Սրանք միմյանցից շատ տարբեր բաներ են։

Իսկ Պավլիկյանների ու Թոնդրակյանների շարժումներն ի պատասխան էին հայ առաքելական եկեղեցու կողմից Քրիստոնեություն ուսմունքն աղավաղելու և այն կրոն դարձնելու իրողությանը։ Թոնդրակեցիները համառորեն, իրենց կյանքի գնով պայքարում էին՝ ստիպելու եկեղեցուն անջատել Հին Կտակարանը Նոր Կտակարանից, քանզի համոզված էին, որ դրանք միմյանցից շատ են տարբերվում իրենց արժեքների համակարգով։

Իսկ մեր նախնյաց վաղնջական ուսմունքն իր հիմքում ուներ Քրիստոնեություն ուսմունքի հիմնարար դրույթը՝ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում»։ Ավելի ճիշտ՝ հակառակը։ Քրիստոնեություն ուսմունքն իր հիմքում ունի մեր նախնյաց վաղնջական ուսմունքի հիմնարար դրույթը։ Այլ կերպ ասած՝ մեր նախնիք մեկ աստված ու-

նեին՝ ճշմարտության ու արդարության աստված։ Ի դեպ, ըստ Քրիստոսի ո՛չ եկեղեցի պիտի լիներ, ո՛չ էլ՝ եկեղեցական, ո՛չ սրբապատկեր, ո՛չ էլ՝ մոմավառություն և այլն։ Ոչ մի ընդհանուր բան չկա Քրիստոնեություն ուսմունքի ու համանուն կրոնի միջև։

©Դավիթ Միրզոյան, Օգոստոս, 2012
www.davitmirzoyan.com

ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ՝ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Գործընթացը կսկսվի Արարչական Օրենքների միջոցով մեր ուսմունքի ներդրմամբ։ Սկզբում ուսմունքի շուրջն իրենց արյան կանչով կհամախմբվեն ազգի մտավորականները։ Հետագայում՝ նաև ողջ ժողովուրդը։

Մեր ուսմունքի արմատավորումը կբերի աստիճանական փոփոխությունների։ Հասարակության ներսում կբարելավվեն միջանձնային հարաբերությունները, կձևավորվի իմաստուն մտավորական այրերի դաս՝ ազգային Արարչական արժեհամակարգի կերտողը, կրողն ու կիրառողը, որը փաստորեն կստանձնի ժողովրդի իսկական առաջնորդի դերը։

Նրա առաջնորդությամբ ժողովուրդն ազգային ժողովում իր իսկական ընտրյալների միջոցով կհրաժարվի օտարամուտ արժեքներից՝ կապիտալիզմից ու դեմոկրատիայից ու, երկրում հայտարարելով նահապետական կառավարում, կազգայնացնի ողջ տնտեսությունն ու այն կդնի գերագույն նահապետի՝ Համայն Հայոց Արքայի, իշխանության տակ՝ այդ ամենն ամրապնդելով հանրաքվեով ընդունված երկրի նոր սահմանադրությամբ։

Երկիրը, փաստորեն, կդառնա սահմանադրական միապե-

տություն, բայց առանց ազգային ժողովի, առանց կուսակցությունների ու առանց հասարակական, կրոնական կամ այլ տեսակի կազմակերպությունների։ Գործող քրեական օրենսդրության (որոշ բարեփոխումներով) ու օրինապահ մարմինների առկայությունը կպահպանվի այնքան ժամանակ, մինչև Արարչական մշակույթը չներթափանցի յուրաքանչյուր համայնքի ու անհատի էության մեջ։

Ազգի իմաստուն այրերը՝ նահապետները, իրենց ենթակա կառույցների միջոցով կվերահսկեն օրենքների ու մշակույթի պահպանումը գյուղական, քաղաքային ու մարզային մակարդակներում։ Երկրի ընդհանուր ու միջազգային հարաբերությունների պատասխանատուն կլինի ազգի ամենահիմաստուն, գերագույն նահապետը՝ Համայն Հայոց Արքան՝ իր խորհրդականների ու առանձին ոլորտների նախարարների խորհրդատվական աջակցությամբ։

Հայաստանի Թագավորությունը կդառնա ազգային սոցիալական, սահմանադրական միապետություն՝ իր ուրույն ուսմունքով ու համապատասխան օրենքներով։ Արքան՝ երկրի գերագույն նահապետը, գործելով Արարչական ուսմունքի շրջանակներում, կկառավարի երկիրը՝ ըստ Արարչական օրենքների ու սահմանադրության, ունենալով լիիրավ օրենսդրական ու գործադիր իրավունքներ։

Արքան սկզբում կընտրվի համազգային հանրաքվեով՝ ընտրողների ձայների 75% ճնշող մեծամասնությամբ։ Հետագայում Արքայի առաջին արու զավակն Արքայի մահից հետո կստանձնի երկրի կառավարումն ու այդպես շարունակ։ Արքան կնշանակի իր խորհրդականներին, նախարարներին, մարզպաններին, գավառապետերին ու մեծ քաղաքների քաղաքապետերին։ Գյուղապետերը, փոքր քաղաքների քաղաքապետերն ու մեծ քաղաքների թաղապետերը կընտրվեն համայնքի կողմից։ Արքային օտար պետություններում ու միջազգային կազմակերպություններում կներկայացնի արտաքին գործերի նախարարն, իսկ երկրի ներսում՝ Արքայի անձնական խոսնակը։ Արքային գահընկեց կարող է անել միայն ժողովուրդը համազգային հան-

րաքվեով՝ ընտրողների 75%-ից ավել ձայների ճնշող մեծամասնությամբ։ Արքային գահընկեց անելու ժողովրդի մեծամասնության ցանկությունն Արքային կհասցվի ժողովրդի հետ կապերի նախարարության միջոցով։ Արքան, ստանալով իրեն գահընկեց անելու ժողովրդի մեծամասնության ցանկությունը, համազգային հանրաքվե կանցկացնի։

Ավանդական կրոնական կառույցները կվերածվեն ազգային ուսմունքն ու օրենքներն ուսուցանող ուսումնադաստիարակչական հաստատությունների։ Ազգային ուսմունքն ուսուցանող համակարգը, նաև՝ գիտության ու արվեստի բընագավառները, կֆինանսավորվեն ազգային գանձարանից։

©Դավիթ Միրզոյան, Սեպտեմբեր, 2012
www.davitmirzoyan.com

ՄԵՐ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Այս երևույթն ա շատ է անհանգստացրել ու դեռ շարունակում է անհանգստացնել ազգի մասին մտահոգ ազնվաբարո մտածողներին։

Նկատենք, որ երբ ընտանիքում հոր կամ մոր ազդեցությունը թույլ է, կամ, երբ ընտանիքը կուռ, ձևավորված, կայացած ու ամուր մշակույթ չունի, երեխաները որպես կանոն, ընկնում են շրջապատի ազդեցության տակ։ Հետո ենթարկվում ու, ի վերջո, կուլ գնում այդ շրջապատին։ Ցավոք վատը, ցածրարժեքը, ստորակարգը, պիղծ ու լկտի մըտածելակերպն ավելի ազդեցիկ է, քան լավն ու առաքինին։

Մեծ մասշտաբով նույն բանը կատարվում է ազգերի հետ։ Լիարժեքորեն չձևավորված կամ ընդհանրապես սեփական ուսմունք ու մշակույթ չունեցող ազգերը հակված են ընդօրինակել իրենցից «առաջադեմ» ազգերի մշակույթը, նիս-

տըն ու կացը։

Մեր սեփական ուսմունքը չունենալով՝ աչքներս միշտ օտարի արժեքների կողմն է լինելու։ Դրսի նվաճումները պաշտելու ենք կուռքի պես։ Բայց նկատենք, որ ամեն դրսի նվաճում չի, որ պաշտում ենք։ Մեզ համար պաշտամունքի առարկա են կայացած ազգերի՝ հզորների, նվաճումները և՛ նյութական, և՛ մտավոր, և՛ կրոնական առումով։ Վերջապես ուզբեկների, կիրգիզների կամ ուդմուրտների մշակույթը հո չե՞նք ընդօրինակելու։ Չէ՞ որ մեր սեփական արժեքը ճանաչող ու արժանապատվություն ունեցող ազգ ենք։ Մեզ կսազի՞ ջինսի փոխարեն ուրիշ բան հագնել, կամ «Հյուգո Բոս» թողած՝ մի ինչ-որ անհայտ արտադրության վերնաշապիկ կամ կոստյում հագնել։ Կամ ամոթ չի՞ Հեյդեգեր չիմանալ։

Ճիշտ էր ասում Քրիստոսը, իր դառը փորձից իհարկե, որ սեփական տանը մարգարեներ չկան։ Մարդն ասել կուզեր, որ տնեցիք սեփական տան անդամին չեն գնահատում, աչքները միշտ դրսի «խելոքների» կողմը։

©Դավիթ Միրզոյան, Հոկտեմբեր, 2012
www.davitmirzoyan.com

ՄԵՐ ԾԳՆԱԺԱՄԸ

Մեր ազգի ներկա ճգնաժամի ախտանշանները բոլորս ենք տեսնում՝ հանցագործ օլիգարխիկ համակարգ, համատարած կոռուպցիա ու իշխանավորների անպատժելիություն։

Սակայն շարունակաբար մատնանշելով ու հայհոյելով՝ դարդին դարման չես անի։ Հարկավոր է հասկանալ հիվանդության պատճառն ու բուժամիջոց գտնել։

Ամբողջ մեղքը դրսի ուժերի վրա դնելը ճիշտ չէ։ Մարմինը

հիվանդանում է ոչ միայն հիվանդածին բացիլների պատճառով, այլ հիմնականում մարմնի իմունային համակարգի թուլության պատճառով։ Հիվանդածին բացիլներ միշտ էլ կան ու շրջապատում են բոլորին և՛ դրսից, և՛ ներսից, սակայն հիվանդանում են ոչ բոլորը։ Ուժեղ իմունային համակարգ ունեցող ազգերը չեն հիվանդանում։

Ուրեմն պատճառը հիմնականում մեր մեջ է։ Մեր հանցագործ իշխանավորներն ու նրանց ծառայողներն ու սատարողները դրսից չեկան։ Նրանք բոլորն էլ ծնվել ու մեծացել են ներսում։ Աննկատ։ Չնայած՝ նկատողներ կային։ Պարզապես քիչ էին։ Կամ չէին համարձակվում ասել, կամ ասում էին, բայց լսող չկար։ Չկար իմունային համակարգը, որը կզսպեր այդ բացիլներին ու թույլ չէր տա հզորանալ ու բազմանալ, թույլ չէր տա ոհմակներ կազմել ու գրավել իշխանությունը։

Ամեն ինչ եղել է մեր թողտվությամբ։ Մինչև չվերականգնենք մեր իմունային համակարգը՝ մեր ազգային ոգումնքը, ու չսերմանենք այն, ապա կշարունակենք ընթանալ դեպի կործանում։

Անհատի կամ ազգի առաջընթացի գրավականն անկեղծ որոնումը, բացահայտումն ու ազնիվ ինքնախոստովանությամբ ինքնամաքրումն է՝ առանց որի ազգը դատապարտված է մահվան։ Իր ապագան վտանգված ազգի միակ փրկությունը սեփական վերադաստիարակությունն է։

©Դավիթ Միրզոյան, Նոյեմբեր 2012
www.davitmirzoyan.com

ՆԱՑԻՈՆԱԼ-ՍՈՑԻԱԼԻԶՄ

Քչերը գիտեն, որ նացիոնալ-սոցիալիստներն ազգայնացրեցին երկրում ողջ տնտեսությունն ու գործարանների բոլոր աշխատողներին դարձրեցին լիիրավ սեփականատերեր: Արդյունաբերությունը ծաղկեց, արհմիություններն իմաստազրկվեցին, կուսակցությունների բազմազանության կարիք այլևս չկար: Երկրի կառավարումն իրականացվում էր մեկ կենտրոնից, միասնական գաղափարախոսության՝ ուսմունքի, հիման վրա:

Ասում են՝ ներկայումս Ռուսաստանում երազում են նման համակարգի մասին, որ ռուսական մտավորականությունը մտածում է հրաժարվել կառավարման դեմոկրատական ու տնտեսավարման կապիտալիստական մոդելից՝ համարելով, որ այն ձևավորվել է ռուսական ոգուն անհարիր քրիստոնյա բողոքականությամբ պառակտված եվրոպական հասարակությունում: Փոխարենը ծրագրեր են մշակում անցնել կենտրոնացված կառավարման ու տնտեսավարման, համոզված, որ ռուսական հասարակությունը դեռ հակում ունի դեպի ավանդական նահապետական կացութաձևը:

Գուցե ռուսական հասարակությունը դեռ հակում ունի դեպի ավանդական նահապետական կացութաձևը, բայց Եվրոպայում հասարակությունը մասնատվել էր ոչ թե քրիստոնյա բողոքականության, այլ մեկ ուրիշ պատճառով:

Իտալական Վերածննդից սկիզբ առավ հումանիզմ կոչվող մի գաղափարախոսություն: Այն, իհարկե, ոչ մի կապ չուներ մարդասիրության հետ: Հումանիզմը մարդակենտրոնություն էր՝ ի հակադրություն դարեր շարունակ իշխող աստվածակենտրոնության: Հումանիզմի ազդեցության ներքո մարդիկ դարձան եսակենտրոն: Հասարակությունը պառակտվեց, ու նպաստավոր հող բացվեց դեմոկրատիայի ու կապիտալիզմի առաջացման ու բարգավաճման համար: Եվրոպական դեմոկրատական մոդելը ձևավորվել ու զարգացել է եսակենտրոն հասարակության ներսում: Վերածընդից սկսած, Եվրոպան արդեն հինգ հարյուր տարի շա-

րոնակ ապրում ու զարգանում է հումանիզմով պառակտված, կապիտալիզմով բզկտված ու սոցիալիզմով կարկատված պայմաններում։

Ռուսները, սակայն, կապիտալիզմ չտեսան մինչև 1861 թվականը։ Ռուսաստանում ճորտատիրության վերացումից հետո էլ կապիտալիզմը շատ դանդաղ էր զարգանում։ Համենայն դեպս ոչ այնպես, ինչպես Եվրոպայում։ Մինչև 1861 թվականը ռուսներն ապրում էին ավանդական նահապետական համայնքներում։ Ճիշտ է՝ ամեն ինչ կալվածատիրոջ սեփականությունն էր, բայց այդ իրավիճակը շատ նման էր նախաճորտատիրական, նահապետական կացութաձևին, այնքանով, որ գյուղացին անվճար հող էր ձեռք բերում, մշակում այն ու ընտանիք պահում։ Կալվածատիրոջը ձեռնտու էր, որ գյուղացիները շատանան ու արտադրանք տան։ Կալվածատիրոջը միայն բերքն ու բարիքն էր հետաքրքրում ու նա չէր խառնվում համայնքի ներքին կյանքին։ Համայնքի ներսում գյուղացիները պահում էին նահապետական կացութաձևը, չնայած՝ քրիստոնյա էին համարվում։ Սա է պատճառը, որ Ռուսաստանը մինչև 1861 թվականն ապրում էր համարյա նահապետական կացութաձևով ու մինչև 20-րդ դար լուրջ կապիտալիզմ չտեսավ։ Իսկ, երբ Ռուսաստան սկսեց սողոսկել կոմունիստական գաղափարախոսությունը՝ իր եղբայրության, հավասարության, տնտեսության ու հողի ազգայնացման գաղափարներով, ապա ռուսները միանգամից ընդունեցին այն, քանի որ հատկապես հողի ազգայնացման գաղափարը շատ նման էր, համարյա նույնական էր, նահապետական կարգին։

Ռուսները հիմա կարոտում են սովետական տարիները, ոչ միայն, որովհետև դեռ չեն ընտելանում կապիտալիզմին, ոչ միայն, որովհետև դեռ հիշում են լի ու բոլ վաթսունականներն ու յոթանասունականները, այլ նաև, որովհետև սովետական պետության հիմքում ընկած էին համարյա նահապետական սկզբունքներ՝ կառավարման կենտրոնացված ու հիերարխիկ բնույթն ու ազգայնացված տնտեսությունը, նաև, որովհետև ռուսների հավաքական հիշողու-

թյան մեջ դեռ պահպանվում են նահապետական մշակույթի տարրեր: Նրանց մեջ, ի դեպ, դեռևս առկա է որոշ արիական արյուն:

Մեր՝ հայերիս, մեջ ևս շատ կա արիական արյուն: Բայց, երկար դարեր անպետականության ու անընդհատ պատերազմների մեջ ապրելով, մեզանում արմատացել է եսակենտրոն, եսասեր, եսապաշտ, եսամոլ մշակույթ, հետևաբար՝ տրոհված ու պառակտված հասարակություն: Սա է եղել դարեր շարունակ մեր բոլոր անհաջողությունների ու դժբախտությունների պատճառը: Մեր այս եսապաշտությունն ու պառակտվածությունն էր պատճառը, որ մենք շատ արագ, նույնիսկ ԽՍՀՄ-ի օրոք, ոտով-գլխով սիրահարվեցինք կապիտալիզմին ու, ցավոք սրտի, դեռ ուրիշ տարբերակ չենք պատկերացնում: Չենք պատկերացնում, որ կարող են լինել բոլոր աշխատողներին ամբողջովին ու հավասարապես պատկանող ձեռնարկություններ (employee owned): Նման ձեռնարկություններ աշխարհում հիմա շատ կան: Այդպիսի ձեռնարկություններում չկա մարդու կողմից մարդու շահագործում, ողջ եկամուտը բաժանվում է բոլոր աշխատողների միջև, ու չկա մեկը՝ կապիտալիստ, որ յուրացնի մյուսների աշխատանքի արդյունքը: Նման ձեռնարկություններում մարդիկ աշխատում են մեծ խանդավառությամբ, որովհետև իրենք են իրենց աշխատանքի ողջ արդյունքի տերը:

Ներկայումս ոչ մի կապիտալիստի մտքով, իհարկե, չի անցնի կիրառել նման բան: Ամենաշատը՝ կապիտալիստն իր բանվորներին արտոնություններ է տալիս բժշկական կոլեկտիվ ապահովագրության կամ կենսաթոշակներին հավելումների ձևով: Աշխարհի շատ երկրներում վայրենի կապիտալիզմ է: Միայն եվրոպական երկրներն են բավարար սոցիալական բարեփոխումներ կատարել՝ կապիտալիզմի կործանարար հետևանքները թուլացնելու համար:

Ըստ մեր ազգային ուսմունքի՝ մենք պիտի ունենայինք ազգայնացված տնտեսություն ու միապետական կառավարում: Բայց Հայաստանում գուցե ոչինչ չստացվի: Մեր ժողո-

վուրդը, վախենամ, չհամարձակվի պատասխանատվություն վերցնել իր վրա՝ ազգայնացնելու երկրի ողջ տնտեսությունը: Մարդիկ դեռ շատ են վախեցած կոմունիզմից, երբ բոլշևիկյան հեղափոխությամբ հողն ու գործարաններն ազգայնացվեցին, գյուղացիներին ու բանվորներին որպես սեփականություն տալու խոստումներով, բայց հետո...

Զմոռանանք, սակայն, որ հողի ազգայնացման գաղափարներն այնքան հզոր էին, որ 1920 թվականին հայոց բանակի զինվորները, որ հիմնականում գյուղացիներ էին, հանձնեցին Ղարսի ամրոցն ու կազմալուծեցին ճակատը: Հայ ժողովուրդը հիմա շնչահեղձ է լինում կապիտալիզմի պատճառով, բայց միևնույն ժամանակ սարսափում է կոմունիզմից: Ուրիշ ոչինչ չի պատկերացնում: Բացատրելու ոչ՛ ժամանակ կա, ոչ՛ էլ հնարավորություն: Բայց ամենամեծ դժբախտությունն այն է, որ չեն լսում: Ոչ ոք չի լսում՝ ո՛չ ազգի մասին մտահոգ մտավորականները, ո՛չ էլ՝ մնացածը:

Ժողովուրդը կցանկանար օլիգարխներից, ավելի ճիշտ՝ խոսիգարխներից, խլել գողունը, բայց վախենում է չկարողանա պահել այն ներկայիս դեմոկրատական կառավարման համակարգի միջոցով՝ հաշվի առնելով վերջին տարիների դառը փորձն ու հատկապես ազնիվ ու ազգանվեր մարդկանց անկարողությունը երկրում:

Ժողովրդին պատասխանատվությունից կփրկի միապետությունը: Մի բան է գողունը խլել ու չկարողանալ պահել իրեն վարկաբեկած դեմոկրատական համակարգի միջոցով, մեկ այլ բան է գողունը խլել ու հանձնել միապետի տնօրինությանը՝ ողջ պատասխանատվությունը դնելով նրա վրա: Ամեն դեպքում երկրին հիմնական տեր է պետք: Մեզ ժամանակավոր ուտող փախնողներ պետք չեն:

Իսկ միապետ կարող է լինել միայն ամենահմաստուն ու բանիմաց նահապետը, ով չի տենչում միայն իշխանության, ում միակ նպատակն է ծառայել իր ժողովրդին, ով իրեն վստահված երկիրն ու ազգային գանձարանն իր սե-

փականը չի համարի, ով տոգորված է իր երկրում արդարությունն, բարորությունն հաստատելու ու պահպանելու, իր ժողովրդի համար երջանիկ կյանք ապահովելու ձգտումով, ով նաև տոգորված է ողջ աշխարհին արդարություն, խաղաղություն, բարորություն ու երջանկություն բերելու ձըգտումով։

©Դավիթ Միրզոյան, Հոկտեմբեր, 2012
www.davitmirzoyan.com

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հանցագործությունների դրդապատճառները հիմնականում հինգն են։ Առաջին չորսը բխում են մեր կենդանական կեսից։ Ամեն մարդ կազմված է կենդանական՝ բնական, և Աստվածային՝ բանական, կեսերից։

Մարդիկ իրենց բնական էությամբ ալարկոտ են կենդանիների պես, հետևաբար՝ բնական մղում ունեն ձեռք բերել այն, ինչ անհրաժեշտ է՝ առանց չարչարվելու։ Դա կլինի ինչ-որ մեկի կողմից արդեն հավաքված մայր հողի բարիքները, պատրաստված գործիքները, կառուցված շինությունները, արվեստի ստեղծագործությունները, թե՝ այլ անհրաժեշտ պարագաներ։ Այլ կերպ ասած, մարդիկ բնական մղում ունեն ապրել առանց աշխատելու՝ գողանալով։

Երկրորդ պատճառը նախանձն է։ Նախանձը ևս ներհատուկ է մեր կենդանական՝ բնական, կեսին։ Մարդիկ նախանձում են իրենցից տաղանդավոր, աշխատասեր ու հաջողակ մարդկանց։ Նախանձից դրդված նրանք պատրաստ են վնասել, նույնիսկ՝ սպանել։

Երրորդն ելնում է երկրորդից, բայց շատ ավելի հեռու է գնում՝ զուգակցված հափշտակելու մղումով։ Նախանձ մարդիկ հաճախ չեն բավարարվում միայն խանգարելով ու վը-

նասելով, այլ նաև ձգտում են գողանալ, նույնիսկ հափշտակել ուրիշի կողմից հավաքված սնունդը, պատրաստված գործիքը, այլ արժեքավոր իրեր, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և այլն։

Չորրորդ պատճառը շատ ավելի հանցավոր է։ Եսասիրության ու փառամոլության մոլուցքով տարված՝ մարդիկ ձգտում են ուրիշներին նվաստացնել, իշխել, ընդհանրապես՝ սեփական անձն ամեն գնով մյուսներից բարձր կարգել։ Սրանք հիմնականում բռնակալներն են, ստրկատերերը, ընդհանուր առմամբ՝ ստորակարգ մարդիկ, ովքեր հաճախ մեծ ոհմակներ կազմած ձգտում են առաջ տանել իրենց հանցավոր ծրագրերը, երբեմն որևէ գաղափարախոսության, կրոնի, զինված ուժերի, նույնիսկ օրենսդիր կառույցների, իրավապահ ու դատաիրավական մարմինների միջոցով։

Հինգերորդն առաջանում է որպես հակակշիռ չորրորդին։ Բնականաբար ճնշվածները ստիպված են դիմադրել բռնակալների, աշխարհի տիրակալների կազմակերպված ու լեգալացված հանցագործությանը։ Վերևից տարածվող իրավապահ ու դատաիրավական մարմինների կողմից սատարվող անիրավության, անարդարության իրականությունը մղում է ճնշվածների ու հալածվածների լայն զանգվածներին՝ պայքարել սեփական գոյատևման համար, նաև՝ քիչ թե շատ արժանապատիվ գոյության համար։ Այդ պայքարում կիրառելի են բոլոր միջոցները (մարդիկ այդ ընթացքում, ի դեպ, հաճախ հրաշալի հնարամտություն են դրսևորում)։ Փոքր, միջին ու մեծ, նույնիսկ կազմակերպված հանցագործությունների դրդապատճառը հիմնականում դիմադրությունն է անիրավ ու անարդար համակարգին։ Անիրավ համակարգի ու այդ համակարգի նախաձեռնողների դեմ անզոր գտնվելով, հաճախ էլ չհասկանալով իրենց դժբախտությունների իրական պատճառը, նաև անտեղյակ որևէ այլ՝ ավելի լավ, համակարգից, մարդկանց զանգվածները հարձակվում են որտեղ անպաշտպան է կամ քիչ պաշտպանված։ Հաճախ էլ ցավոք՝ իրար վրա։

Քանի դեռ չի վերացել անիրավ համակարգը՝ մարդկանց վրա կազմակերպված ու հանցագործ դավադրությունը՝ կապիտալիզմը, հանցագործությունների հինգերորդ խմբի բուն պատճառը, ապա դեռ երկար ստիպված կլինենք գործ ունենալ հանցագործությունների խնդրի հետ: Հետևաբար ոչ մի հույս չի կարելի տածել, թե երբևէ կվերանա հանցագործությունը: Կամ թե դատապարտվածները որևէ կերպ կդաստիարակվեն, լինի դա պատժամիջոցների, թե համոզելու միջոցով: Հանցագործությունների հինգերորդ խմբի խնդիրը լուծելու համար հարկավոր է վերացնել դրա բուն պատճառը՝ կապիտալիզմը՝ մի խումբ մարդկանց կողմից մնացածի լեգալացված կողոպուտը:

Նկատենք, որ հանցագործությունների այս խումբն աճում է կապիտալիզմի սաստկացմանը համաչափ: Այլ կերպ ասած՝ հարուստների ու աղքատների, ունևորների ու չունևորների տարբերության մեծացմանը, մի փոքր խումբ հարուստների ձեռքում ուժի ու հարստության կենտրոնացմանը զուգընթաց, ճնշվածների իրավունքների սահմանափակումներին համաչափ:

Պետք է նկատենք նաև, որ հանցագործությունների հինգերորդ խումբը համարյա գոյություն չուներ կապիտալիզմից առաջ, գոնե ներկայիս ծավալներով: Ճիշտ է, և՛ ստրկատիրությունը, և՛ ճորտատիրությունը կապիտալիզմի ձևեր են՝ երկու համակարգին էլ ներհատուկ մարդու կողմից մարդու շահագործմամբ, սակայն ճնշվածների դիմադրությունն այսքան սաստիկ ու անողոք չէր, ինչ ներկայումս: Բայց դա նրանից չէր, որ ստրուկները համակերպված էին իրենց իրավիճակի հետ կամ տեղյակ չէին ավելի լավ իրավիճակից, ազատություններից և այլն: Դա նրանից էր, որ ստրուկների կարիքների մասին հոգացող կար: Ստրկատերը հոգ էր տանում իր ստրուկների մասին, որովհետև նրանց ձեռք բերելու համար նա բավականին գումար էր վճարել կամ, սեփական կյանքը վտանգելով, զենքը ձեռքին կռիվների էր մասնակցել: Այսպիսով, ստրուկների մասին հոգացող կար: Ստրկատերն ապահովում էր նրանց սնունդը, հագուստը, կացարանն ու բուժ սպասարկումը:

Ստրկատերն իհարկե շահագրգռված էր իր ստրուկներին կուշտ ու առողջ պահել, նաև՝ ապահովել նրանց բազմացման համար նպաստավոր պայմաններ։

Անցումը ստրկատիրությունից դեպի կապիտալիզմ պրագմատիկ քայլ էր միայն։ Կապիտալիզմի պայմաններում տերերն այլևս պարտավոր չեն հոգալ իրենց աշխատողների կարիքները, ապահովել նրանց սննդով, հագուստով, կացարանով ու բուժ սպասարկմամբ։ Հիմա աշխատավորներն իրենք պիտի հոգան իրենց կարիքները։ Բայց ամենագրգիռավորն այն է, որ ներկայիս տերերը պարտավոր չեն նախօրոք վճարել՝ աշխատողներ ձեռք բերելու համար։ Աշխատողներն իրենք են բախում նրանց դռները՝ աշխատանք աղերսելով։ Աշխատանք աղերսողների երկար հերթերը նախ մրցակցություն են առաջացնում հենց իրենց շարքերում, հետո՝ առաջարկ-պահանջարկի օրենքով ցածրացնում են աշխատավարձերը։ Ու հաճախ, աշխատանք ստանալով, մարդիկ շատ գոհ են ու շնորհակալ, որովհետև կարող էին և չունենալ այն։ Նրանք նաև իրենց աշխատանքը կորցնելու անընդհատ վախի մեջ են։ Դաժան կապիտալիստական պայմաններում մարդիկ աշխատանքը կարող են կորցնել հաշված վայրկյանների ընթացքում։

Սակայն սոցիալիստական ուղղվածության երկրներում այնքան էլ հեշտ չէ աշխատողին ազատել աշխատանքից։ Այդ երկրներում կա նաև սոցիալական ապահովության ընդարձակ համակարգ, որը հոգում է աշխատանքից ազատվածի ընտանիքի կարիքները։ Հետևաբար սոցիալիստական ուղղվածության երկրներում հանցագործության մակարդակն ավելի ցածր է, քան խիստ կապիտալիստական երկրներում։

Ինչևէ, վերը ներկայացված հանցագործությունների հինգերորդ խումբը ծնվում է կապիտալիզմի հետ և խորանում կապիտալիզմին ներհատուկ անողոքության, ճնշվածների ազատությունների ու իրավունքների սահմանափակումների, նաև՝ հարուստների ու աղքատների միջև տարբերության աճին զուգընթաց։

Հաշվի առնելով, որ կապիտալիզմը ենթադրում է մրցակցություն, հետևաբար՝ հակամարտություն ու թշնամանք հասարակության բոլոր շերտերի միջև, ոչ միայն հարուստների ու աղքատների միջև, ապա պատկերն ավելի ամբողջական ու պարզ կդառնա։

©Դավիթ Միրզոյան, Հունվար, 2013
www.davitmirzoyan.com

ՍԻՐԱՀԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԿՐԱՆՔ, ՍԵՐ

Սկսենք Սիրուց։ Սերը հոգեհարազատ էակի կարոտն է։ Այն, ինչին սովորաբար սեր ենք ասում, իրականում հոգեհարազատ էակի կարոտն է։

Ամեն մարդ մեկ այլ հոգեհարազատ էակի կարիքն ունի՝ առանց որի անիմաստ ու անպտուղ է նրա կյանքը։ Մարդ անընդհատ փափագում, տենչում ու փնտրում է նման էակի։ Հոգեհարազատ էակի տենչը կարող է այրել մարդու սիրտը, նույնիսկ, երբ դեռ չկա այդպիսի էակ։ Հոգեհարազատ էակի բացակայությունը մարդուն մատնում է անտանելի տառապանքների ու հաճախ մղում սխալների՝ անարժան մեկի մեջ տեսնել այն էակին, որին տենչում է մարդու սիրտը։

Հոգեհարազատ էակի երկարատև ու անպտուղ փնտրտուքները կարող են որոշ ժամանակով մարել այդ տենչը, բայց մի թեթև առիթի դեպքում այն բորբոքվում ու ափերից դուրս է հորդում՝ անկախ տարվա եղանակից։ Հոգեհարազատ էակի կարոտը կարող է նույնիսկ խելագարության հասցնել, երբ այդ էակը կա, բայց հեռու է տարածության ու ժամանակի մեջ։ Մանավանդ, երբ անհայտ է հանդիպման պահը կամ՝ հնարավորությունը։

Նույնիսկ, եթե երկու հոգեհարազատ էակների միջև անմիջական շփում կա, միևնույն է, կարոտն էլի առկա է։ Երկու հոգեհարազատ էակներ կարիք ունեն մեկը մյուսի մեջ մտնելու, միաձուլվելու, դառնալու մեկ ամբողջություն։ Եվ քանի որ դա ֆիզիկապես անհնար է, ապա նույնիսկ, երբ երկու հոգեհարազատ էակներ անմիջական շփման մեջ են, միևնույն է՝ չի մարում այդ կարոտը։

Հոգեհարազատ էակի կարոտն ու այդ կարոտով պայմանավորված վարքը սիրել որակելով՝ կարծում եմ վարկաբեկում ենք այդ վեհ զգացմունքը։ Սիրել հիմնականում նշանակում է շոյել, փայփայել և այլն։

Սերը, կամ ավելի ճիշտ՝ կարոտը, հակառակ սեռի երկու հոգեհարազատ էակների միջև նրանց գենետիկ էության ու արժեհամակարգերի վրա հիմնված և խորապես գիտակցված ընտրություն է, որն երևում է միմյանց հանդեպ ուշադրության, հոգատարության, խնամքի ու ինքնազոհաբերության պատրաստակամության մեջ։

Համակրանքի փուլում մարդը, հավատի պես, միայն նախնական, ոչ լրիվ, ոչ ամբողջական, պատկերացում ունի հակառակ սեռի էակի էության մասին։ Երբ նախնական պատկերացումները վերաճում են ամուր գիտելիքի, համակրանքն էլ վերաճում է կամ սիրո, եթե հաստատվում են նախնական պատկերացումները, կամ՝ հակակրանքի, եթե չեն հաստատվում։

Սիրահարվածությունը հակառակ սեռի էակի հանդեպ կույր հրապուրանքն է։ Հիմնականում՝ սեռական։ Կարող է սակայն լինել ինտելեկտուալ, կամ՝ երկուսը միասին։ Սիրահարվածությունն այդպես կույր վիճակում կարող է պահպանվել շատ երկար ժամանակ, նույնիսկ մնալով անպատասխան։

Նկատենք սակայն, որ կարոտն, անպատասխան մնալով, միանգամից անհետանում է։ Այսինքն, երբ պարզվում է, որ նա, ում հանդեպ որ համակրանք կամ նույնիսկ բուռն

հետաքրքրություն կար, բոլորովին էլ այն հոգեհարազատ էակը չէ, ապա կարոտն անմիջապես անհետանում է։ Ինչո՞ւ։ Որովհետև սերը, ավելի ճիշտ՝ կարոտը, հակառակ սեռի մարդկանց միջև շատ խորքային, հիմնականում արժեհամակարգային, բայց նաև գենետիկ բաղադրիչների համապատասխանության վրա հիմնված ընտրություն է։ Այդ բաղադրիչների ցանկացած անհամապատասխանություն հակասություն ու հակամարտություն է ծնում։ Որն էլ բերում է կարոտի բացակայության։

Նկատենք նաև, որ շարունակական հիասթափությունները կարող են սպանել մարդու մոտ հոգեհարազատ էակ գտնելու վերջին հույսը, գուցե նաև՝ ընդհանրապես հավատը մարդկության հանդեպ։ Սա է պատճառը, որ հիասթափությունից վախենալով, չենք ուզում լավ ճանաչել նրան, ում հանդեպ որ հետաքրքրություն, նույնիսկ համակրանք ունենք։ Շատ անգամ չենք ուզում խոստովանել մեր սերը՝ կարոտը, այն մտավախությամբ, որ եթե մերժվենք, ապա կանհետանա այն, կդառնա ևս մի հիասթափություն ու այդպիսով մեզ ավելի կմոտեցնի մեր հոգևոր վախճանին։

©Դավիթ Միրզոյան, Մարտ, 2013
www.davitmirzoyan.com

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Նկատում ենք, թե՝ ոչ, բոլորս էլ մի մեծ դիմակահանդեսի մասնակիցներ ենք։ Թե՛ ներսում՝ տանը, թե՛ հատկապես դրսում՝ աշխատանքի վայրում, փողոցում և այլն։

Բոլոր հասարակություններն այս կամ այն չափով դիմակակիրներ են։ Բայց մեր դիմակները տարբեր են՝ կախված անհատի կամ հասարակության արժեքների համակարգից։ Արևմտյան՝ «քաղաքակիրթ», երկրներինը, օրինակ, նման չէ մերին՝ զուտ հայկականին։ Բայց, թերևս,

սկսենք անհատական դեպքերից։

Մարդիկ սովորաբար դիմակ են կրում երկու հիմնական պատճառով. կամ սեփական անձի հանցագործ էությունը քողարկելու, դիմացինի զգոնությունը թուլացնելու ու նրան խոցելի դարձնելու համար, նրանից նյութական կամ այլ տեսակի շահ հետապնդելով, կամ շրջապատող մարդկանց ոտնձգություններից պաշտպանվելու համար։

Կան իհարկե բազմաթիվ միջանկյալ ու բաղադրյալ պատճառներ ու հետևաբար՝ դիմակներ, բայց պարզության համար տարբերենք միայն վերոնշյալ երկուսը։ Ուրեմն կախված մեր անձի էությունից, մեր դիմակները տարբեր են։ Ոմանք այն կրում են իրենց անիրավ ու դաժան էությունը, միտումներն ու ծրագրերը քողարկելու, իսկ մյուսները՝ ինքնապաշտպանության մղումով՝ իրենց արդարամիտ, հետևաբար խոցելի էությունը քողարկելու համար։

Ու այս ամենը կատարվում է ենթագիտակցաբար, հաճախ աննկատ՝ նույնիսկ սեփական գիտակցությունից։ Ու մանավանդ, երբ դիմակի ձևավորման գործընթացը սկսվել է փոքր տարիքում, դեմքն ու դիմակն այնքան խորն են սերտաճում, որ շատ հաճախ անհնար է տարբերել դիմակը դեմքից։ Հաճախ նույնիսկ դեմք էլ չկա։ Կա միայն դեմքի ու դիմակի սերտաճ։ Երբեմն այդ սերտաճն այնքան խորն է, որ նույնիսկ «վիրահատական» միջոցներն են անզոր։ Երբեմն նման սերտաճը հնարավոր է հեռացնել միայն գլխի ու իրանի վերին մասի հետ միասին։

Ուրեմն կախված անհատի էությունից ու միտումներից, դիմակները տարբեր են։ Մեծ մասշտաբով նույն բանը կատարվում է հասարակությունների հետ՝ կախված նրանց արժեքների համակարգից։ Այլ կերպ ասած, եթե հասարակության արժեքների համակարգն ու ազգաբնակչության ներքին էությունը չարն ու անիրավ են, ապա հասարակությունն ընդհանուր առմամբ կրում է բարի ու քաղաքակիրթ դիմակ՝ միմյանց զգոնությունը թուլացնելու ու միմյանցից նյութական կամ այլ տեսակի շահ կորզելու նպատակով։

Իսկ, երբ հասարակության արժեքների համակարգն ու ազգի գենետիկ էությունը բարի ու արդարամիտ են, իսկ ողջ հասարակությանը պարտադրվել են դաժան կապիտալիստական՝ մրցակցային, թշնամական փոխհարաբերություններ, ապա հասարակությունն ընդհանուր առմամբ ստիպված է ինքնապահպանման մղումով կրել խայտաբղետ դիմակներ՝ չար ու անիրավից մինչև կեղծավոր ու մոլորեցնող։

Առաջին դեպքը նկարագրական է արևմտյան կապիտալիստական, «քաղաքակիրթ» երկրներին։ Իրենց դաժան արժեհամակարգն ու փոխհարաբերությունները քողարկելու նպատակով՝ այդ հասարակությունները հիմնականում կըրում են քաղաքակիրթ դիմակներ։ Բարի ու անկաշառ մարդկանց գոյությունն իհարկե բացառված չէ ոչ մի հասարակությունում։ Խոսքն ընդհանուր երևույթի մասին է։

Երկրորդ դեպքը նկարագրական է մեր՝ հայկական, իրականությանը։ Ի սկզբանե լինելով արարչագործ ու բարի ազգ՝ մեզ պարտադրվել են դաժան կապիտալիստական, մրցակցային փոխհարաբերություններ, ուր մարդու գոյությունը կախված է դիմացինին ճնշելուց, սնանկացնելուց, նույնիսկ՝ ոչնչացնելուց։ Այս պայմաններում մի կողմից մեր ներսի բարի ու արդարամիտ էությունն է աղաղակում, մյուս կողմից՝ դրսի դաժան պայմաններն են ճնշում։ Մենք էլ՝ ինքնապահպանման բնազդով, ընտրում ենք ենթարկվել դրսի ճնշմանը։ Ու տարբեր դիմակներ դրած մտնում ենք մրցակցային պայքարի, այլ կերպ ասած՝ գզվռտոցի մեջ միմյանցից պատառ խլելու համար, ընդհանրապես միմյանցից նյութական կամ այլ տեսակի շահ հետապնդելով։

Ցավոք կատարվում է անխուսափելին։ Մեր դիմակները գնալով ավելի ու ավելի խորն են սերտաճում մեր դեմքի հետ։ Ու մի որոշ ժամանակ անց գուցե անհնար լինի անջատել մեկը մյուսից։ Մարդկանց էությունն անդառնալիորեն կփոխվի։ Այ սա է, որ խորապես անհանգստացնում է աղնվաբարո մտավորականներին։ Այ սա է պատճառը,

որ հաճախ ասում ենք՝ «ժամանակ չկա»։

Այս հրեշավոր գործընթացը կասեցնելու և իրավիճակը փոխելու համար հրամայական է կապիտալիստական, մըրցակցային փոխհարաբերությունների վերացումը։ Բայց այն ոչ ոք մեզ համար չի անի։ Ոչ էլ կարելի է հույս դնել մեզնից դուրս որևէ հրաշքի աղբյուրի վրա։ Միակ անողներն ու հրաշքի աղբյուրը մենք ենք։

Այնպես, ինչպես անհատն է ի զորու վերափոխել սեփական էությունն իր իսկ գիտակցության ուժով, այնպես էլ ողջ հասարակությունն է ի զորու փոխել իր էությունն ու ողջ մարմնի էկոլոգիան։ Հասարակության դեպքում այդ գիտակցության դերն ու գործը պատկանում է ազգի մտավորականությանը, քանի որ ազգի մտավորականությունն է ազգի գլուխը՝ միտքն ու խիղճը։ Ճիշտ է՝ մարմինը հաճախ չի լսում իր գլխին, խլացնում է խղճի ձայնը և այլն։ Բայց, եթե այդ ձայնը բարձր է, համոզիչ ու համառ, մարմինն, ի վերջո, կենթարկվի։ Չի կարող չենթարկվել։ Մեծ դժվարությամբ, բայց կենթարկվի։

Հասարակությանը կարելի է համեմատել բուրգի հետ, որի գագաթում նրա գաղափարակիրն է։ Գաղափարակիրն ամեն ջանք ներդրած ձգտում է բարձրացնել հասարակությանը, իսկ հասարակությունը ծուլորեն ու դժկամությամբ է հետևում նրան՝ հիմնականում բալաստի նման ներքև քաշելով։ Ավա՜ղ, միայն գաղափարակրի մահից հետո է, որ հասարակությունն ընդհանուր առմամբ մի չնչին քայլ դեպի վեր է բարձրանում՝ հետո էլի դեպի ներքև գահավիժելու համար, մինչև չգա մի նոր գաղափարակիր ու տիտանական ջանքեր չգործադրի՝ հասարակությանը կործանումից հանելու ու դեպի վեր ձգելու համար։

©Դավիթ Միրզոյան, Մարտ, 2013
www.davitmirzoyan.com

ՄԵՐ ՀԱՆՐԱՀԱՅՏ ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԳԶՎՌՏՈՅԻ ՊԱՏՃԱՌԸ

Գուցե պետականության երկար բացակայությո՞ւնն է պատճառը, գուցե՝ օտարների դարավոր լո՞ւծը, գուցե՝ անընդհատ պատերազմնե՞րը, գուցե՝ կրոնական կամ այլ բնույթի, ասենք օրինակ՝ հարևան ազգերի մշակութային ազդեցությունն՝ե՞րը: Բայց գուցե կա ավելի՞ խորքային պատճառ: Թերևս սկսենք սկզբից ու հերթով:

Մենք բոլորս, մեր ամենաականավոր մտածողները ներառյալ, նկատել ու դեռ շարունակում ենք դիտարկումներ կատարել այս ամոթալի երևույթի առնչությամբ: Ցավոք, դիտարկումներից ու դժգոհություններից դեռ շատ առաջ չենք գնացել: Հայտնի են Հովհաննես Թումանյանի, Դերենիկ Դեմիրճյանի և այլոց դիտարկումները: Թումանյանը հատկապես շատ դիպուկ է նկարագրել մեր միմյանց հանդեպ չկամությունը, ընդհանուր չարացածությունը, նախանձը, միմյանց խանգարելու, վատաբանելու, վարկաբեկելու, նվաստացնելու, պատկերավոր ասած՝ միմյանց մեջքի դանակ խփելու, տակ փորելու «մշակույթն» ու այլ արատավոր երևույթներ: Թումանյանը մասնավորապես բերում է երկու վաճառական ընկերների օրինակը, երբ մեկի գործերը լավ են գնում, իսկ մյուսինը՝ վատ: Նա, ում գործերը որ վատ են գնում, մտատանջությունների մեջ է ընկնում ավելի շատ ոչ թե նրանից, որ իր գործերն են վատ գնում, այլ, որ իր ընկերոջ գործերն են լավ գնում: Նա անքուն գիշերներ է անցկացնում՝ խեղդվելով սեփական մաղձի մեջ, նույնիսկ հիվանդանում է և այլն:

Թումանյանն ընդհանուր առմամբ մեր ազգին բնութագրում է՝ որպես «փչացած» ազգ: Սակայն, չխորանալով պատճառների մեջ, սահմանափակվում է միայն դիտարկումներով: Թումանյանի պես շատ շատերս հիմնականում հանդես ենք գալիս միայն դիտարկումներով, երբեմն էլ՝ համապատասխան որակումներով, նույնիսկ՝ ճոխ ու նկարագրական էպիտետներով: Մեզնից ոմանք երևույթի դիտարկումներից հետո երբեմն հարցնում են՝ «ի՞նչն է պատճա-

ոը, ինչո՞ւ ենք այսպիսին»։ Բայց միայն շատ քչերն են փորձում պատասխան գտնել։ Ցավոք նրանց եզրահանգումները սովորաբար փոխաբերություններ են՝ «դառնություն տեսած ժողովուրդ ենք», կամ՝ «օտարի լծի տակ կքալուց ենք դառնացել, չարացել», կամ մի փոքր ավելի վերլուծական՝ «մեր պետականությունը կորցնելուց է»։

Մի կողմ թողնենք փոխաբերական բացատրությունները։ Դրանք դիտարկումների աստիճանի արժեք ունեն։ Անցնենք պետականությունը կորցնելու փաստարկին։ Պետականությունը կորցնելը կարծես ընդունելի ու ծանրակշիռ փաստարկ է։ Սակայն նկատենք, որ հենց մեր պետականություն ունենալու ժամանակաշրջանում պատմագրությամբ փաստված անվերջ, երբեմն բացահայտ թշնամանքի հասնող գզվռտոցներ են եղել փոխադարձաբար մեր արքաների, իշխանական տների ու հոգևոր դասի միջև, որոնք էլ ի վերջո հանգեցրել են մեր պետականության կորստին։ Արքայական, իշխանական ու կրոնական խավերի միմյանց միջև հակամարտությունից բացի ընդվզումներ են եղել մի կողմում եկեղեցու ու եկեղեցուն սատարող որոշ իշխանական տների, իսկ մյուս կողմում՝ հայ շինականների միջև։ Գուցե հենց եկեղեցու սպասավորների միջև էլ գզվռտոցներ են եղել՝ աթոռի տիրանալու համար... Պատմագրությունը շատ տեղեկություններ չի թողել հասարակության ստորին շերտերում տարածված գզվռտոցների մասին մինչև XIX դարի վերջին քառորդը։ XIX վերջի ու XX դարի սկզբի հայ գրականությունը լի է ներազգային գզվռտոցների նկարագրություններով։ Այդ ժամանակաշրջանի ներազգային հարաբերությունների մասին պատկերացում կազմելու համար բավական է կարդալ Թումանյանի, Սունդուկյանի, Շիրվանզադեի, Պարոնյանի, Զոհրաբի և այլոց գործերը։ Ենթադրություն չանենք, թե մեր դասականների նկարագրած ներազգային գզվռտոցի «մշակույթն» ավելի խորը գնացող պատմություն ունի, տրամաբանական փաստարկ բերելով միայն, թե մշակույթի մեջ որևէ փոփոխություն մի ակնթարթում չի կատարվում, հետևաբար՝ մեր ներազգային գզվռտոցը խորը գնացող

արմատներ ունի։ Մեզանում XIX դարի վերջի ու XX դարի սկզբի ներազգային գզվռտոցի մշակույթը վերագրենք այդ ժամանակաշրջանում մոլեգնող կապիտալիզմին, որն, ի դեպ, անհիմն չէ։ Կապիտալիզմն, ըստ էության անտագոնիստական կացութաձև է՝ մրցակցություն, հետևաբար հակամարտություն ու թշնամանք է ենթադրում հասարակության ներսում։ Նկատենք միայն, որ ուրիշ ազգերի մոտ, ուր կապիտալիզմը մտավ միևնույն ժամանակ, ինչ մեզ մոտ, ներազգային գզվռտոցի նման սրություն չծագեց, ինչ մեզանում։ Ուրեմն ներազգային գզվռտոցը մեզանում այլ պատճառներ ունի։

Չհեռանալով պետականության կորստի փաստարկից՝ նըկատենք, որ պետականությունը կորցրած ուրիշ ազգեր, ասենք, օրինակ՝ հրեաները, որոնք մեզնից կրկնակի երկար են ապրել առանց պետականության, նույնիսկ՝ առանց հայրենիքի, ցրված ուրիշ ազգերի ու ժողովուրդների մեջ, չնայած իրենց երկու հազար տարվա տարագրությանը, կարողացել են հաջողությամբ պահպանել անգերազանցելի միասնականություն, նույնիսկ բարգավաճել ու հզորանալ այն աստիճան, որ համաշխարհային թոհ ու բոհի մեջ առաջատար դիրք գրավելով ողջ աշխարհում, ի վերջո կարողացան վերականգնել իրենց պետականությունն ու տարածքները։ Փաստորեն հրեաների օրինակը ցույց է տալիս, որ պետականության կորստի փաստարկը ոչ մի արժեք չունի։ Ի հավելում, աշխարհում դեռևս կան շատ ուրիշ ազգեր ու ժողովուրդներ, որոնք չունեն պետականություն ու երբեք էլ չեն ունեցել, որը սակայն ոչնչով չի խանգարել նրանց ունենալ իրենց ուրույն ազգային նկարագիրն ու պահպանել նախանձելի միասնականություն։ Ամեն դեպքում, պետականության բացակայությունն այդ ազգերին չի հասցրել ներազգային գզվռտոցի, ներազգային թշնամանքի ու դրան հետևող կենտրոնախույս մղումների ու արտագաղթի։ Այդ ազգերից ոմանք ներկայումս նույնիսկ պետականություն ստեղծելու փորձեր են անում։ Օրինակ՝ քրդերը։

Սակայն պետականությունը կորցնելու փաստարկի կողմ-

նակիցների դատողություններն ամբողջովին անհիմն չեն։ Նրանք պարզապես շփոթում են պետականությունն ու պետությունը, չնկատելով, որ դրանք միմյանցից շատ տարբեր բաներ են։ Պետականությունն օտար արժեհամակարգի վրա հիմնված իշխանական կառույցն է, իսկ պետությունը՝ ազգային ոսմունքի վրա հիմնված պետական կառույցը։ Հետևաբար պետությունն իր օրենքների համակարգով ու օրինապահ մարմիններով հանդերձ ազգային ոսմունքի՝ ազգային արժեհամակարգի, ամենահուսալի կրողը, կիրառողն ու պահապանն է։ Պետության կամ նրա օրինապահ մարմինների կորուստը, թուլությունը կամ անգործությունը սովորաբար բերում են օրենքների ոտնահարման, հետևաբար՝ ազգային արժեքների, հետագայում նաև՝ ազգային մշակույթի աստիճանական մարման ու անհետացման։ Մշակույթի բացակայությունն էլ մարդուն հետ է վերադարձնում իր գազանային վիճակին, որին էլ հատուկ է գզվռտոցն ու թշնամանքը։

Հաշվի առնելով հրեաների ու մյուս ժողովուրդների օրինակը, պետք է ընդունենք, որ պետությունն ազգային ոսմունքի, ազգային արժեհամակարգի միակ հնարավոր կրողը չէ։ Վերը նշված ժողովուրդների, հատկապես՝ հրեաների, օրինակը ցույց է տալիս, որ պետական կառույցի բացակայության դեպքում ազգային ոսմունքի կրողը, կիրառողն ու պահապանը դառնում է հոգևոր դասը։ Հրեաների, նաև մյուս ազգերի օրինակներում հենց հոգևոր դասն է պահել ու պահպանել իրենց ազգային ոսմունքը, մշակույթն ու հետևաբար՝ ազգի միաբանությունը։ Բայց առանց օրինապահ մարմինների առկայության դժվար է պատկերացնել որևէ ժողովրդի կամավոր ենթարկվելը թեկուզ սեփական ոսմունքի դրույթներին, մանավանդ, երբ այդ դրույթները հակասում են մարդու եսակենտրոն էությանը։ Կրոնի կողմից ազգային արժեհամակարգի պրոպագանդման ու կիրառման պարագայում օրինապահ ուժերի դերը, որպես կանոն, կատարել է աներևույթ, անհաս, ամենատես, ամենակարող ու անողոք մի ուժ՝ իր երկրային սպասավորների՝ ազգի «հոգևոր առաջնորդների»՝ կրոնավորների օժանդակությամբ։

Հաշվի առնելով մեզանում ներազգային գզվռտոցի ամոթալի երևույթի համառ առկայությունը՝ բնականաբար հարց կառաջանա՝ մի՞թե մենք ո՛չ պետություն ունենք, ո՛չ էլ՝ հոգևոր դաս: Դժբախտաբար, այո, չունենք: Բայց մեր իրավիճակն ավելի ծանր է: Մենք նաև ազգային ուսմունք չունենք: Մեր երկրի իշխանական կառույցը ոչ միայն ապազգային, օտար արժեհամակարգերի՝ ժողովրդավարության ու կապիտալիզմի, նաև՝ արևմտյան լիբերալիզմի, կրողն ու կիրառողն է, այլ նաև իր օրինապահ մարմինների օժանդակությամբ իշխանական թևի նեղ անձնական, անարդար շահերի ու նկրտումների պաշտպանը:

Նմանապես մեր հոգևոր դասը ոչ միայն օտար, թերի ու խեղաթյուրված ուսմունքի ու արժեհամակարգի կրողն ու պրոպագանդողն է, այլ նաև իր ճիզվիտային ողջ կառույցով ու «Աստծո հովանավորությամբ» եկեղեցու և կրոնավորների նեղ անձնական շահերի պաշտպանը: Այն նաև ժողովրդին խավարի մատնելու միջոցով բոլորի վրա բացարձակ իշխանության հասնելու նպատակ ունի: Փաստորեն, մենք ո՛չ ազգային ուսմունք ունենք, ո՛չ ազգային ուսմունքի կրող ու պահապան իշխանական կառույց, ոչ էլ՝ ազգային ուսմունքի կրող ու պահապան հոգևոր դաս:

Բայց նկատենք, որ նման իրավիճակ առկա է համարյա բոլոր, մանավանդ քրիստոնյա ժողովուրդների մոտ: Նրանց մոտ ևս, պետությունը կապիտալիստական անողոք ու տմարդի արժեքների, նաև ժողովրդավարության կրողն ու կիրառողն է, իսկ եկեղեցին՝ նույն խեղաթյուրված քրիստոնեական արժեհամակարգի կրողն ու պրոպագանդողը: Սակայն ո՛չ եվրոպական, ո՛չ էլ նման իրավիճակում հայտնված մյուս ժողովուրդների մոտ ներազգային գզվռտոցի այնպիսի սրություն չկա, ինչ մեզանում: Նրանց մոտ, իհարկե, ներազգային հակամարտությունը մեղմող տարբեր գործոններ են առկա, սակայն սույն հոդվածի ուղղվածությունը չխճճելու համար, դրանց հիմա չենք անդրադառնա: Այս հոդվածի նպատակն ընթերցողին առանցքային դիտարկումների միջոցով արագորեն դեպի մեզանում տիրող խնդրո առարկա երևույթի բուն պատճառը

ներկայացնելն է։

Բարեբախտաբար, բացի իշխանական ու կրոնական կառույցներից, արևմտյան, քաղաքակիրթ երկրներում, նաև՝ մեզանում, կա մի երրորդ ուժ՝ մտավորականությունը՝ ազգի գլուխը, միտքն ու խիղճը, ինչպես ասում են։ Մանավանդ մեզանում հենց մտավորականությունն է եղել առաջին հերթին ու գլխավորապես մեր ազգային արժեհամակարգի ու մշակույթի միակ պոտենցիալ կերտողը, կրողը, պահապանն ու սերմնացանը։ Մեզանում, որպես կանոն, մտավորականության կերտած արժեքներով է կրթվել ու դաստիարակվել ամեն նոր սերունդ։

Սակայն, հաշվի առնելով մեզանում ներազգային գզվռտոցի ամոթալի երևույթի շարունակական, նույնիսկ սաստկացող առկայությունը, բնականաբար հարց կառաջանա՝ մի՞թե մտավորականություն ևս չունենք։ Դժբախտաբար, այստեղ ևս, մեղմ ասած, շատ պարծենալու տեղ չունենք։ Մեզանում անհատ մտածողներ իհարկե եղել են, բայց, այո՛, մտավորականություն չենք ունեցել ու հիմա էլ դեռ չունենք։ Մտավորականությունն, ինչպես ասվեց, ազգային ուսմունքի կերտողը, կրողն ու սերմնացանն է ազգի մեջ։ Ու քանի որ մենք մինչև հիմա դեռ չունենք մեր ազգային ուսմունքը, ապա ո՛չ մտավորականություն ենք ունեցել, ո՛չ էլ մտավորական։ Ունեցել ենք իհարկե արվեստագետներ, փիլիսոփաներ, գրողներ, պատմաբաններ և այլն, բայց ազգային ուսմունքի վերականգնման խնդիրներով նրանցից ոչ մեկը չի զբաղվել։ Նրանք փոխարենը զբաղվել են միայն արևմտյան արվեստի ու արժեքների ուսումնասիրությամբ ու զարգացմամբ, միաժամանակ հմայված հատկապես ժողովրդավարության ու կապիտալիզմի օտար «արժեքներով»։ Հետևաբար, անկախացում ստանալուց հետո մենք ուրիշ ընտրություն չէինք կարող ունենալ՝ բացի ժողովրդավարությունից ու կապիտալիզմից, նաև՝ արևմտյան արվեստի ու փիլիսոփայության լիբերալիզմից։ Մեր ականավոր մտածողներից թերևս միայն Թումանյանն է կռահել ազգային ուսմունքի գոյության մասին, փորձեր արել գրտնելու այն, բայց դժբախտաբար որևէ կոնկրետ բացահայ-

տում չի թողել։ Թումանյանի ստեղծագործություններում, չնայած կան որոշ ակնարկներ մեր ազգային ոսմունքի որոշ հիմնարար դրույթների մասին, բայց ողջ հայ գրականությունը զուրկ է մեր ազգային արժեհամակարգի՝ մեր ազգային ոսմունքի, մասին որևէ հիշատակումից։

Ինչպես ասվեց վերևում, ոսմունքի, մշակույթի, առաքինի արժեհամակարգի բացակայությունն ազգին հետ է վերադարձնում իր գազանային վիճակին, որին էլ հատուկ է մրցակցությունը, հակամարտությունը, թշնամանքը, նույնիսկ՝ գզվռտոցը։ Բայց մի՞թե մեր գրականությունը միանգամայն զուրկ է որևէ առաքինի արժեքի ներկայացումից, կամ գուցե բավարար նյութ չի՞ ապահովել ժողովրդի մեջ առաքինի մշակույթ ձևավորելու համար։ Ցավոք, մեր հայ դասական գրականության մեջ գերակշռում են դաժան կապիտալիզմին հատկանշական անողոք պատմություններ, խեղված, ստորակարգ փոխհարաբերություններ ու տմարդի կերպարներ, խաչագողերից սկսած մինչև «Զիմզիմով»-ներն ու «Զամբախով»-ները։ Ու ցավալիորեն սրանց կողքին չկան օրինակելի կերպարներ ու փոխհարաբերություններ։ Լավագույն դեպքում կան միայն խեղճ ու կրակ զոհեր։ Մեր դասականների միտումն, իհարկե, տմարդի կապիտալիստական փոխհարաբերությունների մահաբեր դեմքը ներկայացնելն է եղել, որն իհարկե լիովին հասկանալի է ու ամենևին ենթակա չէ որևէ քննադատության, բայց, ցավալիորեն՝ բացի Աբովյանի Աղասուց, նրանց ստեղծագործություններում չկան ժամանակակից հայի անձնվեր, օրինակելի կերպարներ ու փոխհարաբերություններ։ Ցավոք միայն պատմավեպերում կարելի է հանդիպել անձնվեր ու օրինակելի կերպարներ։ Ընդհանուր առմամբ հայ դասական գրականության մեջ չի եղել ու դեռ չկա մեր ազգային արժեհամակարգն ու մշակույթը ներկայացնող վեպ կամ պատմվածք, չի եղել ու դեռ չկա օրինակելի փոխհարաբերությունների կամ կացութաձևի նկարագրություն, կամ գոնե՝ ժամանակակից հայի օրինակելի կերպար։

Բայց նկատենք, որ գրականության մեջ օրինակելի փոխ-

հարաբերությունների ու կերպարների սակավությունը հայկական երևույթ չէ միայն։ Համաշխարհային գրականությունը՝ բացառությամբ Թոմաս Մորի, Ֆրենսիս Բեկոնի, Թոմաս Կամպանելայի, մյուս ուտոպիստ-սոցիալիստների ստեղծագործությունների ու առաջին հերթին՝ հնդարիական դիցաբանության, չի պարունակում օրինակելի հասարակությունների կամ գոնե օրինակելի փոխհարաբերությունների ու կերպարների բավարար նկարագրություն՝ մարդկանց մոտ առաքինի մշակույթ ձևավորելու համար։ Նկատենք նաև, որ վերը նշված բացառություններն ամեն կերպ պախարակված կամ մոռացության են մատնված արևմտյան աշխարհում։ Այս երևույթի դիտավորությունը բացահայտելն ու քննարկելը նույնպես չի մտնում ներկայացվող վերլուծության շրջանակների մեջ։ Նկատենք միայն, որ նույն հրեաներին, կամ մյուս ազգերին ու ժողովուրդներին համաշխարհային գրականության մեջ օրինակելի հասարակությունների, օրինակելի փոխհարաբերությունների ու գրական, օրինակելի կերպարների նույն սակավությունը, որոշ ազգերի մոտ նույնիսկ սեփական գրականության բացակայությունը, ամենևին չի խանգարել ու չի խանգարում համախմբված ու միաբան ազգ լինել։ Ամեն դեպքում նրանց մոտ նույնպիսի ներազգային գզվռտոց չի ծնել, ինչ մեզանում։

Այդ դեպքում ո՞րն է մեզանում ներազգային գզվռտոցի պատճառը։ Անհրաժեշտություն կա ավելի մանրամասն ու առավել խորությամբ զննել այս ամոթալի երևույթը, հասկանալու համար, թե ինչո՞ւ ներկայումս մեզանում՝ Արարչական ծագում ունեցող, խելացի, տաղանդավոր, գրագետ, զարգացած, քաղաքակիրթ ու բարձրարժեք գիր ու գրականություն, հազարամյակների փառավոր անցյալ ունեցող ազգի շրջանում ներազգային գզվռտոցն ու թշնամանքն առկա է ու դեռ գնալով սրվում է հասարակության բոլոր շերտերում ու ոլորտներում, նույնիսկ՝ հակառակ արտաքին թշնամիների կողմից մեր երկրի շրջափակմանն ու ընթացիկ պատերազմի առկայությանը։

Բայց մինչև այդ ծավալուն ուսումնասիրությանն անցնելը,

դառնանք որոշ մտածողների այն պնդմանը, թե մեզանում ներազգային գզվռտոցի, կամ, նրանց խոսքերով՝ «անտրամաբանական վարքագծի», պատճառը հիմնականում խորհրդային տարիների ազդեցությունն է։

Ճիշտ է՝ կապիտալիզմի պես, խորհրդային միջավայրը գուցեև նպաստեց մեզանում տիրող ներազգային գզվռտոցի աճին ու խորացմանը, միմյանց հանդեպ, հատկապես սեփական երկրի հանդեպ անտարբերության, նույնիսկ թշնամական վերաբերմունքի ձևավորմանը։ Սակայն նկատենք, որ ԽՍՀՄ միջավայրը մյուս ազգերի վրա նույն ազդեցությունը չունեցավ, ինչ մեզ վրա։ Պետական ունեցվածքի հանդեպ անտարբերությանը, երբեմն նաև թշնամությանը զուգահեռ, ԽՍՀՄ մյուս ազգերի մոտ ներազգային գզվռտոց ու ներազգային թշնամանք չծագեց։ Տրամաբանորեն մենք, լինելով եղեռնի ենթարկված ազգ, ապրելով մեր դարավոր թշնամու և նրա նմանների հարևանությամբ, պիտի որ միասնական, միմյանց աջակից ու համախմբված ազգ լինեինք, խնամքով ու խանդաղատանքով վերաբերվեինք միմյանց, գնահատեինք ու արժևորեինք մեր ազգակիցներին թե՛ ներսում, թե՛ հատկապես դրսում։ Պարադոքսալ կերպով արեցինք ու անում ենք հակառակը։ Նույնիսկ դրսում, ուր թվում է, թե կիսելու բան չունենք նյութական բարիքների առատության ու տարածքների ընդարձակության առկայության պայմաններում, միմյանց հետ վարվում ենք նույն չարությամբ, չկամությամբ ու նախանձով, ինչ ներսում։ Ինչպես ներսում, այնպես էլ դրսում, նաև՝ համացանցում, հաճախ բանը հասնում է անձնական վիրավորանքների, հայհոյանքների, ծեծկռտուքների, դանակահարությունների, պատվիրված սպանությունների և այլն։ Ուրեմն մեր ներազգային գզվռտոցի պատճառը ո՛չ ներսի նյութական բարիքների ու տարածքի սղությունն է, ո՛չ էլ ԽՍՀՄ միջավայրի ազդեցությունը, կամ՝ դրան նախորդած, նաև ներկայիս, կապիտալիզմն՝ իր անտագոնիզմով։

Նկատենք նաև, որ դրսում այլազգիների հանդեպ նույն չըկամությունը, նախանձը, թշնամանքը, նույն լարված վերաբերմունքը չունենք, ինչ միմյանց հանդեպ։ Նույնիսկ, երբ

դրսում մեր տնտեսական գործունեության ոլորտները շատ հեռու են միմյանցից ու կարծես չկա տնտեսական մրցակցության որևէ պատճառ, միևնույն է, չի թուլանում մեր չըկամությունն ու նախանձը, չի թուլանում մեր թշնամանքն ու միմյանց ճնշելու, սնանկացնելու, միմյանց նվաստացնելու, նույնիսկ՝ ոչնչացնելու մղումը։ Դրսում նույնիսկ, եթե որևէ այլազգի անհատի տնտեսական գործունեությունը բախվում է մերին, իսկ մեր ազգակցինը չի բախվում, միևնույն է, պարադոքսալ կերպով մենք ավելի մեծ չկամություն ու նախանձ ունենք մեր ազգակցի հանդեպ, քան այն այլազգի անհատի, ում տնտեսական գործունեությունը բախվում է մերին։

Այս ահավոր երևույթը շատերն են նկատել, բայց դեռ ոչ ոք չի փորձել լրջորեն դիտարկել ու բացատրել այն։ Գուցե ամոթի ահավոր զգացումի՞ց, կամ գուցե նրանից, որ ավելի մեծ խնդիրներ ունենք... Ասենք, օրինակ՝ մեր երկրի օրհասական վիճակը և այլն։ Բայց չէ՞ որ բոլոր խնդիրները փոխկապակցված են։ Գուցե մեր երկրի օրհասական վիճակի պատճառը հենց ներազգային գզվռտոցն է և՛ ներսում, և՛ դրսում։ Գուցե, գտնելով այս արատավոր ու ամոթալի «մշակույթի» պատճառը, կարողանա՞նք գտնել այն դեղատոմսը, որը կմատնանշի ճգնաժամից դուրս գալու ուղին ու, եթե ընկալենք ու առանց դիմադրության ընդունենք պատճառի բացատրությունը, որքան էլ նվաստացնող լինի այն, ապա գուցե դուրս գանք մեր ներկա ճըգնաժամից, դառնանք միասնական ու անպարտելի ազգ, ունենանք ազգային պետություն, հետևաբար նաև՝ հայրենիք։

Հավատացած, որ ամեն երևույթ, որքան էլ պարադոքսալ ու խայտառակ, ունի իր պատճառներն ու, հետևաբար՝ շտկելու ձևը, անցնենք գործի։

Մարդու վարքը հիմնականում թելադրվում է ներսից։ Այդ աղբյուրները երեքն են՝

. ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ
. ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ
. ԲՆԱԶԴ

Գիտակցությունն ավելի շատ գործիք է, ենթագիտակցությանն ու բնազդին ծառայող գործիք: Այն հիմնականում հաշվարկներ կատարելու համար է՝ համակարգչի պես: Համակարգիչը չի մտածում, որոշումներ չի ընդունում: Որոշումներն ընդունում է մարդը: Համակարգիչը, միայն հրահանգներ ստանալով մարդուց, ավելի արագ ու ճշգրիտ է կատարում հաշվարկը: Քանի որ խաբելը հսկայական հաշվարկ է պահանջում, գիտակցությունն օգտագործվում է նաև խաբելու, դիմացինին մոլորեցնելու համար: Մենք՝ հայերս, ամենագիտակից ազգն ենք: Պատահական չէ, որ աշխարհի չեմպիոնն ենք շախմատից, որն ըստ էության հաշվարկի ու խաբելու մրցույթ է: Մենք նաև հրաշալի զորավարներ, առևտրականներ ու գործարարներ ենք: Գիտակցությունը նաև ենթագիտակցության կողմից հայտնաբերվածը համակարգելու, ներկայացնելու ու բացատրելու գործիք է: Ցանկացած ակնարկ, հոդված կամ վերլուծություն մարդու գիտակցության արգասիքն է. օրինակ՝ այս վերլուծությունը: Գիտակցությունը նաև մարդու կյանքի փորձը կուտակելու ու մտապահելու գործիք է: Այն նաև գիտելիքներ համադրելու, նորանոր համադրություններ ստեղծելու, ընդհանրապես ստեղծագործելու գործիք է: Մենք՝ հայերս, ապացուցել ենք, որ հրաշալի արվեստագետներ, ճարտարապետներ, գիտնականներ ու արհեստավորներ ենք:

Ենթագիտակցությունն է հիմնականում ներկայացնում մարդու էությունը: Մեր էությամբ մենք մեծամասամբ արարող ժողովուրդ ենք՝ կառուցող ու ծաղկեցնող: Մեր ողջ պատմության ընթացքում անընդհատ կառուցել ու կառուցել ենք: Կառուցել ենք գյուղեր ու քաղաքներ, ամրոցներ, ճանապարհներ ու կամուրջներ: Բայց ավելի շատ՝ եկեղեցիներ ու խաչքարեր: Կառուցել ենք դարավանդներ, ոռոգման համակարգեր, հիմնել այգիներ ու այգեստաններ: Նույն եռանդով ու խանդավառությամբ կառուցել ենք և՛

այն ժամանակ, երբ մեր պետականությունն ենք ունեցել, և՛ այն ժամանակ, երբ օտարի տիրապետության տակ ենք եղել։ Կառուցել ու ծաղկեցրել ենք որտեղ էլ որ հայտնվել ենք՝ օտար երկրներում, նույնիսկ մայրցամաքներում։ Բոլոր ազգերը, որոնց երկրներում որ հայտնվել ենք, հիշում ու հարգում են մեզ՝ որպես արարող ու օրինապահ ազգի։ Նույնիսկ ԽՍՀՄ շրջանում կառուցել ու ծաղկեցրել ենք և՛ մեր տարածքը, և՛ մեր հարևան, նույնիսկ հեռավոր հարևան հանրապետությունների խոպան տարածքները։ Չկա մի ուրիշ ազգ, որ արարելուց, կառուցելուց այնքան բերկրանք ստանա, որքան՝ մենք։ Ուրիշ ազգեր կառուցում են միայն անհրաժեշտության դեպքում, իսկ մենք կառուցում ենք նույնիսկ, երբ անհրաժեշտ էլ չի։

Արարչագործ լինելու հետ մեկտեղ մենք ռազմատենչ ազգ չենք։ Կռվի ենք ելնում միայն, երբ անհրաժեշտ է, երբ այլևս խուսանավելու տեղ չկա, երբ վտանգված է մեր գոյությունը, երբ դանակն արդեն ոսկորին է հասել։ Այդպես ծագեց Ղարաբաղյան պատերազմը։ Եկել, լցվել էին, ճագարի պես բազմանում էին։ Վաղ թե ուշ, քանակապես ճնշելով, գրավելու էին մեր ողջ տարածքը, մեր պատմական հայրենիքի հրաշքով պահպանված վերջին բեկորը ևս։

Մենք նաև խորաթափանց՝ մարդկանց ու երևույթների էության մեջ թափանցելու և անսահմանորեն խորանալու մղում ունենք։ Մենք նաև աշխարհի մակրոկոսմի և միկրոկոսմի ճշմարիտ ընկալման մղում ունենք։ Մեր խորաթափանցությունը հզոր կերպով ճառագում է մեր դեմքից, հատկապես՝ մեր աչքերից, ծակող հայացքի տեսքով։ Սա է պատճառը, որ ուր էլ որ հանդիպում՝ ակնթարթորեն ճանաչում ենք մեկ մեկու։

Մեր քար ծակող խորաթափանցությունն է, որ մեզ մղում է դեպի կրթության բազմազան օջախներ։ Աշխարհի բոլոր երկրներում կարելի է հանդիպել կրթության համակարգի ամենաբարձր աստիճանների հասած անթիվ անհամար հայերի։ Մենք նաև մեր գիտելիքը մեր ազգակցի, նույնիսկ այլազգիների հետ կիսելու անհագ ծարավ ունենք։ Հազա-

բամյակներ շարունակ տարածվել ու կրթել ենք մոլորակի մյուս ժողովուրդներին, բարեփոխել նրանց աշխարհընկալումները, արժեհամակարգն ու գիտելիքները։

Մենք նաև արդարամիտ ու բարի էություն ունենք, անսահմանորեն արդարություն ու ազնվություն սիրող, պատրաստ զոհաբերություններին՝ արդարության, բարու ու գեղեցիկի համար։ Մեր կյանքը վտանգելով՝ արշավել ու տապալել ենք մեր հարևան ազգերի վրա ծանրացած բռնապետությունները։ Սովորեցրել ու օգնել ենք նրանց, կարգ ու կանոն հաստատել ու հետ ենք վերադարձել։ Մոքներովս չի անցել ստրկացնել որևէ ազգի։ Ինքներս մեր երկրում ապրել ենք՝ որպես ազատ անհատներ։ Մեր երկիրը համարյա միշտ օրինակելի երկիր է եղել մեր հարևան ազգերի համար։ Նրանք Հայաստանն անվանել են Աստվածային օրենքների երկիր, մեզ էլ՝ աստվածամարդիկ։ Ճշմարտության, արդարության, բարու ու գեղեցիկի անսահման ձգտումն է բնորոշում մեզ որպես Արիացի, հետևաբար նաև՝ մեր Արիական ուսմունքի էությունը։

Մենք միևնույն ժամանակ նաև միամիտ ազգ ենք։ Անծանոթի մեջ առաջին հերթին ջանում ենք տեսնել մեզ պես արդարամիտ ու բարի մեկին։ Երբ չեն արդարանում մեր ակնկալիքները, բնականաբար շատ ենք տխրում։ Բայց որքան հաճախ ենք խաբվում, այնքան ուժգին ենք ձգտում մեկ այլ անծանոթի մեջ տեսնել արդարամիտ ու բարի մեկին։ Որքան ուժգին ենք ձգտում, այնքան անզգույշ ենք դառնում ու կուրանում։ Որքան կուրանում ենք, այնքան ուշ ենք համոզվում հակառակի մեջ։ Որքան ուշ ենք համոզվում, այնքան շատ ենք շահագործվում։ Բնականաբար՝ այնքան մեծ է լինում հիասթափության մեր ցավը։

Գուցե պատճառը մեր շարունակական հիասթափություններին շարա՞նն է, որ դառնանում ու չարակամ ենք դառնում։ Սա գուցե բացատրեր միայն արդարամիտ ու բարի մարդկանց դառնացածությունը, բայց ոչ՝ բոլորինը։

Բայց, չհեռանալով նյութից, եթե մեր էությամբ արարող,

արդարամիտ, բարի ու միամիտ ժողովուրդ ենք, այդ ինչի՞ց է, որ չարակամ ենք ու նախանձ միմյանց հանդեպ։ Որտե՞ղ փնտրենք այս պարադոքսալ երևույթի պատճառը։ Եթե էությամբ արդարամիտ ու բարի ենք, ուրեմն չարակամությունն ու նախանձը ձեռքբերովի՞ են։ Ե՛վ այո, և՛ ոչ։ Չմոռանանք, որ մարդու վարքը պայմանավորող ինքնությունը քարակերտ կառույց չէ, այլ ենթակա է տարբեր ազդեցությունների։ Նրա ձևավորման վրա ազդում են ուժեր և՛ դրսից՝ շրջապատող իրականությունը, արտաքին պայմանները, դաստիարակությունն ու մշակույթը, և՛ հատկապես ներսից՝ գենետիկ կառույցն իր բազմաթիվ շերտերով։ Չնայած այն բանին, որ մշակույթն ինքը ձևավորվում է տեսակի գենետիկ կոդին համապատասխան ու հետագայում ձևավորում ու հղկում աճող սերնդի արժեհամակարգը, այնուամենայնիվ, արտաքին պայմանների ճնշման տակ այն կարող է փոխվել ու փչանալ, ընդհուպ մինչև վերանալը։ Հենց վերացման հետ էլ գործ ունենք մեր դեպքում։

Մեր արարչական ու արդարամիտ էությունից վաղնջական ժամանակներում սկիզբ առած Արարչական ուսմունքը, որը պայմանավորում էր մեր ազգի մշակույթը, արտաքին պայմանների ճնշման տակ սկսեց քայքայվել։ Սկզբում ասորաբաբելական կիսավայրենի, հետո՝ սեմական վաշխառու, հետո՝ հունա-հռոմեական այլասերված ու խաբեբա մշակույթները մեծապես ազդեցին մեր ազգային մշակույթի վրա։ Բայց ամեն անգամ այլազգիների վերանալուց կամ հեռանալուց հետո կարողանում էինք ինչ-որ չափով վերականգնել մեր էությունից բխող մերն ու ապրել ազատ ու երջանիկ, մեր ազգային Արարչական ուսմունքին համահունչ։ Սակայն, երբ Քրիստոնեությունը որպես կրոն տարածելու համար ավերվեցին մեր տաճարները, ոչնչացվեց մեր ազգային ուսմունքի կրող հոգևոր դասը, այրվեցին մեր ազգային արժեհամակարգը պարունակող բոլոր մեհենական մատյանները, նույնիսկ՝ այբուբենը, ապա ամբողջովին ջարդվեց ու վերացավ մեր ազգի ողնաշարը՝ մեր ազգային ուսմունքը։ Մեր ազգային ուսմունքի հիման վրա առաջացած մշակույթն ու ֆոլկլորը դեռ երկար ժամանակ պահպանվում էին։ Սակայն առանց հոգևոր դասի, հատկա-

պես առանց ուամունքի, անխուսափելիորեն աստիճանական անհետացման էին դատապարտված։ Քրիստոնեություն կրոնի կործանարար մուտքին հաջորդած դեգրադացիան, մանավանդ անընդհատ պատերազմները՝ պարսկական, արաբական, բյուզանդական, մոնղոլական, վերջում արդեն թուրքական նվաճումները, մեծապես ազդեցին մեր մշակույթի վրա։

Այնուամենայնիվ անպատասխան մնաց, թե ինչո՞ւ միևնույն տարածաշրջանում ապրող, միևնույն հարևաններով շրջապատված մեր հարևան այլազգիները, որոնք, ի տարբերություն մեզ, ո՛չ Արարչական ու արդարամիտ էություն ունեն, ո՛չ էլ Արարչական ուամունք ու մշակույթի երկարատև պատմություն են ունեցել, մեզ պես չարակամ ու նախանձոտ չեն միմյանց հանդեպ։ Հենց նույն այն ազգերը, որոնցից իբր ընդօրինակել ենք մեր չարակամ ու նախանձոտ «մշակույթը»... Արդյո՞ք նրանք էլ են մեր չափ չարակամ ու նախանձոտ միմյանց հանդեպ։ Դժվար... Ուրեմն ինչո՞ւ ենք մենք այսպիսին։

Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է խորանալ մեր գենետիկ կոդի խորը շերտերի մեջ։ Գուցե այնտե՞ղ գտնենք պատասխանը։

Գենետիկ կոդով է մեծապես պայմանավորված մեր Արարչական, արդարամիտ էությունը։ Բայց գենետիկ աշխարհն ավելի խորն է ու բազմաշերտ, քան թվում է։ Այն բաղկացած է մեր բնազդներն ու կենսագործունեությունը կարգավորող շերտերից մինչև մեր էության, ինտելեկտի ու տաղանդի աստիճանը պայմանավորող շերտերը։ Գիտնականները մեր գենետիկ կոդի միայն երեք տոկոսն են արձանագրել։ Ինչ էլ որ արձանագրել են, դեռ ուսումնասիրված չէ։ Գիտնականները չգիտեն ու երևի երբեք էլ չկարողանան բացահայտել, թե մեր գենետիկ կոդի որ հատվածն ինչ ֆունկցիա ունի, ինչ էություն, կամ ինչ վարքագիծ է պայմանավորում։ Բայց մեր հարցի պատասխանը գտնելու համար բավարար է հիմնվել կենդանական աշխարհի վարքագծի դիտարկումների վրա։

Բոլոր օրգանիզմները՝ վիրուսներից ու բակտերիաներից սկսած մինչև մարդ արարածը, ունեն մի ընդհանուր հատկություն։ Դա սեփական տեսակի հարատևումն ու բարեկեցիկ կյանքն ամեն գնով ապահովելու մղումն է։

Ամեն կենդանի օրգանիզմ, նույնիսկ բորբոսասունկն անում է ամեն ինչ իր սերնդի հարատևումն ապահովելու համար։ Ամեն արարած բնազդաբար սերունդ է տալիս, խնամում ու փայփայում նրան, ամեն գնով հեռու պահում նրան անբարենպաստ պայմաններից։ Կենդանական աշխարհում, օրինակ, եղջերուն կարող է ձագին թողնել ու վազել դեպի գիշատիչը՝ նրան իր հետևից ուրիշ կողմ տանելու ու ձագից հեռու պահելու համար։ Նույն կերպ էլ մենք՝ մեր գիտակցությունից անկախ, սերունդ տալու, նրան խնամելու և մեծացնելու բնազդային մղում ունենք։ Եղջերուի պես, մեր կյանքի ու առողջության գնով, մենք ևս պատրաստ ենք մեր սերնդին պաշտպանելու համար վտանգին ընդառաջ գնալ, անել ամեն ինչ՝ մեր զավակներին ապահով պահելու համար։ Բոլորս էլ մեր կյանքի ու առողջության գնով անում, դնում ենք՝ մեր երեխաներին խնամելու, մեծացնելու, պաշտպանելու, նրանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու համար։

Կա մի հրեշավոր բորբոսասունկ, կոչվում է՝ Կանդիդա Ալբիկանս։ Սա ապրում է մարդու աղիներում։ Մարդու աղիների օգտակար բակտերիաները սնվում են սրանով։ Բայց, եթե հակաբիոտիկների ազդեցությամբ վերանում են օգտակար բակտերիաները, Կանդիդան գլուխ է բարձրացնում ու չափից դուրս բազմանում։ Կանդիդան սնվում է շաքարով։ Ծակում է աղիների պատերն ու իր թույները տարածում արյան մեջ։ Կարող է նույնիսկ անձամբ թափանցել արյան մեջ, հասնել թոքերին, նույնիսկ՝ սրտին ու պարալիզել ողջ օրգանիզմը։ Ոչ մի դեղամիջոց արդյունավետ չի։ Այս բորբոսասնկի դեմ պայքարի առաջին քայլը շաքար չուտելն է, նաև՝ օսլա, քանի որ օսլայի քայքայման վերջին օղակը շաքարն է, հետևաբար կեր է Կանդիդայի համար։ Այսինքն, Կանդիդայի դեմ պայքարի միակ արդյունավետ միջոցը նրան սովամահ անելն է։ Սակայն Կանդիդան շատ

բանական մարտավարություն ունի։ Զգալով, որ սովամահ է լինում, որ մի շաբաթից ավել չի կարողանալու դիմանալ, հավաքում է իր վերջին ռեսուրսներն ու, սպորներ սարքելով, բաց թողնում՝ ինքն անձամբ սպառվելով ու ոչնչանալով իհարկե, այն միտումով, որ երբ բարենպաստ պայմաններ առաջանան, այսինքն, երբ մարդը շաքար ուտի, այդ սպորները ծիլ կտան, բորբոսասունկ կդառնան ու կապահովվի իր տեսակի հարատևումը։ Փաստորեն այս վտանգավոր բորբոսասունկը բնազդային մղում ունի իր կյանքի գնով ապահովել իր տեսակի հարատևումը։

Կանդիդայի նման, կենդանական աշխարհի բոլոր օրգանիզմների գենետիկ կառուցվածքին հատուկ է ու այդ կառուցվածքի անբաժանելի մասն է հանդիսանում գենետիկ կոդի այն հատվածը, որը պայմանավորում է սեփական տեսակի հարատևումն ամեն գնով ապահովելու բնազդային մղումը։

Մենք ևս կենդանական աշխարհի մասն ենք։ Հետևաբար մեր գենետիկ կոդում կրում ենք սեփական տեսակի հարատևումն ամեն գնով ապահովելու մղումը պայմանավորող հատված։ Գենետիկ կոդի այդ հատվածն է պատճառը, որ սերունդ տալու, նրան խնամելու, մեծացնելու, մեծանալու ընթացքում անբարենպաստ պայմաններից՝ շառ ու փորձանքից, հեռու պահելու, ամուսնացնելու, նրանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու, նրանց սերնդին՝ մեր թոռներին, տեսնելու ու խնամելու, նաև նրանց բարեկեցիկ կյանքի մասին հոգալու և այլն, մղում ունենք։ Սա է պատճառը, որ ամեն գնով ջանում ենք մեր երեխաներին ուսման տալ, որ կյանքում չխեղճանան, բարեկեցիկ կյանք ունենան, որ իրենք էլ իրենց հերթին կարողանան ապահովել իրենց սերնդի՝ մեր թոռների ու ծոռների, բարեկեցիկ կյանքը, որ մեր տեսակը չոչնչանա, շարունակի հարատևվել։

Բայց սովորական հարատևելը մեզ չի գոհացնում։ Մենք շատ լավ հասկանում ենք, որ ներկա անողոք, կապիտալիստական՝ ջունգլիների «մշակույթի», պայմաններում մեր

սերունդը կամ տեր պիտի լինի, կամ՝ ծառա։ Ծառայի կարգավիճակն, իհարկե, ընդունելի չի կարող լինել։ Մենք ուզում ենք, որ մեր սերունդը տեր լինի՝ առատ նյութական բարիքների սեփականատեր։ Ինչո՞ւ։ Որ շատ չաշխատի, չհիվանդանա, չմեռնի, երկար ապրի, շատ երեխաներ ունենա, որ մեր սերունդը ոչ միայն հարատևի, այլ նաև բազմապատկվի ու որքան հնարավոր է՝ շատ, թեկուզ՝ ուրիշների հաշվին։ Այ՛, այստեղ ընդհուպ մոտեցանք մեր ներազգային գզվռտոցի խնդրին։

Սեփական տեսակի հարատևումն ամեն գնով ապահովելու գենետիկ մղումով թելադրված՝ մեր բոլորի առանձին շահերն ամենօրյա հակամարտության ու բախման մեջ են։ Այդ հակամարտությունն ու բախումն առավել անողոք է դառնում կապիտալիստական կացութաձևի պայմաններում ու ստիպում բոլորիս ամեն ինչ անել մեր սերնդին կրթության տալու, նրանց ոչ միայն կապիտալիստական անողոք մրցակցությանը նախապատրաստելու, այլ նաև առավելագույնս մարտունակ դարձնելու միջոցով մեր տեսակի հարատևումն ապահովելու համար։ Թումանյանի հանրահայտ պատմվածքի մեջ Համբոն Գիքորին քաղաք էր տանում նույն նպատակով, որ Գիքորը «մարդ դառնար» ու... Մա՞րդ։ Համբոն իրականում Գիքորին քաղաք էր տանում, որ Գիքորը խարդախություն սովորեր ու հետո տեր դառնար։ «Մարդ» ասելով՝ Համբոն հասկանում էր տեր, այլապես խարդախ առևտրականին ծառայության չէր տա իր որդուն, այլ ծառայության կտար մի ազնիվ, անշառ արհեստավորի կամ գոնե դպրոց կուղարկեր՝ գիր ու գրագիտություն սովորելու։ Համբոն չէր ուզում, որ իր սերունդը ծառա մնա, աղքատ, զուրկ նյութական բարիքների առատությունից, հետևաբար զուրկ բարգավաճելու ու բազմանալու հնարավորությունից։ Համբոն ուզում էր, որ իր որդին՝ իր սերնդի պոտենցիալ շարունակողը, տեր դառնար ու հնարավորություն ունենար շարունակելու ու բազմապատկելու իր տեսակը, թեկուզև մյուս տեսակների հաշվին։

Հիմա դառնանք Թումանյանի երկու վաճառական ընկերների օրինակին, երբ մեկի գործերը վատ են գնում, իսկ

մյուսինը՝ լավ։ Ում գործերը, որ վատ են գնում, նա մտատանջություններ մեջ է ընկնում ավելի շատ ոչ թե նրանից, որ իր գործերն են վատ գնում, այլ որ իր ընկերոջ գործերն են լավ գնում։ Նա անքուն գիշերներ է անցկացնում՝ խեղդվելով սեփական մաղձի մեջ, նույնիսկ հիվանդանում է և այլն։ Ինչո՞ւ։ Նկատենք, որ իր ընկերոջ գործերի լավ գնալն իր սեփական գործերի վատ գնալու հետ կապ չունի։ Նրանք մրցակիցներ չեն։ Տարբեր բնագավառների վաճառականներ են։

Պատճառը հետևյալն է՝ մարդը բնազդաբար վախենում է, որ իր ընկերոջ սերունդը կբարգավաճի, նյութական բարիքների առատության շնորհիվ հնարավորություն կունենա բազմանալու, հետևաբար՝ ավելի շատ աշխատող ձեռքեր ունենալու, նրանց գործի դնելու, հետևաբար՝ ավելի շատ նյութական բարիքներ կուտակելու ու, շարունակելով բազմանալ ու զորանալ, ի վերջո իր սերունդներին ճնշելու, շահագործելու, Գիքորի օրը գցելու՝ հիվանդացնելու ու սպանելու, որով էլ գուցե կտրվի իր շառավիղը՝ վերջանա, գնա իր տեսակը։ Ահա սեփական տեսակի պահպանման ու հարատևման, հետևաբար սեփական սերնդի բարեկեցիկ կյանքի համար պայքարն է, որ ծնում է համատարած ներազգային գզվռտոց։

Սակայն հարց կառաջանա, թե ինչո՞ւ ենք այսպիսին նաև դրսում, ուր նյութական բարիքների առատություն կա, նաև՝ աճի ու բազմանալու շատ ավելի լայն, համարյա անսահման հնարավորություններ, քան ներսում։ Ու ինչո՞ւ դրսում այլազգիների հանդեպ նույն չկամ ու նախանձոտ վերաբերմունքը չունենք։

Այս հարցերի պատասխանները շատ խորն են խոցելու։ Բանն այն է, որ ինչպես ներսում, այնպես էլ դրսում, միմյանց մեջ տեսնում ենք մեր տեսակի հարատևմանը սպառնացող ամենամեծ վտանգը, միաժամանակ, այլազգիների մեջ համարյա վտանգ չտեսնելով։ Հետևաբար նշանակություն չունի ներսում ենք, թե՝ դրսում։ Դրսում, որտեղ էլ որ հանդիպում ենք իրար, առաջին հերթին զգուշանում

ենք միմյանցից, խուսափում շփվելուց, մանավանդ՝ փոխկապվածության մեջ մտնելուց։ Միմյանց հետ՝ որպես կանոն, վարվում ենք մեծ զգուշավորությամբ։

Բայց ինչո՞ւ է ամեն ինչ այսքան խորացել ու հասել ներազգային թշնամանքի։ Ինչո՞ւ ենք միմյանց մեջ մեր սեփական տեսակին սպառնացող ավելի մեծ վտանգ տեսնում, քան որևէ այլազգի անհատի մեջ։ Այս հարցին պատասխանելու համար հարկ կլինի ավելի խորանալ մեր գենետիկ կառույցի բազմաթիվ շերտերի մեջ, հասնել հատակին։

Բանն այն է, որ մեր գենետիկ կոդից բխում է ոչ միայն սեփական տեսակի հարատևումն ու բարեկեցիկ կյանքն ամեն գնով ապահովելու մղումը, այլ նաև սեփական տեսակի գերակայությունն ու, ի վերջո, ողջ աշխարհում մեր սեփական տեսակի բացարձակ տիրապետությունը հաստատելու, ողջ մոլորակի վրա միայն մեր տեսակի գոյությունն ամեն գնով ապահովելու մղումը։

Ի դեպ, գլոբալիզացվող աշխարհի անցուդարձերից պարզ երևում է, որ աշխարհի ներկայիս կառավարիչները նման մղումներ ունեն։ Նրանք նկատել են նաև, որ մեր՝ հայերիս, մեջ ամենաթունդն է այդ մղումը։ Հետևաբար, մեր հանդեպ հատուկ թշնամանք ունեն, քանի որ մեզ՝ հայերիս, ամենամեծ վտանգն են համարում իրենց ճանապարհին։

Բայց, վերադառնալով մեր ներազգային խնդիրներին, մասնավորապես և՛ ներսում, և՛ դրսում մեր ներազգային գզվռտոցի խնդրին, միևնույն ժամանակ մտքում պահած ներազգային թշնամանքի հենց նոր բացահայտված պատճառը՝ սեփական տեսակի գերակայությունը, նույնիսկ մյուս տեսակների հաշվին ողջ աշխարհում մեր սեփական տեսակի գոյությունն ու բացարձակ տիրապետությունն ամեն գնով ապահովելու մեր գենետիկ մղումը, փորձենք հպանցիկ շոշափել նաև անկասելի թվացող արտագաղթի խնդիրը։

Ինչպես ասվեց վերևում, կապիտալիստական կացութաձևի պայմաններում հստակ հասկանում ենք, որ մենք, նաև մեր սերունդները, կամ տեր պիտի լինենք, կամ՝ ծառա։ Սակայն կանխազգալով, որ մեր հարազատ երկրում չենք կարողանալու տեր դարձնել մեր զավակներին, ու իհարկե, հաշվի առնելով Թումանյանի Գիքորի դառը ճակատագիրն ու մեր ազգակից տերերի կողմից սեփական ազգակիցներին անողոքաբար շահագործելու դեռ շարունակվող Բազազ Արտեմական պրակտիկան, և ընդհանրապես միմյանց ամեն քայլափոխի խեղդելու մեր գենետիկ մղումը, գերադասում ենք դուրս պրծնել մեր երկրից։ Գերադասում ենք ինքներս ծառայության մտնել, մեր երեխաներին էլ ծառայության տալ օտարին, այլ ոչ թե մեր «հարազատ» «Բազազ»-ներին։

Բայց, այնուամենայնիվ, կարող է հարց առաջանալ՝ ինչո՞ւ ենք այսքան շատ թշնամացել միմյանց հետ։ Չե՞ որ բոլորս էլ հայ ենք, միևնույն ազգից։

Բանն այն է, որ մենք՝ հայերս, շատ տարբեր ենք միմյանցից։ Հաճախ այնքան տարբեր, որքան ասենք՝ գերմանացին իսպանացուց, կամ ֆրանսիացին լեհից և այլն։ Այդ տարբերությունն էլ հենց պայմանավորում է թշնամանքի աստիճանը։ Մարդը սեփական կամ նման տեսակի հետ թշնամաբար չի վարվի։ Թշնամաբար վարվում են սեփականից տարբեր տեսակի հետ։ Ու որքան տարբեր է տեսակը, այնքան սուր է թշնամանքը։ Մեր՝ հայերիս, մեջ բնականաբար միշտ կա այն մտավախությունը, որ մեզնից տարբեր տեսակների նպատակն է ոչնչացնել մեր տեսակին, որ ամենաքիչը մեր սերնդին թշնամաբար կշահագործեն, ինչպես Բազազ Արտեմը՝ Գիքորին։ Սա է պատճառը, որ լավ լինի երկրում իրավիճակը, թե՝ վատ, միևնույն է արտագաղթելու ենք, մանավանդ, երբ երկրում տիրում է անողոք կապիտալիզմը՝ լեգալացված կողոպուտի «մշակույթը»։

Բայց չշեղվենք մեր վերը բարձրացրած հարցերից՝ ինչո՞ւ

դրսում այլազգիների հանդեպ նույն հակամարտությունը, թշնամանքն ու բախումները չունենք: Չէ՞ որ այլազգիները գենետիկորեն ավելի տարբեր են մեզնից:

Ճիշտ է, այլազգիներն իհարկե ավելի տարբեր են: Բայց, չհաշված մեր անմիջական թշնամիներին, նրանց մեծամասնությունը համեմատաբար անվնաս են մեզ համար: Չկա աշխարհում որևէ այլ ազգ, որ կարողանա համեմատվել մեզ հետ՝ իր ինտելեկտուալ պոտենցիալով, տաղանդով ու ձեռներեցությամբ: Ի հավելում, հատկապես քաղաքակիրթ այլազգիների մեջ շատ թույլ է սեփական տեսակի հարատևումն ու բարեկեցիկ կյանքն ամեն գնով ապահովելու մղումը: Հետևաբար դրսում այլազգիների մեջ մեր շառավղի հարատևմանը սպառնացող նույնքան վտանգ չենք տեսնում, որքան մեր սեփական ազգակիցների մեջ: Հատկապես արևմտյան աշխարհի երկրներում հասարակությունները անհույս պառակտված են: Այնտեղ համարյա իսպառ վերացել է նահապետական ընտանիքի, մանավանդ գերդաստանի ինստիտուտը: Արևմտյան քաղաքակրթության երկրներում մարդիկ հիմնականում սեփական անձի բարեկեցության մասին են մտահոգված: Նրանց շատ չի հետաքրքրում, թե իրենց երեխան կամ թոռն ի՞նչ կանի, ինչպե՞ս կապրի, արդյոք կհարատևի՞ իր տեսակը, թե՞՝ ոչ: Սա է հիմնականում պատճառը, որ մանավանդ քաղաքակիրթ երկրների մարդկանց մեջ ոչ մի վտանգ, հետևաբար՝ ախոյան, չենք տեսնում: Սա է պատճառը, որ արտագաղթելիս դիմում ենք դեպի քաղաքակիրթ երկրներ: Չէ՞ որ Ղազախստանում էլ շատ տեղ կա, Պարսկաստանում էլ... Բայց՝ ոչ... Արտագաղթելիս ընտրում ենք եվրոպական երկրները, թեկուզև մեր երկրից շատ ավելի խիտ բնակեցված, բայց՝ քաղաքակիրթ երկրները, ուր չկան կամ շատ թույլ են մեր սերնդի հարատևմանը սպառնացող գործոնները, ուր առկա են, գոնե համեմատաբար մատչելի են, բարգավաճելու ու բազմանալու պայմանները:

Ահա և պարզեցինք մեր հանրահայտ ներազգային գզվռոտոցի, թշնամանքի, միմյանցից խուսափելու, հետևաբար և արտագաղթի պատճառները: Առաջինը մեր չափազանց

թունդ գենետիկ կառուցվածքի խորը շերտերում թաքնված, մեր սեփական տեսակի հարատևումն ու ողջ աշխարհում նրա բացարձակ գերակայությունն ու գոյությունն ամեն գնով ապահովելու բնազդային մղումն է, իսկ մյուսը՝ այդ բնազդային մղումը թույլատրող ու խրախուսող պայմանները՝ կապիտալիզմը, մանավանդ, երբ չկան վերը նկարագրված բնազդային մղումները զսպող ուսմունքն ու մշակույթը։

Բայց որևէ պրոբլեմի պատճառները գտնելն ու դեղատոմս չառաջարկելն առնվազն թշնամություն է։ Պատկերացրեք՝ բժիշկը գտներ հիվանդության պատճառն ու ոչ մի բուժում չառաջարկեր։ Կյանքում չնայած հիմնականում հակառակը է լինում. շատ հաճախ բժիշկները բուժում են առաջարկում՝ առանց հիվանդության բուն պատճառն իմանալու։ Երբեմն էլ՝ առանց փորձելու իմանալ հիվանդության պատճառները, դեղամիջոցներ են նշանակում՝ միայն ախտանշանները կոծկելու համար։ Որպես հետևանք՝ միայն վնաս են տալիս։ Ուրիշ ոչինչ։

Սովորաբար հիվանդության պատճառներն իմանալը հուշում է բուժման ճանապարհը։ Հիվանդությունների՝ այդ թվում վարակիչ հիվանդությունների հիմնական մասն առաջանում է իմունային համակարգի թուլության պատճառով։ Վիրուսներ, բակտերիաներ, բորբոսասնկեր ու տարբեր տեսակի մակաբույծներ միշտ էլ կան։ Բուժելու համար բժիշկները սովորաբար փորձում են կոտորել մարդու մարմին ներթափանցած հիվանդության հարուցիչներին՝ վիրուս կլինի, բակտերիա, թե՝ բորբոսասունկ, բայց հիմնականում օրգանիզմի համար բարենպաստ պայմաններ են ստեղծում՝ ինքնամաքրվելու, սեփական իմունային համակարգի ողջ հզորությունը վերականգնելու ու ապաքինվելու համար։ Օրինակ՝ օրգանիզմից հեռացնում են թունավոր նյութերի կուտակումները, կասեցնում են թունավոր սննդի կամ այլ վնասակար նյութերի ընդունումը, փոխարենը՝ օրգանիզմը սնում են իմունային համակարգը վերականգնող նյութերով։ Ու այսպիսով, ամրապնդված իմունային համակարգը նոր կարողանում է պայքարել հարուցիչների դեմ

ու առողջ պահել օրգանիզմը։

Քանի որ մեր հիվանդության պատճառը թաքնված է մեր գենետիկ կառույցի խորը շերտերում, մեր գործը հեշտ չի լինելու։ Գենետիկ կոդը չես փոխի։ Սակայն նկատենք, որ այդ չարաբաստիկ գենետիկ կոդի պես, մարդու մարմնում միշտ էլ կան տարբեր հիվանդությունների հարուցիչներ՝ վիրուսներ, բակտերիաներ, բորբոսասնկեր, նույնիսկ՝ մակաբույծներ։ Զմոռանանք նաև, որ մարդու իմունային համակարգն է միայն, որ կարողանում է զսպված պահել այդ բոլոր հարուցիչներին, որ մարդու իմունային համակարգի տկարությունն է բոլոր հարուցիչների բարգավաճման ու ողջ մարմնի հիվանդության պատճառը։

Մեր դեպքում մեր ներսի՝ մեր գենետիկ կոդի, նաև դրսի հարուցիչների՝ օտար գաղափարախոսությունների, հետ մեկտեղ, դժբախտաբար գործ ունենք նաև մեր իմունային համակարգի՝ մեր ազգային արժեհամակարգի, մեր ուսմունքի, տկարության, ավելի ճիշտ՝ նրա համարյա չլինելու հետ։ Մեզանում այդ ուսմունքի չլինելն է, որ թույլ է տվել ոչ միայն օտար գաղափարների՝ դեմոկրատիայի, կապիտալիզմի, լիբերալիզմի ու ֆեմինիզմի ներթափանցումն ու արմատավորումը մեր մարմնում, այլ առաջին հերթին մեր գենետիկ կոդի խորխորատներում ծվարած սեփական տեսակի հարատևումն ամեն գնով ապահովելու մեր բնազդային մղումի ու համապատասխան վարքի անկաշկանդ դրսևորումն ու մոլեգին տարածումը։ Հետևաբար, մեր մարմնի առողջությունը վերականգնելու համար, հրամայական է մեր իմունային համակարգի՝ մեր ազգային արժեհամակարգի, մեր ուսմունքի շուտափույթ վերականգնումը։

Ինչպե՞ս։ Անհատի, նաև ողջ հասարակության վարքն ու ինքնությունը պայմանավորված է ոչ միայն նրա գենետիկ կառույցի բազմաթիվ շերտերի ողջ համակարգով, այլ մեծապես նաև դաստիարակությամբ։ Վերևում նշեցինք, որ մարդու ենթագիտակցությունը քարակերտ կառույց չէ, որ այն ենթակա է փոփոխվելու, որ նրա վրա ազդում են ուժեր ոչ միայն ներսից՝ գենետիկ շերտերից, այլ մեծապես

նաև դրսից՝ կրթություն, դաստիարակություն և այլն։

Ինչպես ասվեց վերևում՝ գենետիկ կոդը չես փոխի։ Ավելի ստույգ՝ գենետիկ կոդի այն հատվածը, որը հենց խնդրո առարկա երևույթի պատճառն է։ Բայց բարեբախտաբար մեր գենետիկ կոդի մյուս շերտերը, որոնք պայմանավորում են մեր ինքնության հիմնական մասը՝ արարչագործ ու արդարամիտ մասը, ինտելեկտն ու տաղանդը, շատ ավելի հզոր են։ Վերջապես ունենք մեկ այլ հզոր միջոց՝ մեր գիտակցությունը։ Հենց այս բոլոր միջոցների միահամուռ զորությամբ էլ կկարողանանք վերականգնել մեր ազգային ուսմունքը՝ մեր իմունային համակարգն ու բարեփոխել ինքներս մեզ, հետո նաև՝ մյուսներին ու հետագայում նաև մեր հարևան ազգերին։

Այս ծանր գործն, ինչպես միշտ, ընկած է մտավորականության ուսերին։ Մտավորականությունն է ազգի գլուխը, հետևաբար՝ գործի միակ հնարավոր նախաձեռնողն ու առաջամարտիկը։ Մտավորականությունից բացի ուրիշ ոչ ոք չի կարող անել այս գործը։ Մտավորականությունն առաջին հերթին պիտի հասկանա, որ ունենք ընդհանուր թշնամի՝ ի դեմս գլոբալիզացիայի հեղինակների, որոնք անողոք կերպով գործի են անցել վերացնելու մեզ՝ որպես տեսակ, մեզ համարելով իրենց ծրագրերի մեծագույն ու միակ խոչընդոտը։ Սա հասկանալուց հետո մտավորականությունը պիտի գործի անցնի՝ բացատրելու մեր մյուս ազգակիցներին վտանգի ողջ լրջությունը, նաև, որ անջատ-անջատ, ամեն մեկս մեր անձնական խնդիրները լուծելով, մանավանդ միմյանց հոշոտելով, չենք ձերբազատվի մեր թշնամուց ու նրա ոտնձգություններից, որ միայն միահամուռ ջանքերով կկարողանանք դիմադրել ու չեզոքացնել մեր բոլորի գլխին կախված ահավոր վտանգն ու խուսափել կոտորվելուց։ Թեկուզ հենց նույն ինքնապահպանման բնազդով, մենք՝ մտավորականներս, պարտավոր ենք գործի լծվել՝ կասեցնելու մեր ազգի ու մեր սեփական տեսակի գոյությանն ու հարատևմանը սպառնացող վտանգը։ Բայց գուցե շատերիս մոտ վերացե՞լ է սեփական տեսակի հարատևումն ապահովելու մղումը պայմանավորող գենետիկ

կոդը։ Դժվար... Ուրեմն հաշտվե՞լ ենք սեփական տեսակի անխուսափելի ոչնչացման հետ։ Կամ գուցե չե՞նք գիտակցում մեր բոլորի, ներառյալ մեր սեփական տեսակի, գլխին կախված վտանգը։ Իսկ գուցե ներազգային գզվռտոցի մեջ ներգրավված՝ գլուխները կորցրած, տգիտության մեջ խարխափող ու գոռոզ մեր ազգակիցների ահագնացող քանա՞կն է մեզ հուսալքության մատնել, մանավանդ, որ ժամանակ համարյա չունենք։ Բայց ավելի լավ է ուշ, քան՝ երբեք։ Եթե մեզ մտավորական ենք համարում, ապա պիտի որ գիտակցենք վտանգի չափն ու անմիջապես գործի անցնենք։ Գոնե չհանձնվենք՝ առանց կռվի։

Ներկա օրհասական իրավիճակից դուրս գալու, մեր սեփական տեսակն անխուսափելի ոչնչացումից փրկելու համար՝ մտավորականներս, պարտավոր ենք օրինակ ծառայել, համախմբվել ու դաշնակցել միմյանց հետ՝ առաջին հերթին վայր դնելով մեր մեծագույն խոչընդոտը՝ մեր հիվանդագին գոռոզությունը։ Չկա ժողովրդի համախմբվածություն՝ առանց մտավորականության համախմբվածության։ Ինչպիսին մտավորականությունն է՝ պառակտված ու անկազմակերպ, այնպիսին էլ ժողովուրդը կլինի՝ պառակտված ու անկազմակերպ։ Պիտի գիտակցենք, որ թեկուզ ճշմարիտ գաղափարներով զինված մի խումբ մտավորականների ոտքի կանգնելն ու համախմբվելը դեռ բավարար չէ։ Համազգային խնդիրների լուծման խնդիրը ողջ ազգի խնդիրն է։ Պիտի գիտակցենք նաև, որ միայն մեր ազգային, առաքինի ուսմունքով է հնարավոր բարեփոխել մեր ազգի ինքնությունն ու արմատախիլ անել ներազգային գզվռտոցի ու թշնամանքի արատավոր, ամոթալի ու բոլորիս համար կործանարար երևույթը, որ անհրաժեշտ է, վերականգնելով մեր ազգային Արարչական ուսմունքը, դնել այն ամեն հայի սեղանին ինքնաշտկվելու համար՝ միաժամանակ բացատրելով նրանց, որ դրանից բացի ուրիշ ճանապարհ չկա, որ միայն մեր ազգային, առաքինի արժեհամակարգն է ժողովրդին, հատկապես երիտասարդ սերնդին կրթելու և համախմբելու միակ միջոցը և որ դա հնարավոր է։

Երբ բոլորն իմանան, թե անցյալում ինչպիսի առաքինի

մշակույթ ենք ունեցել, ինչպիսի ազնվասիրտ ազգ ենք եղել, ապա իրենք ևս կազնվանան։ Ու, երբ բոլորն ազնըվանան, այլևս խնդիր չենք ունենա։ Հարկավոր է միշտ հիշել, որ հազարամյակներ շարունակ եղել ենք աստվածային, միասնական ու անպարտելի ազգ, որ մինչև կապիտալիզմի մուտքը համարյա միևնույն Արարչական ու արդարամիտ մշակույթն ենք ունեցել, որ փչանալ ենք սկսել միայն վերջերս, երբ կապիտալիստական կացութաձևի պայմաններում սկսվեց արագորեն քայքայվել մեր առաքինի մշակույթը։ Մեր մշակույթի բացակայությունն ու անբարենպաստ կապիտալիստական մրցակցության պայմանները քանդեցին ու վերացրեցին մեր իմունիտետը, թույլ տալով, որ դուրս գան մեր գենետիկ կոդի խորքերում ծվարած կենդանական բնազդները։

Ամենակարևորը՝ հարկավոր է գիտակցել, որ անձնապես մեր սեփական տեսակի հարատևումը, մանավանդ ողջ աշխարհում նրա գերակայությունը, գոյությունն ու բարգավաճումն ամեն գնով ապահովելու մեր էգոցենտրիկ բնազդը մեզ ազգովի անմիաբանության ու պառակտվածության է հասցրել ու խոցելի դարձրել մեր ընդհանուր թշնամու առջև։ Որպես չափազանց հեռագնա կանխատեսում՝ հարկավոր է նաև գիտակցել, որ մեր ազգային, առաքինի ուսմունքի բացակայության պայմաններում, նույնիսկ մեր անձնական հաղթանակի՝ ողջ աշխարհում մեր սեփական տեսակի գերակայության ու գոյության դեպքում, որ քիչ հավանական է, մեր էգոցենտրիկ մղումների անկաշկանդ ու շարունակական դրսևորումն անխուսափելիորեն բերելու է երկրագնդի բնական ռեսուրսների աստիճանական սպառմանն ու, հետևաբար, մեր սեփական տեսակի կործանմանը։

Ուրեմն մեր ազգային արժեհամակարգի, մեր ուսմունքի օգնությամբ ազգի ինքնությունը բարեփոխելը մեր ապաքինման դեղատոմսի առաջին կետն է։ Իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է։

Վերևում տեսանք, որ ներազգային գզվռտոցն ու, մանա-

վանդ, թշնամանքը սաստկացան կապիտալիստական կացութաձևի պայմաններում։ Կապիտալիզմից առաջ ժողովրդի մեջ համարյա չկար ներազգային գզվռտոց։ Ինչո՞ւ։ Որովհետև կապիտալիզմից առաջ յուրաքանչյուր անհատ իրավունք ուներ մայր բնությունից ազատորեն վերցնել այնքան, որքան անհրաժեշտ էր։ Նույնիսկ ցանկության դեպքում ոչ ոք ոչ մի լծակ չուներ՝ սահմանափակելու կամ արգելելու մեկ ուրիշին՝ վերցնել մայր բնությունից այնքան, որքան անհրաժեշտ էր նրան ու իր ընտանիքին։

Կապիտալիստական կացութաձևի պայմաններում իրավիճակը միանգամից փոխվեց։ Մարդիկ իրավունք ստացան սեփականացնել բոլորին հավասարապես պատկանող հողը, ջուրը, ընդերքը, ընդհանրապես իրավունք ստացան մասնավոր սեփականություն ունենալ։ Իսկ եթե կա իրավունքը, ապա անպայման կգտնվեն նաև այդ իրավունքից օգտվողներ՝ մյուսներին ճնշելու ու հարստահարելու հաշվին, իհարկե։ Ուրիշ կերպ չի լինում։

Կապիտալիստական միջավայրում, «Ով աշխատի, նա կուտի» հնարովի պոստուլատի օգնությամբ, ստորակարգ ոհմակները մեծամասնությանը խաբեցին, հավաքեցին ու ստրկացրեցին քաղաքներում՝ կախման մեջ գցելով նրանց աշխատանքից։ Քաղաքներում մարդու կենսագործունեությունը կախված է նրա աշխատանք ունենալուց կամ չունենալուց։ Քաղաքներում աշխատանքը մարդու օդն է։ Չկա աշխատանք՝ չկա օդ։ Կտրվեց օդը՝ չկա մարդը։ Մարդու ստրկությունը կապիտալիստական հասարակարգում նրա կախվածությունն է աշխատանքից։ Երբ կապիտալիզմն իրավունք տվեց մարդկանց սեփականացնել հողը, ջուրն ու դրանով ստրկացնել գյուղացիներին վարկերի ու հարկերի ծանր բեռի տակ, ապա քանդվեց նաև ազգի կմախքը հանդիսացող գյուղը։ Ընդհանրապես կապիտալիստական կացութաձևի պայմաններում լծակներ են առաջանում՝ սահմանափակել կամ կտրել անցանկալի մեկի օդը։ Իսկ, եթե կան այդ լծակները, ապա անմիջապես առաջ կգան դրանք գործածող ստորակարգ արարածները։

Ազգային արժեհամակարգի օգնությամբ բուժման գործընթացի հետընթացը կանխելու համար, հետևաբար հարկավոր է վերացնել անբարենպաստ պայմանները՝ կապիտալիզմը՝ մարդու կողմից մարդու լեգալացված կողոպուտը: Ուրեմն դեղատոմսի երկրորդ կետը միմյանց հոշոտելու մղող մասնավոր սեփականության իրավունքի վերացումն է:

Կապիտալիզմն, իհարկե, ինքն իրեն չի վերանա: Դրա համար ժողովրդի միահամուռ ջանքերն են անհրաժեշտ: Իսկ ժողովրդին ոտքի կհանի միայն այն համոզմունքը, որ կապիտալիզմն է մեր հիմնական դժբախտությունների պատճառը: Որ միակ ճանապարհը տնտեսության ազգայնացումն ու այն ազգի գերագույն նահապետի՝ Համայն Հայոց Արքայի՝ երկրի հիմնական պատասխանատուի, իշխանության տակ դնելն է: Ազգը պիտի պատրաստ լինի նոր կացութաձևին առաջին հերթին գաղափարապես: Գաղափարապես պատրաստ մարդկանց համար նույնիսկ հրամայական պահանջ կլինի վերացնել կապիտալիզմն ու անցում կատարել մեր ազգային ուսմունքին համապատասխան կացութաձևի՝ ազգայնացված տնտեսության ու միապետական կառավարման:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մեր ազգային ուսմունքն ազգայնացված տնտեսությունն է ու նահապետական՝ միապետական, կառավարումը: Մեր ազգային ուսմունքի հիմնարար սկզբունքը նույնական է Քրիստոնեություն ուսմունքի մեջ պահպանված «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում» հիմնարար սկզբունքի հետ, որը բխում է Արարչական ուսմունքի ամենագլխավոր դրույթից՝ մարդկանց իրավահավասարության ու հավասարազորության դրույթից: Մարդկանց իրավահավասարության ու հավասարազորության դրույթից բխում է նաև իրավունքների ու արգելքների մի կուռ համակարգ, ըստ որի՝

. Ամեն մարդ իրավունք ունի բնությունից ազատորեն վերցնել այնքան, որքան անհրաժեշտ է իր ու իր ընտանիքի կենսագործունեության համար: Ոչ պակաս, բայց նաև ոչ ավել.

. Ոչ ոք իրավունք չունի սահմանափակել կամ արգելել մեկ ուրիշին՝ օգտվել մայր բնության ընձեռած բարիքներից.
. Ոչ ոք իրավունք չունի անհրաժեշտից ավել նյութական բարիքներ վերցնելով կամ որևէ այլ կերպ վնասել մայր բնությանը.
. Ոչ ոք իրավունք չունի մարմնական, մտավոր, հոգևոր, կամ ֆինանսական վնաս պատճառել մեկ ուրիշին.
. Ամեն մարդ, ընտանիք կամ գերդաստան իրավունք ունի զբաղվել իր ընտրած արհեստով, արվեստով կամ այլ տնտեսական գործունեությամբ.
. Ոչ ոք իրավունք չունի շահագործել մեկ ուրիշի աշխատանքը՝ նրան որպես վարձու բանվոր կամ ծառա վերցնելով։ Արգելվում է մարդու կողմից մարդու շահագործումը և այլն:

Մեր ուսմունքից բխող օրենքներն ավելի ծավալուն կերպով շարադրված են «Արարչական Օրենքներում»։ Այդ օրենքների հիման վրա կազմել եմ ապագա «Միապետական Հայաստանի Ազգային Սահմանադրությունը»։

Ինչպես տեսնում ենք, մեր ազգային ուսմունքն ընդհանուր ոչինչ չունի կապիտալիզմի, մանավանդ մոնոպոլիստական կապիտալիզմի հետ։ Մեր ազգային ուսմունքն ու կապիտալիզմն անհամատեղելի գաղափարախոսություններ են, որտեղից էլ բխում է կապիտալիզմի վերացման ու տնտեսության տոտալ ազգայնացման անհրաժեշտությունը։

ԱՄՓՈՓՈՒՄ
Ուրեմն հարկավոր է՝
. Վերականգնել մեր ազգային ուսմունքն ու ամեն հայի սեղանին դնել այն՝ որպես ստանդարտ ինքնաշտկվելու համար.
. Վերացնել կապիտալիզմն ու ազգայնացնել ողջ տնտեսությունը՝ այն դնելով ազգի գերագույն նահապետի՝ Համայն Հայոց Արքայի, իշխանության տակ։

Միայն այս ճանապարհով կդառնանք միասնական ու անպարտելի ազգ։ Միայն այս ճանապարհով կունենանք ազ-

գային պետություն ու հայրենիք։ Միայն այս ճանապարհով կկանգնի արտագաղթը, նույնիսկ կսկսվի հակառակ գործընթացը։ Միայն այս ճանապարհով կկարողանանք վերականգնել մեր կորցրած տարածքներն ու փրկել մեր սեփական տեսակը ոչնչացումից։

ՀԱՎԵԼՎԱԾ

Ներազգային գզվռտոցը ստիպում է բոլորին, ինքնապաշտպանության մղումով իհարկե, ներփակվել, դառնալ քարացած սրտով պրագմատիկ մեքենաներ, կամ ավելի ստույգ՝ գազաններ։ Շատերն, իհարկե՝ ոչ միայն ինքնապաշտպանության մղումով։

Սա է պատճառը, որ ամեն քայլափոխի ականատես ենք լինում դիմացինի հանդեպ անհարգալից վերաբերմունքի, դիմացինի արժանիքներն ու արժանապատվությունը նսեմացնող ոտնձգությունների։ Անտառի գազանների պես, ամեն մեկս ջանում ենք մեր շուրջը ստեղծել փշալարերով պատված պարսպի պատերից դուրս ցցված նիզակների ու կացինների մի ստվար դաշտ աղմուկ-աղաղակի, դիմացինի կարծիքը արհամարհելու, միայն մեր կարծիքն ու խոսքը լսելի դարձնելու և նման այլ բաների տեսքով։ Իսկ, եթե հաշվի առնենք մեզ ներհատուկ գոռոզությունն ու եսասիրությունը, ապա պատկերն ավելի կամբողջանա։ Այսպես էլ հոշոտում ենք և՛ միմյանց, և՛ ինքներս մեզ։ Ինքներս մեզ, որովհետև փոխադարձ թշնամական միջավայրն անբարենպաստ է ազդում բոլոր կողմերի վրա։ Ինչպե՞ս։

Օրգանիզմի կենսագործունեությունն ամբողջովին կախված է միջավայրից։ Ձուկը ջրից դուրս չի կարող ապրել, մարդն էլ՝ ջրում, օրինակ։ Պարզվում է նաև, որ մարդու օրգանիզմն ունի իր սեփական գիտակցությունը։ Ու դժբախտաբար, երբեմն էլ բարեբախտաբար, այն ոչ մի կախում չունի մարդու սեփական գիտակցությունից։ Անբարենպաստ պայմաններում հայտնվելով՝ մարդու օրգանիզմը միջոցներ է ձեռնարկում ինքնապահպանման համար, նույնիսկ այն դեպքում, երբ մարդը չի էլ գիտակցում դրանց անհրաժեշտության մասին։ Բայց լինում է և հակառակը։ Նույնիսկ,

երբ մարդը գիտակցում է անբարենպաստ պայմանների առկայությունը, գիտակցում է ինքնապահպանման միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, միևնույն է՝ չի կարող ազդել օրգանիզմի գիտակցության ու նրա ձեռնարկած արագ ինքնառնչացման ընթացքի վրա։

Իսկ, եթե ավելի մանրամասն, ապա անբարենպաստ միջավայրում հայտնվելով, մեր օրգանիզմը սկսում է արագ ինքնառնչացման գործընթացը, քանի որ հենց նույն ինքնապահպանման բնազդով չի ուզում մեզ մատնել երկարատև տառապանքների։ Մեր սեփական գիտակցությունն անզոր է փոխել որևէ բան, եթե օրգանիզմն արդեն սկսել է այդ ինքնանառնչացման գործընթացը։

Իսկ օրգանիզմի ինքնառնչացման գործընթացը սկսվում է ամեն անգամ, երբ մարդն ապրում է անբարենպաստ միջավայրում, վարում է անբնական ապրելակերպ։ Ասենք, օրինակ՝ չի շնչում լիաթոք, չի ընդունում անհրաժեշտ քանակի ու որակի հեղուկ, չի ընդունում լիարժեք՝ անհրաժեշտ որակի ու քանակի սնունդ, կամ որկրամոլությամբ, ալկոհոլով, ծխախոտով և այլ վնասակար նյութերով թունավորում է սեփական օրգանիզմը, կամ տքնում է ուժերից վեր, ապրում թշնամիների միջավայրում՝ անսեր ու լքված, կամ ապրում աննպատակ ու անիմաստ կյանքով և այլն։

Ցավալի է, բայց նմանապես ողջ հասարակությունը կարող է մտնել ինքնառնչացման ռեժիմի մեջ։ Ու որքան էլ մտավորականությունը, նույնիսկ եթե այն կա ու համախմբված է, ջանա դուրս բերել նրան այդ ռեժիմից, միևնույն է ոչինչ չի ստացվի։

Բայց հուսանք, որ մեր ազգային օրգանիզմը դեռ չի մտել ինքնառնչացման ռեժիմի մեջ։

©Դավիթ Միրզոյան, Մայիս 2013
www.davitmirzoyan.com

ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Ե՛վ դեմոկրատիան, և՛ բռնապետությունը նահապետական կարգից սերված, բայց աղավաղված ու ծայրահեղության հասցված ձևեր են։

Սկզբում նահապետական կարգն էր, երբ ընտանիքի, գերդաստանի, տոհմի, համայնքի ու ազգի նահապետներն իշխում ու կառավարում էին իրենց ենթակա տիրույթները՝ ազգի գերագույն նահապետ արքայի գլխավորությամբ։ Առկա էր կառավարման հիերարխիկ ու բրգաձև կառույց։ Այն միմյանց հետ փոխկապակցված ու համագործակցող նահապետների միջև ամուր ու կուռ կառույց էր՝ սեփական ժողովրդի բարեկեցությունն ու երջանիկ կյանքն ապահովելու համար։

Միապետության հիմքում միասնական ուսմունք կա։ Միապետի ու ժողովրդի շահերն ու նպատակները համընկնում են։ Հետևաբար, կարիք չկա որևէ բռնության։ Նահապետները հոգ են տանում իրենց հպատակների կրթության, բարեկեցության, պատվի ու արժանապատվության մասին այնպես, ինչպես ընտանիքի հայրն է հոգ տանում իր ընտանիքի մասին։

Բռնապետությունն իր կառավարման ձևով նման է միապետությանը։ Տարբերությունն այն է, որ բռնապետական համակարգում միասնական ուսմունք չկա։ Բռնապետի ու ժողովրդի շահերն ու նպատակները չեն համընկնում։ Հետևաբար, բռնությունն անհրաժեշտ է՝ երկիրը կառավարելու ու քաոսից խուսափելու համար։ Բռնապետական համակարգում հաճախ ժողովրդի բարեկեցության փոխարեն բռնապետի ու ողջ իշխանական կառույցի նպատակն է սեփական դիրքի պահպանումն ու անձնական բարեկեցությունը։ Բռնապետությանը բնորոշ է մի կողմից իշխանական կառույցի, իսկ մյուս կողմից՝ ժողովրդի շահերի ու նպատակների բախում։

Միապետությունը կարող է բռնապետության վերածվել, եթե վերանա միասնական ուժմունքն ու առաջանա հակամարտություն մի կողմում իշխանական կառույցի, իսկ մյուս կողմում՝ ժողովրդի շահերի ու նպատակների միջև: Ասենք, օրինակ՝ երբ միապետը շարունակի մնալ արդար ու բարի, իսկ ժողովուրդը դառնա գող ու ավազակ: Կամ, երբ միապետը դառնա գող ու ավազակ, իսկ ժողովուրդը շարունակի մնալ արդար ու բարի: Կամ, երբ երկուսն էլ դառնան գող ու ավազակ: Վերջին դեպքում բռնապետությունը կարող է չարիք դառնալ նաև հարևան ազգերի համար:

Դեմոկրատական կառավարման համակարգն ևս շատ արագ բռնապետության կվերածվի, եթե վերանա միասնական ուժմունքն ու հակասություն ծագի մի կողմում իշխանական թևի, իսկ մյուս կողմում՝ ժողովրդի շահերի ու նպատակների միջև: Մեր դեպքում դա միանգամից տեղի ունեցավ մեր անկախացում ստանալուց հետո, որովհետև մենք ի սկզբանե չունեինք միասնական ու համընդհանուր ուժմունք: Հիմա էլ չունենք... Փաստորեն, մեր դեպքում բռնապետությունն անխուսափելի էր: Բռնապետությունից դուրս գալու միակ ճանապարհը մեր ազգային՝ նահապետական, ուժմունքը վերականգնելն ու սերմանելն է: Երբ բոլորն ունենան միևնույն արժեհամակարգը, ապա բռնապետություն չի լինի:

Միապետությունը ենթադրում է երկրի հիերարխիկ կառավարում՝ միասնական ուժմունքի հենքի վրա, որը փաստորեն համեմատելի է ժամանակակից տերմինաբանությամբ՝ սահմանադրական միապետության հետ:

Բռնապետությունը ենթադրում է երկրի միանձնյա կառավարում՝ առանց որևէ միասնական ուժմունքի առկայության: Բռնապետի հրամաններն ի կատար են ածվում նույնիսկ, եթե հակասում են ժողովրդի շահերին: Բռնապետությունը նման է ժամանակակից տերմինաբանությամբ՝ բացարձակ միապետությանը: Բռնապետության թերությունը այն է, որ միասնական ուժմունքի բացակայության պայմաններում միանձնյա իշխանավորի չարակամ, եսա-

կենտրոն քմահաճույքները կարող են օրենքի ուժ ստանալ ու պարտադրվել ժողովրդին։ Բոնապետության առավելությունն այն է, որ արդարամիտ միապետի դեպքում նրա որոշումները, օրենքի ուժ ստանալով, օրինապահ մարմինների միջոցով զսպում են գող ու ավազակ ժողովրդի նկրտումներն ու հավասարակշռություն պահպանում երկրում։

Դեմոկրատական կառավարման համակարգը ենթադրում է հասարակության բոլոր անդամների իրավահավասարություն, նաև՝ հավասարազորություն, հետևաբար՝ համահավասարեցում։ Հասարակության բոլոր անդամները՝ և՛ կին, և՛ տղամարդ, սովորաբար տասնութ տարեկանից հետո համահավասարեցվելով, իրավունք են ստանում հավասար կարգավիճակով մասնակցել պետության կառավարմանը։

Չնայած դեմոկրատական կառավարման համակարգը շատերը մարդկության բարձրագույն նվաճումն են համարում, բայց այն իրեն ներհատուկ շատ մեծ թերություններ ունի։

Նախ՝ բոլորը չեն կարող իմաստուն լինել։ Մարդկանց մեծամասնությունը, թեկուզ հենց տարիքի բերումով, բավարար իմաստնություն չունի՝ ճշմարիտ որոշումներ ու օրենքներ ընդունելու համար։ Հետևաբար, մեծամասնության կարծիքը կամ ընտրությունը չի կարող միշտ ճիշտ լինել։

Երկրորդ՝ դեմոկրատական կառավարման համակարգը ոչ իմաստուն մեծամասնությանը հնարավորություն է տալիս կառավարման լծակների մոտ բերել իր ներկայացուցիչներին։ Իսկ, եթե այդ մեծամասնությունը տգետ ու հանցագործ է, ապա կառավարման լծակների մոտ կհայտնվեն տգետներ ու հանցագործներ։ Դեմոկրատական կառավարման համակարգում չկան տգետ մեծամասնության կողմից կառավարման լծակները զավթելու հնարավորությունը կանխարգելող մեխանիզմներ։ Իսկ, եթե հաշվի առնենք, որ հանցագործներն ավելի արագ են կազմակերպվում՝ խմբեր խմբակցություններ ու կուսակցություններ կազմելով ու հնարավորություն ստանում մասնակցել ընտրություններին, զավթել ու մշտապես իրենց ձեռքում պահել իշխանու-

թյունը, ապա պատկերն ավելի կամբողջանա։

Երրորդ՝ դեմոկրատական կառավարման համակարգն անարդյունավետ է։ Նույնիսկ, եթե արդար ընտրությունների արդյունքում կառավարման լծակների մոտ են հայտնվել հասարակության որոշ իմաստուն անդամներ, ապա մնացածին համոզելու և քվեարկության ճանապարհով որևէ որոշման հանգելու համար անհամաչափ երկար ժամանակ կպահանջվի։ Իսկ, եթե առկա է տգետ ներկայացուցիչների մեծամասնություն, ապա անհնար է պատկերացնել որևէ իմաստուն որոշում։ Կոռումպացված ներկայացուցիչների որոշումները կլինեն միայն սեփական գրպանին ի նպաստ։

Չորրորդ՝ դեմոկրատական կառավարման համակարգը վնասակար է թեկուզ հենց այն պատճառով, որ հասարակության բոլոր անդամներին կտրում է իրենց հիմնական գործից՝ ստեղծագործ աշխատանքից, ու համարյա մշտապես գամում երկրի կառավարման գործին, տարբեր մակարդակների ներկայացուցիչների ընտրություններին մասնակցելու, նրանց գործունեությունը վերահսկելու միջոցով և այլն, ու համարյա մշտապես խճճում նրանց կառավարման խնդիրների հորձանուտում։

Հինգերորդ՝ դեմոկրատական կառավարման համակարգը հատկապես վնասակար է նրանով, որ երկրի հիմնական տեր չի ենթադրում։ Կան միայն ժամանակավոր կառավարիչներ։ Հետևաբար, կա ժամանակավոր ուտող փախնողների առաջացման միջավայր։ Իսկ, եթե այն կա, ապա կառաջանան և նրանք՝ կաշառակերներն ու բոլոր տեսակի հանցագործները։ Կոռուպցիան դեմոկրատական կառավարման համակարգի ամենահիմնական ուղեկիցն է։ Իսկ, երբ վերևներում համատարած կոռուպցիա է՝ նույնը կլինի նաև ներքևներում։

Չնայած այս ամենին՝ դեմոկրատիայի արժեքը կասկածի տակ դնելն իսկ սրբապղծություն է շատերի համար, նույնիսկ այն համատարած իրողությունն աչքների առաջ, որ դեմոկրատական կառավարում որդեգրած երկրների մեծա-

մասնությունը բռնապետությունների են վերածված՝ հիմնականում թույլ ու անկազմակերպ բնակչությամբ, ուր ժողովրդի կարծիքը համարյա հաշվի չի առնվում, ուր ժողովուրդը չի կարողանում որևէ կերպ մասնակցել պետության կառավարմանը, ուր պետության կառավարումն իրականացնում են միայն իշխանության ձգտող կուսակցությունները, փողատերերը և այլն, որոնք իրականում հետապնդում են նեղ անձնական ու խմբակային շահեր։

Մարդիկ միաժամանակ անտեսում են այն իրողությունը, որ ժամանակակից միապետությունները կայուն ու բարգավաճող երկրներ են։ Ի դեպ, ներկայումս աշխարհում քառասունչորս միապետություն կա։ Ոչ մեկում չկան ժողովրդական ընդվզումներ։ Մարդիկ ապրում են խաղաղ, ստեղծագործ աշխատանքով՝ հաշտ ու երջանիկ։ Օրինակ՝ Բութանի թագավորությունում կա երջանկության մինիստրություն։ Այն պարբերաբար հարցում է անցկացնում բնակչության շրջանում՝ բացահայտելու և միապետին ներկայացնելու բնակչության երջանիկ ու դժբախտ մարդկանց տոկոսը։ Քանի որ միապետն ընդհանրապես իր երկրի հիմնական տերն է, ապա գերդաստանի նահապետի պես շահագրգռված է կայուն ու հզոր երկիր ունենալ, հետևաբար՝ երջանիկ ու նվիրված ժողովուրդ։

Միապետական կառավարման համակարգում կա երկրի հիմնական պատասխանատու՝ միապետը։ Նա է նշանակում կամ հաստատում բոլոր պաշտոնյաներին։ Հետևաբար, միապետն է պատասխանատու ցանկացած պաշտոնյայի լավ կամ վատ արարքի համար, ընդհանրապես՝ երկրի ընդհանուր իրավիճակի համար։ Միապետական համակարգում չկա ժամանակավոր ուտող փախնողների առաջացման՝ կոռուպցիայի միջավայր։ Միապետական համակարգում կոռուպցիայի եզակի դեպքերը բացառված չեն։ Բայց, եթե կոռուպցիան համընդհանուր ու շարունակական բնույթ ստանա, ապա մարդկանց դժգոհությունն իրավացիորեն կուղղվի երկրի հիմնական պատասխանատուի՝ միապետի, դեմ։

Իսկ, թե ինչ երաշխիք կա, որ մեր՝ հայ իրականության մեջ չի շարունակվի համատարած կոռուպցիան, եթե նույնիսկ անցնենք միապետական կառավարման, ապա պետք է ասեմ, որ իմ կազմած Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրության մեջ, ի թիվս մարդու արժանապատվությունը պաշտպանող այլ հոդվածների, ամրագրել եմ հպատակների զենք կրելու, նաև՝ զինված ապստամբության իրավունքը։ Այն նույն իրավունքը, որ նրանք ունեին Նահապետ Հայկի ժամանակ։

Եթե դեմոկրատիան արդյունավետ համակարգ լիներ, ապա այն նույն երկրները, որոնք հորդորում են մեզ որդեգրել դեմոկրատական կառավարում, իրենց երկրներում վաղուց հրաժարված կլինեին միապետությունից։ Զմոռանանք, որ արևմտյան աշխարհի շատ երկրներ միապետություններ են՝ Նորվեգիան, Դանիան, Շվեդիան, Հոլանդիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Մոնակոն, Լիխտենշտեյնը, Անդորրան, Իսպանիան, Ճապոնիան ու Մեծ Բրիտանիան՝ Կանադայի, Ավստրալիայի ու Նոր-Զելանդիայի հետ միասին։ Նույնիսկ Վատիկանն է միապետություն։ Պապը Վատիկան Քաղաքի միապետն է։

Ամեն պետություն կառուցվում է որևէ ուսմունքի հիման վրա։ Դեմոկրատիան նույնպես ուսմունք է։ Ընդ որում, մեզ համար օտար ծագում ունեցող։ Փաստորեն, մեր պետականության հիմքում ընկած է օտարի ուսմունքը։ Հետևաբար, մենք անկախ չենք։ Իսկ, եթե հաշվի առնենք, որ ո՛չ տնտեսական, ո՛չ էլ քաղաքական անկախություն ենք ունեցել, նաև՝ որ մշտապես արտաքին աշխարհի մշակութային ճնշման տակ ենք, ապա պատկերն ավելի կամբողջանա։

Մենք ազգովի կորցրեցինք մեր անկախությունը, երբ կորցրեցինք մեր ազգային ուսմունքն ու կախման մեջ ընկանք օտարների ուսմունքներից։ Մեր կախվածությունը դարավոր պատմություն ունի։ Այն շատ վաղուց է սկսվել։ Ուսմունքները սովորաբար արագորեն կրոն դառնալու միտում ունեն։ Հետևաբար, ամեն ինչ սկսվեց, երբ օտար կրոնները մտան ու ապականեցին մեր ազգային ուսմունքը։

ճիշտ է, մեր համազգային շարժման շնորհիվ ԽՍՀՄ-ը քայքայվեց, ու մենք ի վերջո ստացանք պետական անկախություն։ Բայց, քանի որ չունեինք մեր սեփական ուսմունքը, ապա չկարողացանք պահել մեր անկախությունը, ընդունեցինք մեզ համար օտար՝ դեմոկրատական կառավարման ու կապիտալիստական տնտեսավարման համակարգն ու կախման մեջ ընկանք դրանցից։ Մենք չենք կարող անկախ լինել, քանի դեռ մեր պետության հիմքում ընկած չէ մեր իսկ գենետիկ կոդից բխող մեր ազգային ուսմունքը։ Ներկայումս օտարինն է՝ դեմոկրատիան կապիտալիզմի հետ համաձուլված։ Ո՛չ դեմոկրատիան է մերը, ո՛չ բռնապետությունը, ո՛չ էլ կապիտալիզմը։ Մերը նահապետական կարգն է, կամ այլ կերպ ասած՝ միապետությունն ու ազգայնացված տնտեսությունը։

Եթե դեմոկրատիան միայն կառավարման ձև է, իսկ կապիտալիզմը՝ միայն տնտեսավարման, ապա նահապետական կարգը և՛ կառավարման, և՛ տնտեսավարման ձև է։ Նահապետական չի նշանակում հետադիմական կամ ագրարային։ Այն միայն կառավարման ու տնտեսավարման ձև է։

Աշխարհում ընդհանրապես գոյություն ունի երկու արժեհամակարգ։ Մեկը մարդկային, իսկ մյուսը՝ անմարդկային։ Առաջինը ներկայացված է «Արարչական Օրենքներ»-ով ու իմ կազմած «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությամբ»՝ ըստ որի բոլոր մարդիկ իրավահավասար ու հավասարազոր անհատներ են։ Հետևաբար, արգելվում է ստրկատիրությունը, ճորտատիրությունը, նաև՝ սրանց ժամանակակից ձևը՝ կապիտալիզմը։ Հայաստանում ի սկզբանե ստրկատիրություն ու ճորտատիրություն չի եղել։ Նահապետ Հայկի ժամանակ, նրանից առաջ ու նրանից հետո Հայաստանում մարդիկ ապրել են՝ ազատորեն օգտվելով մայր հողի բարիքներից։ Դա մեր Հայկ-նահապետական արժեհամակարգն էր։ Նահապետն իր ազգի և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ առաջնորդն էր։

Երկրորդը՝ անմարդկայինը, Բելի արժեհամակարգն է՝ կապիտալիզմը։ Հայկի ու Բելի առճակատումը երկու արժեհամակարգերի բախումն էր. մի կողմից Հայկ-նահապետական, իսկ մյուս կողմից՝ Բել-կապիտալիստական։ Այդ առճակատման էությունը ներկայացրել եմ իմ «Հայկ և Բել» ակնարկով։

Ըստ մեր Հայկ-նահապետական ուսմունքի՝ երկրում ամեն ինչ հավասարապես պատկանում է բոլորին։ Հետևաբար, մեր տնտեսությունը պիտի ազգայնացվի, ոչ ոք իրավունք չունի սեփականացնել հայրենի բնաշխարհի որևէ հատված կամ ճորտի տեղ բանեցնել սեփական ազգակիցներին։ Տնտեսության կարևորագույն ոլորտները պիտի գտնվեն Համայն Հայոց Արքայի՝ ազգի գերագույն նահապետի, իշխանության տակ։ Արքան է իր ազգի գերագույն նահապետը՝ և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ՝ մտավոր, ռազմական, տնտեսական առաջնորդը, գերագույն օրենսդիրը, օրինապահն ու դատավորը։ Ըստ մեր ազգային ուսմունքի մենք պիտի ունենանք ազգայնացված տնտեսություն ու միապետական կառավարում։

Բայց Հայաստանում հիմա գուցե միանգամից ոչինչ չըստացվի։ Մեր ժողովուրդը, վախենամ, հիմա չհամարձակվի պատասխանատվություն վերցնել իր վրա՝ ազգայնացնելու երկրի ողջ տնտեսությունը։ Մարդիկ դեռ շատ են վախեցած կոմունիզմից, երբ բոլշևիկյան հեղափոխությամբ հողն ու գործարաններն ազգայնացվեցին, բայց հետո, փաստորեն, դրվեցին կոմունիստ կառավարիչների իշխանության տակ։

Սակայն չմոռանանք, որ հողի ու ընդհանրապես տնտեսության ազգայնացման գաղափարներն այնքան հզոր էին, որ 1920 թվականին հայոց բանակի զինվորները, որ հիմնականում գյուղացիներ էին, հանձնեցին Ղարսի ամրոցն ու կազմալուծեցին ճակատը։

Հայ ժողովուրդը հիմա շնչահեղձ է լինում կապիտալիզմի պատճառով, բայց միևնույն ժամանակ սարսափում է կո-

մոնիզմից։ Ուրիշ ոչինչ չի պատկերացնում։ Չի պատկերացնում, որ կա երրորդ ձևը։ Իրականում՝ առաջին ձևը՝ նահապետական կարգը։ Բացատրելու ոչ՝ ժամանակ կա, ոչ՝ էլ՝ հնարավորություն։ Սակայն ամենամեծ դժբախտությունն այն է, որ չեն էլ լսում։ Ոչ ոք չի լսում. ո՛չ ազգի մասին մտահոգ մտավորականները, ո՛չ էլ՝ մնացածը։

Ժողովուրդը կցանկանար օլիգարխներից, ավելի ճիշտ՝ խոլիգարխներից, խլել գողունը, բայց վախենում է չկարողանա պահել այն ներկայիս դեմոկրատական կառավարման համակարգի միջոցով՝ հաշվի առնելով վերջին տարիների դառը փորձն ու հատկապես ազնիվ ու ազգանվեր մարդկանց անկարողությունը երկրում։

Ժողովրդին պատասխանատվությունից կփրկի միապետությունը։ Մի բան է գողունը խլել ու չկարողանալ պահել այն իրեն վարկաբեկած դեմոկրատական կառավարման համակարգի միջոցով, մեկ այլ բան է գողունը խլել ու հանձնել միապետի տնօրինությանը՝ ողջ պատասխանատվությունը դնելով նրա վրա։

Ամեն դեպքում, երկրին հիմնական տեր է պետք։ Մեզ ժամանակավոր ուտող փախնողներ պետք չեն։

Իսկ միապետ կարող է լինել միայն ամենաիմաստուն ու բանիմաց մարդը, ով չի տենչում միայն իշխանության, ում միակ նպատակն է՝ ծառայել իր ժողովրդին, ով իրեն վստահված երկիրն ու գանձարանն իր սեփականը չի համարի, ով տոգորված է իր երկրում արդարություն ու բարորություն հաստատելու ու պահպանելու ձգտումով, ով նաև տոգորված է ողջ աշխարհին արդարություն, խաղաղություն ու բարորություն բերելու ձգտումով։

©Դավիթ Միրզոյան, Ապրիլ, 2013
www.davitmirzoyan.com

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է: Իսկական առաջնորդը գաղափարն է, որ առաջնորդում է առանց առաջնորդի: Առանց գաղափարի չկա հեղափոխություն: Եթե գաղափարը տարածում ստանա ու բոլորն ընկալեն ու ընդունեն այն, ապա հեղափոխությունն ավարտված կլինի:

Գաղափարի հետևում կարիք չկա, որ կանգնած լինի որևէ դեմք: Իհարկե, առանց դրա չի լինում: Ամեն գաղափար ունի գաղափարակիր: Բայց ոչ մի կարիք չկա, որ այդ գաղափարակիրը փողոց դուրս գա կոչերով ու խոստումներով: Մեր սխալն այն է, որ մենք առաջնորդ ենք փընտրում՝ նրա վրա դնելու ոչ միայն գաղափարակրի դերը, այլ նաև այդ գաղափարի տարածման ու մարդկանց ուղղորդելու դերը, բայց հիմնականում մարդկանց համոզելու, ընդհուպ մինչև գործի ողջ ծանրությունը սկզբից մինչև վերջ իր ուսերին տանելու առաքելությունը: Առաջնորդների վրա հույս դնող ազգը կործանման է դատապարտված: Կարևոր չի, թե ով է ասում, կամ՝ ինչպես: Կարևորն այն է, թե ինչ է ասվում:

Իշխանափոխությունը հեղափոխություն չէ: Իշխանափոխությունն իրականում մարդափոխություն է: Ոչ մի օգուտ չունի փոխել իշխանավորներին, միևնույն ժամանակ կառավարման ու մանավանդ տնտեսավարման համակարգը թողնելով անփոփոխ: Մեր ազգային ճգնաժամի պատճառն այն է, որ մեր պետականության հիմքում ընկած է օտարի համակարգը՝ դեմոկրատիայի, կապիտալիզմի ու լիբերալիզմի թունավոր խառնուրդը:

Խնդրի մասին ողջ ճշմարտությունն իմանալն արդեն գործի կեսն է: Բայց դեռ բավական չէ տեսնել ու բարձրաձայնել հիվանդությունը: Միայն ախտանշաններից անընդհատ բողոքելը հեռու չի կարող տանել: Հարկավոր է ախտորոշել հիվանդությունն ու բուժամիջոց առաջարկել: Այլապես ժողովուրդը ոտքի չի կանգնի: Ոչ մի օգուտ չունի նաև

առանց բուժամիջոցի կիրառման ապաքինվելու դատարկ կոչեր անել։

Ժողովուրդը դատարկ կոչերի ու խոստումների հետևից չի գնա։ Մարդիկ չեն համախմբվում, որովհետև գաղափար չեն տեսնում։ Չեն տեսնում ինչով փոխարինել իրեն վարկաբեկած դեմոկրատական կառավարումն ու կապիտալիստական տնտեսավարումը։ Եթե ժողովուրդը տեսնի այն գաղափարը, որը ներկա իրավիճակից դուրս կբերի երկիրը, ապա չի արտագաղթի, ոտքի կկանգնի։

Միավորվում են միայն մեկ գաղափարի շուրջ։ Հնարավոր չէ համախմբվել միմյանցից տարբեր մի քանի գաղափարների շուրջ։ Եթե չկա այդ միակ գաղափարը, ապա ոչ մի համախմբում տեղի չի ունենա։ Ներկայումս գործը տեղից չի շարժվում, որովհետև մտավորականների շրջանում չկա որևէ համաձայնություն։ Դեռ ոչ ոք չգիտի՝ ինչով փոխարինել ներկա կացութաձևը։ Բոլորը միայն իշխանափոխության, իրականում՝ մարդափոխության կոչեր են անում։ Միակ գաղափարը, որի շուրջ ժողովուրդը գուցե համախմբվի առանց որևէ կոչերի, հետևյալն է։ Մեր ժողովրդին պառակտում են՝

1. Կապիտալիզմը
2. Կուսակցությունները
3. Կրոնները
4. Միասնական ուսմունքի չլինելը
5. Ազգի հիմնական պատասխանատու նահապետի բացակայությունը։

Ուրեմն հարկավոր է՝

1. Ազգայնացնել տնտեսությունը
2. Վերացնել դեմոկրատական կառույցը
3. Վերացնել բոլոր կրոնները
4. Ներդնել մեր ազգային ուսմունքը
5. Վերականգնել նահապետական կարգը արքա միապետի՝ երկրի հիմնական պատասխանատուի, գլխավորությամբ։

Անկախություն ունենալու համար նախ պետք է սեփական ուսմունք ունենալ։ Պետության կառուցումը սկսվում է ուսմունքից։ Առանց ուսմունքի պետություն չեն կառուցում։ Մենք դեռ պետություն չունենք, քանի որ կորցրել ու դեռ չենք վերականգնել մեր ազգային ուսմունքը։ Մեր երկրում իշխում է օտարի ուսմունքը՝ դեմոկրատական կառավարումն ու կապիտալիստական տնտեսավարումը։

Աշխարհում միայն մեկ ճշմարիտ ուսմունք կա։ Դա մեր Արարչական ուսմունքն է։ Բոլոր ուսմունքները մերինից սերված, բայց մերի ոչ ամբողջական, երբեմն էլ՝ աղավաղված տարատեսակներն են։ Ըստ մեր Արարչական կամ Հայկ-նահապետական ուսմունքի՝ բոլորն ի ծնե հավասարազոր անհատներ են։ Հետևաբար, բնության մեջ ամեն ինչ հավասարապես պետք է պատկանի բոլորին, տնտեսությունը պետք է ազգայնացվի ու դրվի Համայն Հայոց Արքայի՝ ազգի գերագույն նահապետի ու երկրի հիմնական պատասխանատուի, իշխանության տակ։ Արքան է իր ազգի գերագույն նահապետը՝ և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ՝ մտավոր, ռազմական ու տնտեսական առաջնորդը, գերագույն օրենսդիրը, օրինապահն ու դատավորը։

Մեր անկախության վերականգնման միակ ճանապարհը մեր ազգային՝ Արարչական, ուսմունքը վերականգնելն ու սերմանելն է։ Դա մտավորականության պարտականությունն է։ Բայց նախ մտավորականները պիտի համախմբվեն։ Առանց մտավորականության համախմբվածության չկա ժողովրդի համախմբվածություն։ Ինչպիսին մըտավորականությունն է՝ պառակտված ու անկազմակերպ, այնպիսին էլ ժողովուրդը կլինի՝ պառակտված ու անկազմակերպ։ Անիմաստ է համախմբվածություն ակնկալել ժողովրդից, եթե այն չկա մտավորականության մեջ։

Մտավորականն ազգի ճակատագրով մտահոգված անհատն է՝ անկախ ճանաչումից, տարիքից ու մասնագիտությունից։ Ազգի ճակատագիրն անհնար է պատկերացնել՝ առանց ազգային ուսմունքի։ Հետևաբար, մտավորականն ազգային ուսմունքի կրողը, կրողն ու սերմնացանն է։

Առանց ազգային ուսմունքի ու այն սերմանող մտավորականության չկա ազգ։ Մտավորականությունն ազգային ուսմունքի շուրջ համախմբված մտավորականների կորիզն է։ Մտավորական չեն նրանք, ովքեր չեն համախմբվում։

Երբ բոլորը կամ գոնե մեծամասնությունը հավատան ու ընդունեն մեր ազգային ուսմունքն ու դրանից բխող սահմանադրությունը, ապա ամեն ինչ կսկսի արագ փոխվել՝ համազգային ալիք կբարձրանա ու ազգային ժողովը ստիպված կլինի անցկացնել հանրաքվե այնպես, ինչպես Ղարաբաղյան շարժման ժամանակ։ Դժվարը, սակայն, ուղերձը տեղ հասցնելն է։ Միջոցները շատ սահմանափակ են, մարդիկ էլ՝ թերահավատ։

Երկրում ամեն փոփոխություն ուղիղ համեմատական է այն ցանկացողների քանակին ու ցանկության ուժին։ Որքան մեծ է ցանկացողների բազմությունը, այնքան քիչ ժամանակ կպահանջվի՝ այն իրագործելու համար։ Անհնար բան չկա։ Բայց պետք է հիշել, որ մեծ փոփոխությունները մեծ ջանքեր ու ժամանակ են պահանջում։

Մենք պետություն կդառնանք միայն, երբ ազգ դառնանք, երբ ճանաչենք ինքներս մեզ։ Ազգն ինքն իրեն կճանաչի միայն այն ուսմունքով, որն իր նախնիները ստեղծել են։ Առանց ուսմունքի ու պատմության ժառանգության չկա ազգ։ Ուրեմն, պետություն դառնալու բանալին մեր ազգային ուսմունքն է։ Հրամայական անհրաժեշտություն է՝ սերմանել մեր ազգային ուսմունքը։ Ինչպես ասվեց, դա ազգայնացված տնտեսությունն է ու նահապետական կառավարումը։ Մտավորականության պարտականությունն է վերականգնել ու սերմանել մեր ազգային ուսմունքը։ Առանց դրա ո՛չ ազգ կդառնանք, ո՛չ էլ պետություն կունենանք։

Ներկայումս կան շատ բանիմաց մտավորականներ։ Սակայն չկա մտավորականություն՝ մեկ գաղափարի շուրջ միավորված նվիրյալների կորիզ։ Առաջին քայլով պետք է ստեղծել այդ կորիզը՝ մտավորականությունը, որի շուրջն էլ շերտ առ շերտ կձևավորվի ազգը՝ մտավորականությու-

նից բրգաձև դեպի ներքև։ Սկզբում համախոհները, հետո՝ համակիրները, հետո՝ մնացած բոլորը։ Ու այս ամենը կուղեկցվի մեր ազգային ոսմունքի միաժամանակյա սերմանումով։ Նույն բրգաձև կառույցը կպահպանվի հետագայում՝ որպես պետության կառավարման համակարգ։

Մեր ազգային ոսմունքի գաղափարները տարածելու համար մտավորականությունը կօգտագործի ցանկացած հնարավոր միջոց՝ գեղարվեստական գրականությունից մինչև դասախոսություններ ու հարցազրույցներ։ Եթե ամեն տեղեկացված անհատ չսահմանափակվի միայն լսելով ու համաձայնվելով գաղափարի հետ, այլ նաև տարածի ու հորդորի մյուսներին տարածել այն, ապա սայլը տեղից կըշարժվի՝ հեղափոխությունը տեղի կունենա։ Նրանք, ովքեր տեղեկանալուց ու գաղափարն ընդունելուց հետո չեն տարածում այն, ապա կասեցնում են հեղափոխությունը։

Իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է։

©Դավիթ Միրզոյան. Սեպտեմբեր, 2013
www.davitmirzoyan.com

ԻՆՉՈՒ Է ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Դեմոկրատական կառավարման համակարգը երկիրն ամենաքիչը քաոսի է հանգեցնում, իսկ որպես կանոն՝ հանցագործների իշխանության։ Ինչպե՞ս։

Բանն այն է, որ բոլորը չեն կարող կազմակերպվել։ Արագորեն կազմակերպվում են հանցագործները։ Հանցագործների մոտ շատ արագ կենդանական փոխհարաբերություններին հատուկ սուբորդինացիա է հաստատվում։ Արագորեն առաջանում է իշխողների ու իշխվողների հիերարխիա։

Իսկ մնացած մարդկանց մոտ նման կենդանական սուբորդինացիա չի առաջանում, որովհետև նրանց համար անընդունելի է իշխելու և իշխվելու կենդանական հիերարխիան։ Հավասարազոր անհատների խումբը չի կարող կազմակերպվել այնպես, ինչպես կազմակերպվում են հանցագործները՝ խմբեր, խմբակցություններ ու կուսակցություններ կազմելով։ Իրավահավասար ու հավասարազոր մարդիկ գոռոզության հասնող արժանապատվություն ունեն ու խորշում են մտնել որևէ հիերարխիկ կառույցի մեջ։ Այստեղից էլ՝ անկազմակերպվածությունը։

Իսկ անկազմակերպ մարդիկ իրենցից ուժ չեն ներկայացնում ու արագորեն զիջում են կազմակերպված հանցագործությանը։ Ահա և ողջ պատկերը բոլոր դեմոկրատական կառավարում որդեգրած երկրներում։

Դեմոկրատական կառավարման համակարգը կործանարար է։ Այն անխուսափելիորեն բերում է հանցագործների իշխանության։ Իսկ հանցագործներն ազգային պատկանելություն ու առաքինի սկզբունքների արժեհամակարգ չունեն։ Հետևաբար, հարստություն կուտակելու մղումով, միանգամից ծառայության են անցնում ավելի հզոր, օտար ուժերի մոտ։ Սա է պատճառը, որ մեր թշնամիներին ձեռնտու է երկրում հանցագործ իշխանություն ունենալը։

Ամեն դեպքում դեմոկրատիան շատ թույլ համակարգ է։ Երկրի տերերը բոլորը չեն կարող լինել։ Երկրի տերերը կարող են լինել միայն ազգի նահապետները։ Նահապետական կառավարումն ամենաարդյունավետ կառավարումն է, որն, իհարկե, ենթադրում է առաջին հերթին բարձրարժեք ու առաքինի ուսմունք ու մշակույթ։

©Դավիթ Միրզոյան, Հոկտեմբեր, 2013
www.davitmirzoyan.com

ՄԵՐ ՊԱՌԱԿՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեր պառակտվածության պատճառը շատ խորն է նստած մեր գենետիկ կոդում։ Ցավոք, ոչ մի բան չի փոխի այն։ Գոնե ներկա էտապում ոչինչ չի փոխի։ Հետագայում գուցե մեր ուսումնքի սերմանումը փոխի որևէ բան, բայց հիմա հնարավոր չէ։

Այսինքն, անհույս է ազգի մասին մտահոգ մարդկանց՝ մտավորականներին, փորձել համախմբել։ Ամեն հայ, իր գոռոզության պատճառով, չի մտնում մյուսի դրոշի տակ։ Եթե նույնիսկ գտնի էլ, որ այդ մյուսի գաղափարը ճիշտ է, միևնույն է՝ չի մտնի։

Ուրեմն, իզուր ջանքեր են՝ կանչել, մանավանդ հորդորել հայազգի մտավորականներին կենտրոնացված կառավարմամբ գործող խումբ կազմել ու գործել որևէ մեկի դրոշի տակ։ Ի՞նչ անել։

Ինչպես գիտենք, իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է։ Հեղափոխությունը փողոցներում չեն անում, այլ մարդկանց սրտերում։ Իսկ դա կարելի է անել ցանկացած միջոցով։ Համացանցը վատ միջոց չի։ Համացանցում են մեր ազգի բանիմաց ու հայրենասեր մարդիկ։ Ոչ բոլորն, իհարկե, բայց շատ կան։

Քանի որ գաղափարի տարածումը միակ հեղափոխությունն է, ապա ամենևին կարիք չկա, որ մտավորականները միավորվեն մեկի առաջնորդության տակ։ Բավական է, որ այդ մտավորականները գործեն միայնակ ու տարածեն գաղափարը։ Միայն հարկավոր է, որ տարածողներն ընդունեն այդ գաղափարը՝ առանց իմանալու գաղափարակրի գոյության մասին։

Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ գաղափարի հեղինակը չերևա՝ որպես առաջնորդ, մնա ստվերում։ Դա ևս մեկ առավելություն է այն պատճառով, որ մեր թշնամիները չեն կարողանա գլխատել շարժումը, պարզապես, որովհե-

տև չի լինի մեկ գլուխ։ Կլինեն հազարավոր գլուխներ։ Հազարավոր գլուխների հետ դժվար է։ Բոլորին չես գլխատի։

Փաստորեն, հարկավոր է գաղափարը վիրուսի պես գցել ժողովրդի մեջ ու հետևել զարգացումներին։ Գաղափարն ընդունելություն կգտնի ամենապատրաստ միջավայրում ու կսկսի ինքն իրեն տարածվել, ու այդպես շարունակ։ Այսքանը։

Իսկ, երբ գաղափարը համազգային տարածում ստանա, ապա հեղափոխությունն ավարտված կլինի։

©Դավիթ Միրզոյան, Դեկտեմբեր 2013
www.davitmirzoyan.com

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Մենք աստվածային, բայց միևնույն ժամանակ՝ անաստված ազգ ենք։

Մեզ երևի Աստված է պահում, որովհետև ինքներս մեզ չենք պահում։

Անհասկացողին բան ասելը նման է անհուն դատարկության մեջ նետված գանձի։

Ուրիշի ցավով ապրել չի կարելի։ Ամեն մեկն իր ճանապարհն ունի կյանքում։

Երբ դադարում են գնահատել անկեղծ նվիրումդ, ապա սերդ անմիջապես փոխվում է ատելության։

Սխալվելն ուսուցանող կարող է լինել, բայց հաճախակի սխալվել չի կարելի։

Սխալվելը ճշմարիտ գիտելիք կուտակելու ամենալավ ձևը չէ։ Հաճախ մարդիկ երբեք չեն սովորում իրենց սխալներից։ Ընդհանրապես, մարդ անելով է սովորում։ Սխալն անելով՝ լավագույն դեպքում կիմանանք, թե որն է սխալը, բայց չենք իմանա, թե որն է ճիշտը, որովհետև անսահման թվով սխալներ կան, բայց ճշմարիտ ուղին մեկն է։ Ամեն դեպքում, անընդհատ սխալվելով ճիշտը չենք իմանա։ Ջնայած, ավելի լավ է իմանանք, թե որն է սխալը, քան չիմանանք, թե որն է ճիշտը, բայց ամենալավն այն է, որ հենց սկզբից իմանանք ճշմարիտ ուսմունքն ու ապրենք՝ այն կիրառելով։ Ճշմարիտ ուսմունքով ապրելով՝ կճաշակենք երջանկությունն ու այլևս չենք սխալվի։

Համատիեզերական օրինաչափություն կա՝ մարդն իրեն է ձգում այն, ինչին ձգտում է։ Սերը սեր է ձգում դեպի իրեն, չարը՝ չարություն։ Սակայն դեպի մեկ ուրիշն ուժգին ձգտումը կարող է և վանող լինել, քանի որ ուժգին ձգտման մեջ նույնքան էգոիզմ կա։ Հետևաբար, դեպի ում որ շատ

ենք ձգտում, հեռանում է մեզնից։ Ինքներս նույն պատճառով խուսափում ենք նրանից, ով դեպի մեզ ուժգին ձգտում ունի։

Մտավորականն ազգի ճակատագրով լրջորեն մտահոգված անհատն է՝ անկախ ճանաչումից, մասնագիտությունից ու տարիքից։ Մտավորականն ազգի ոամունքի կերտողն է, պահապանն ու սերմնացանը։

Մտավորականությունն ազգային ոամունքի շուրջ համախմբված մտավորականների կորիզն է։

Եթե մտավորականները չինքնաշտկվեն ու չկրթեն ժողովրդին, ապա ոչինչ չի փոխվի։

Քանի որ հայ «մտավորականները» ազգային ոչ մի ոամունք չստեղծեցին, փոխարենը զբաղված արևմտյան արվեստի ու արժեքների զարգացմամբ, միաժամանակ հմայված հատկապես դեմոկրատիայի ու կապիտալիզմի «արժեքներով», ապա, անկախացում ստանալուց հետո, մենք ուրիշ ընտրություն չունեինք՝ բացի դեմոկրատիայից ու կապիտալիզմից, նաև՝ արևմտյան արվեստի ու գաղափարախոսության լիբերալիզմից։

Մեր ազգային ճգնաժամի իրական մեղավորը մտավորականությունն է, որ Թումանյանից հետո չենք ունեցել։ Անհատ մտավորականներ եղել են, բայց մտավորականություն չենք ունեցել, որ կարողանա առաջնորդել ազգին այնպես, ինչպես գլուխը մարմնին։

Չկա ժողովրդի միասնականություն՝ առանց մտավորականության միասնականության։ Ժողովրդի պառակտվածության պատճառը մտավորականության պառակտվածությունն է։

Ինչպիսին մտավորականությունն է՝ պառակտված ու անկազմակերպ, այնպիսին էլ ժողովուրդը կլինի՝ պառակտված ու անկազմակերպ։

Անիմաստ է համախմբվածություն ակնկալել ժողովրդից, եթե այն չկա մտավորականության մեջ։

Երբ գլուխն է կորցնում գլուխը, ուրիշ ի՞նչ սպասենք մարմնից։

Առաջնայինն այն գաղափարն է, որը կհանի ազգին ներկա գաղափարազուրկ վիճակից։

Հզոր երկիր ունենալու համար հարկավոր է ունենալ այն արժեհամակարգը, որը կար, երբ հզոր երկիր ունեինք։

Հայաստանը կզորանա, երբ հայ մտավորականները համախմբվեն ազգային ուսմունքի շուրջ։ Առանց հայ մտավորականների համախմբման չկա համախմբված ժողովուրդ, չկա համախմբված ու հզոր Հայաստան։ Չկա հզոր Հայաստան՝ չկա կորցրած տարածքների վերադարձ։ Հետևություն՝ Հայաստանի հզորացումն ու մեր կորցրած տարածքների վերադարձը կախված է հայ մտավորականների համախմբվելուց։ Մտավորական չեն նրանք, ովքեր չեն համախմբվում։

Մտավորականը գրքեր անգիր արածը չի։ Մտավորականն ինքն է գիտելիքի աղբյուրը։ Գիտելիքը դրսից չի գալիս, գրքեր կարդալով և այլն։ Գիտելիքը հիմնականում գալիս է ներսից։ Գիտելիքի համար ներսն են նայում։

Մեր ներկա իրավիճակի ողջ մեղքը մերն է՝ բոլորինս։ Մեր պապերից ու ապուպապերից սկսած մինչև մենք և՛ խմբակային, և՛ անհատական մեղավորություն ունենք։ Բոլորիս «փոքր» մեղքերն են, որ գումարվել ու հասցրել են մեզ այս օրվան։ Ամենամեծ մեղքը մեր մտավորականությանն է։ Նրա մեղքն այն է, որ չի միաբանվել, կրծել է ազգի գաղափարակրի կյանքը, թունավորել միջավայրը։ Հիմա էլ նույնն է անում։ Մեղավոր են նրանք, ովքեր սատկացնելու փոխարեն խրախուսել են մեր միջի տականքին։ Հիմա պարզապես պտուղներն ենք «վայելում»։

Մարդկանց, նաև երկրի առաջնորդների բոլոր սխալները ճշմարիտ ուսմունքի բացակայությունից են։

Քաղաքականություն խաղում են վախկոտները։
Փոխզիջումների գնում են թույլերը։
Քննարկումների նստում են գաղափարազուրկները։

Սերն է միակ բալասանը անդնդախոր ցավերի։
Առանց սիրո վիշտն ամեն ինչ կավերի։

Մտերիմի մասին մտահոգվելը թեթևացնում է մարդու վիշտը։ Այո, մարդու հոգսը չափազանց ծանր է, բայց պարադոքսալ կերպով այն թեթևանում է՝ մեր մտերմի մասին մտահոգվելով։

Մեխի դեմ բռունցքով, իհարկե, հնարավոր չէ, բայց աղաթթուն կաշխատի։

Անձնական շահ հետապնդելով, բոլորն են կեղծում, ջանում չտարբերվել շրջապատից, բայց երբ լինել-չլինելու խնդիր կա, ապա միանգամից թոթափում են դիմակն ու ցույց տալիս իրենց իսկական դեմքը։

Թունդ Արարչական գենակիրները հզոր ու ճշմարիտ մըտքեր ունեն ու նաև՝ այդ մտքերը մեկ այլ հոգեհարազատ էակի հետ կիսելու պահանջ։ Եթե այդ պահանջը չբավարարեն, ապա կարող են հիվանդանալ։

Հայրենի՞ք, հայրենի՞ք կանչելով ու հայրենասիրական կոչեր անելով՝ ո՛չ հայրենասեր կդառնանք, ո՛չ էլ հայրենիք կունենանք։

Սեփական երկիրդ հայրենիք չէ, եթե հալածված ու կեղեքված ես։

Եթե մեր երկրի տերը լինեինք, ապա անխնա չէինք կողոպտի ու ապականի։

Բավական չէ միայն զղջալ սեփական սխալի համար, հարկավոր է ամեն ինչ անել՝ այն շտկելու համար։

Քանի դեռ կա կապիտալիզմ՝ շահ ու գերի, ստրուկ ու տեր, չի լինելու երկրի վրա, ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք ո՛չ սեր։

Մարդու մտատանջությունների մեծագույն պատճառն անորոշությունն է։

Խնդրի մասին ողջ ճշմարտությունն իմանալը գործի կեսն է։

Ամեն արարք հետևանքներ ունի։ Եթե նույնիսկ հիմա հասկանում ենք ու զղջում մեր վատ արարքների համար, միևնույն է՝ դրանց հետևանքները չեն վերանա, ու չի թեթևանա դրանց բնույթն ու ուժը։ Անցյալի սխալները միշտ հետապնդելու ու կործանելու են մեզ, որքան էլ զղջանք ու լաց լինենք։ Ամեն դժբախտություն իր պատճառն ունի։

Կյանքը նման է վարար գետի, անընդհատ մի բան բերում է հետը։ Եթե պատրաստ ես՝ կնկատես ու կբռնես։ Եթե ոչ՝ կանցնի, կգնա ու չես էլ իմանա, թե ինչ բաց թողեցիր։

Տղամարդիկ ինտելեկտով գուցե հսկաներ են, բայց հոգևոր առումով մանուկներ են։ Հիմնականում դրանից է, որ չեն միաբանվում, որքան էլ բարձրանան։ Մանկապարտեզի երեխաների պես աքլորանում, կռվում, խռովում, նեղանում, նույնիսկ թշնամանում են։ Բայց առանց տղամարդկանց միաբանության, շատ թույլ կլինի մեր ազգը։ Մեր ազգի փրկությունը, հետևաբար, կանանց ձեռքերում է։ Միայն կանայք կարող են ու պարտավոր են հաշտեցնել ու միաբանության մղել տղամարդկանց։

Տղամարդու առաքելությունն աշխարհը բարեփոխելն է։ Կնոջ առաքելությունն այդ գործում իր տղամարդուն օգնելն է՝ հիմնականում ոգեշնչելով, սիրելով, փայփայելով ու

խնամելով նրան. երբեմն լինելով նրա զինակիրը, նաև՝ զինակիցը։ Ամենագլխավորը՝ լինելով նրա պահապան հրեշտակը՝ հաճախ մեղմելով տղամարդու զայրույթը, նաև՝ նրան անհույս, վտանգավոր ու կործանարար իրավիճակներից հետ պահելով։

Մարդիկ հաճախ ձգտում են իրենց երազանքների միջավայրը կերտել՝ հետո այն վայելելու համար, ու մաքառելով իրենք իրենց ուժասպառ են անում՝ հաճախ չհասնելով այդ երազանքին։

Սեփական էությունը ճանաչելն ու այդ բարձրունքից ճղճիմ իրականությանը նայելն առաջին քայլն է։

Երկիր քանդում են՝ քանդելով նրա արժեհամակարգը։ Երկիր պաշտպանում են՝ պաշտպանելով նրա արժեհամակարգը։ Մեր թշնամու հիմնական հարվածը մեր արժեհամակարգի վրա է։

Երկիր սվիններով չեն կառուցում, այլ՝ առաքինի արժեհամակարգով։

Մեր թշնամին մենք չենք, մեր թշնամին մեր մեջ է։ Մարդ չի կարող իր սեփական թշնամին լինել։ Եթե մարդն ինքն իրեն վնասում է, ապա դա անում է միայն անգիտակցաբար։

Կյանքի իմաստը գուցե այն է, որ հասկանանք կյանքի իմաստը։

Հումորը միայն ճշմարտությունն ավելի ընդունելի մատուցելու միջոց է։ Բայց ճշմարտությունն ինչպես էլ մատուցես, միևնույն է՝ ծանր է լինելու։

Դեպի գլուխն ուղերձի ճանապարհն անցնում է մարդու սրտի միջով։

Միայն անկեղծ խոսքն է, որ ուժ ունի։

Ամեն մարդ կամ ազգ ինքն է որոշում իր ճակատագիրը։

Այսպես կոչված՝ նուրբ մատերիական իրականությունը, մարդը կամ ազգն ինքն է ստեղծում իր շուրջը։

Մեր ազգի ներկա իրավիճակի պատճառն այն է, որ հանցավոր անտարբերություն ենք դրսևորել չարի ու ստորակարգի հանդեպ, երկրպագել ենք նրանց, ում պիտի սատկացնեինք։

Մեր կողմից օտար ուժին ապավինելու պարադոքսը բացատրելի է։ Մեր անկազմակերպ ու թշվառ վիճակում՝ իրար հոշոտելով, ներազգային գզվռտոցի մեջ խրված ու անկարող ինքներս մեզ պաշտպանել, միաժամանակ թշնամի ազգերով շրջապատված, միակ հույսներս բնականաբար օտարի ուժն է։

Դեռ բավական չէ տեսնել ու բարձրաձայնել հասարակության արատները։ Միայն հիվանդությունը նկատելով ու բնութագրելով՝ չենք բուժվի։ Հարկավոր է ախտորոշել հիվանդությունն ու համապատասխան բուժամիջոց առաջարկել։ Այլապես ժողովուրդը ոտքի չի կանգնի։ Մեր բոլոր դժբախտությունների պատճառն ազգային ուսմունքի բացակայությունն է։ Հետևաբար, բուժամիջոցը մեր ազգային ուսմունքն է։

Մեր ազգային ուսմունքն ազգայնացված տնտեսությունն է ու միապետական՝ նահապետական, կենտրոնացված տընտեսավարումն ու կառավարումը։

Իր հիվանդության մասին ճշմարտությունը չիմացողն երբեք չի բուժվի։

Անկախ կլինենք միայն այն ժամանակ, երբ ազգ դառնանք՝ մեր ուրույն ուսմունքով, ազգայնացված տնտեսությամբ ու միապետական կառավարմամբ։

Ինքն իրեն կողոպտող ազգը չի կարող կասեցնել օտարի

ձեռքը։

Ֆեմինիզմը չի կարելի շփոթել հայ Արիական ուամունքի կնոջ կերպարի հետ։ Ֆեմինիզմը տղամարդու վրա կնոջ գերակայության մասին է։ Իսկ Արիական ուամունքի կինն ամուսնու թև ու թիկունքն է։ Հայ Արիական կինը ռազմատենչ է՝ միայն ամուսնու թշնամիների հանդեպ։

Կանանց վճռական ու հուսալի տղամարդ է պետք, ով կըկարողանա ոչ միայն ապահովել իրենց ու երեխաների նյութականը, պաշտպանել շրջապատի վտանգներից, այլ նաև կկարողանա կարգ ու կանոն հաստատել հույզերից մշտապես խռովված նրանց հոգիներում, եթե թույլ տան, իհարկե։

Հանճարին չեն նկատում, տաղանդին ծաղրում են, անտաղանդին երկրպագում, իսկ հանցագործին դնում են իշխանության գլուխ։

Ճշմարտությունն օբյեկտիվ իրականությունն է։ Այն հարաբերական չէ։ Մեր գնահատականները կարող են տարբերվել ճշմարտությունից ու մեկը մյուսից, բայց ճշմարտությունը՝ օբյեկտիվ իրականությունը, չի փոխվում դրանից։

Օբյեկտիվ իրականությունը ճիշտ գնահատելու ցուցիչը մեր գենետիկ կոդում է։ Բոլորն էլ ունակ են տարբերել ճիշտն ու սխալը, լավն ու վատը, արդարն ու անարդարը։ Բայց, պատասխանատվությունից խուսափելով, մարդիկ գերադասում են կույր ձևանալ, «ուամունքներ» են հորինում՝ իրականությունը չընդունելու համար։

Անկեղծությունը քաջերին է հատուկ։ Իսկ անմիջականությունը՝ ազնվասիրտ մարդկանց։

Ասել պետք է միայն ճշմարտությունը, իսկ անել՝ միայն լավն ու բարին։

Հաճախ մոռանում ենք, որ մեր հնարավորությունները մեր

ցանկությունների պես անսահման չեն։

Մարդն իրեն դժբախտ է համարում, երբ չի կարողանում բավարարել իր ցանկությունները՝ առանց հաշվի առնելու, որ դրանք գուցե անհրաժեշտ էլ չեն։

Միայնությունն ամենաանտանելի բանն է։ Բայց, երբ այն ավելի գերադասելի է, ուրեմն իրավիճակն ավելի ծանր է։

Արդարամիտ մարդիկ դիմացինի մեջ տեսնում են իրենց պես արդարամիտ մեկին, իսկ ոճրամիտները միայն ոճրամիտ են տեսնում։

Մարդիկ ժամանակ չունեն, որովհետև հիմնականում զբաղված են անկարևոր բաներով։

Մարդիկ ավելի շատ ժամանակ են ծախսում ժամանակ խնայելու վրա, քան խնայված ժամանակն է։

Մտավոր ու հոգևոր առաջընթացի ճանապարհին կա մի շեմ, որից այն կողմ ուրիշ կանոններ են գործում։

Ամենամեծ սխալը՝ ոչինչ չանելն է։

Մարդու դժբախտությունը կպակասի, եթե իմանա, որ իր մասին անկեղծ մտահոգվող կա։

Արարչին կարելի է ճանաչել՝ միայն սեփական էությունն ուսումնասիրելով, բայց սա միայն աստվածամարդկանց է վերաբերում։

Մարդու համար ամենակարևորը հոգեհարազատ էակի առկայությունն է, նրա անկեղծ ու անշահախնդիր սերն ու անմնացորդ նվիրվածությունը։

Հոգևորն ու նյութականը հնարավոր չէ տարանջատել։ Չկա հոգևոր՝ առանց նյութականի։ Հոգևորը նյութականի դրսևորման ձև է միայն։

Նկարչի գործերը ոգեշնչման աղբյուր են ո՛չ միայն ուրիշ-ների, այլ առաջին հերթին իր՝ նկարչի, համար։

Մարդու համեստությունը հաճախ սխալմամբ անվստահություն է որակվում։

Եթե տղամարդը գիտի, ապա կինն առանց բացատրելու էլ կհասկանա։

Երբ տղամարդը սկսի ճանաչել կնոջ իրական էությունը, ապա ընտանեկան կյանքն ավելի հանգիստ կընթանա՝ առանց լարվածության ու բախումների։

Տղամարդն աշխարհը բարեփոխելու առաքելությունն ունի։ Նա իր գործը կանի, եթե սիրող ու նվիրված կին ունենա։

Սիրող կինն առաջընթացի միակ շարժիչ ուժն է, իսկ խորամանկ կինը՝ միակ խոչընդոտը։

Կնոջ անկեղծ նվիրվածությունը չգնահատող տղամարդը ողջ կյանքում տառապելու է սիրո պակասից։

Ամեն հայկական լավը չի, բայց ամեն լավ հայկական է։

Մարդն ամեն ինչ կարող է անել։ Միայն ժամանակ տուր ու մի խանգարիր։

Հայաստանը կործանվում է ո՛չ թե արագացող տեմպերով փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակների, այլ սեփական ուամունք չունենալու պատճառով։

Ո՞րն է ավելի գերադասելի. գաղափարն առանց առաջնորդի՞, թե՞՝ առաջնորդն առանց գաղափարի։

«Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև, հաղթական հայրենիք չի ունենա»։– ասել է Գարեգին Նժդեհը։ Ասել է, բայց չի կռահել, որ միայն տնտեսության ազգայնացումը կհավասարեցնի բոլորին

օրենքի ու մահվան առջև։

Միավորվում են գաղափարի շուրջ։ Եթե չկա գաղափար, ապա ոչ մի միավորվելու կոչ ոչ մի օգուտ չունի։

Սեր ու հարգանք պահանջելով չեն ստանում։
Սիրո ու հարգանքի արժանանում են։

Ասում են՝ «միշտ թույլերը կերակրում են ուժեղներին»։ Այո, բայց դա միայն գազանների միջավայրում։ Նահապետական համակարգում բոլորը հավասարապես օգտվում են մայր հողի բարիքներից՝ բավարարելու իրենց կենսական կարիքները։ Հետևաբար, չկա կեղեքվելու կամ ուրիշին կերակրել-չկերակրելու խնդիր։

Մարդու ամենագլխավոր խնդիրն ինքն իրեն ճանաչելն է։ Մարդ ինքն իրեն ճանաչելով, կճանաչի ողջ տիեզերքը, քանզի ինքն է տիեզերքի կենտրոնն ու պատճենը։

Մեր ազգային միասնության ճանապարհի առաջին խոչընդոտը մեր գոռոզությունն է ու տգիտությունը։

Վախենում են հիմնականում անորոշությունից։

Մարդը կենդանիներից տարբերվում է առաջին հերթին նրանով, որ կարողանում է ուսումնասիրել ո՛չ միայն իր շրջապատը, այլ նաև՝ ինքն իրեն ու իր անցյալը, նույնիսկ՝ ապագայի գուշակություններ անել։

Երջանկությունը մարդու բնական վիճակն է։ Մնացած բոլոր վիճակները սպանում են մարդուն։

Մեր կյանքի հիմնական պայքարն ընթանում է մեր ներսի «բնական մարդու» և «բանական մարդու» միջև։ Այլ կերպ ասած՝ մեր կենդանական ու աստվածային կեսերի միջև։

Ազգովի երբեք չենք ինքնաշտկվի, եթե ինքներս մեզ չխարազանենք ու չճղջանք։

Անիմաստ է ապրել ու գործել անկիրթ և անարժան մարդկանց շրջապատում։

Լիբերալիզմն ու դեմոկրատիան միջակությունների համար բարգավաճելու լայն ասպարեզ են։

Դեմոկրատիան չափազանց խոցելի կառույց է, այն միանգամից լցվում է օլիգարխիայի ոհմակներով։

Երբ բոլորը ծանոթանան մեր ազգային ուսմունքի դրույթներին, ամեն ինչ կսկսի արագ փոխվել։ Դժվարն ուղերձը տեղ հասցնելն է։ Միջոցները շատ սահմանափակ են, մարդիկ՝ թերահավատ։

Երկրում ամեն փոփոխություն ուղիղ համեմատական է այն ցանկացողների քանակին ու ցանկության ուժին։

Ժողովուրդներն արթնանում են, երբ փրկության ուրիշ ելք չկա՝ բացի ոտքի կանգնելուց։

Երբ չունենք մտավոր ու հոգևոր ձեռքբերումներ, մեր նորը ոչնչով չի տարբերվի հնից։

Կյանքն ինձ «փիլիսոփա» դարձրեց, բայց դեռ ոչինչ չեմ հասկանում։

Ջարն ուրիշին վնասելու մարդու գիտակցված ընտրությունն է։

Ժողովուրդը չգիտի ինչպես ինքնաշտկվի, սա մեծ ցավ է։ Բայց ասողին էլ չի լսում, որն արդեն դժբախտություն է։

Փողի սերը կործանում է աշխարհը։ Փողի սերն այն է, երբ մարդու աչքն ուրիշի աշխատանքի արդյունքի վրա է։

Լավություն անողը գլուխ չունի, իսկ լավություն չհասկացողը՝ սիրտ։

Ողջ պատմության ընթացքում ժողովուրդը կամավոր գնացել է բռնակալների հետևից միայն այն պատճառով, որ այդ բռնակալները բարեհաջող կամ անբարեհաջող հետևանքների ողջ պատասխանատվությունն իրենց վրա են վերցրել։

Ամուսնական առաջարկությունը խնդրանք չէ։ Առաջարկություն է միայն։

Հնարավորություններիդ սահմանում պահիր ցանկություններդ, ու ամեն բան լավ կլինի։

Ապագան կանխորոշում են մեր ներկա մտքերն ու հատկապես գործերը։

Երկիր փլուզելու համար հարկավոր է միայն ոչինչ չանել՝ ժողովրդի բարոյահոգևոր մակարդակը բարձր պահելու համար։

Ազնվարյուն մարդկանց հանդուրժողականության պատճառով է շատացել տականքն ու ավերում մոլորակը։ Այլևս չի կարելի հանդուրժել։ Դեռ ոչինչ, որ մեզ էին հոշոտում։ Հիմա արդեն ոչնչացնում են մեր հետագա սերունդների, նաև՝ իրենց սերունդների ապագան։ Մարդն արարվել է Արարչի նմանությամբ՝ մոլորակի դրախտային վիճակը վերականգնելու ու պահպանելու համար։ Տականքը խանգարում է։

Արվեստի իսկական գործ ստեղծվում է կամ հիացմունքից, կամ ցասումից։ Ամեն դեպքում՝ միայն սրտով։ Առաջնայինը, սակայն, ասելիքի կարևորությունն է։ Ձևն ինքն իրեն կստացվի, եթե մի քիչ վարպետություն կա։ Գրագիտությունը ոչինչ է՝ առանց ոգեշնչման։

Արվեստ չի ստեղծվի, եթե տառապանքն ընկճել է մարդուն։ Ընկճված մարդը չի կարող արվեստ ստեղծել։ Միայն ըմբոստը կարող է։ Տառապանքից ընկճված մարդը ոչինչ չի կարող ստեղծել։

Մարդիկ սովորաբար ամեն երևույթ գնահատելիս ածականների գերադրական աստիճանն են գործածում: Օրինակ՝ ժամանակավոր բավարարվածությունը կամ գոհունակությունը կարող են երջանկություն որակել: Բայց երջանկությունն ավելի բարձր կատեգորիա է, քան որևէ մեկի ինչ-որ բանից ժամանակավոր բավարարվածությունը: Ինչպես տիեզերքում ամեն ինչ, երջանկությունն ևս կախում չունի մարդկանց գնահատականներից: Այն կոնկրետ բաղադրիչներ ունի: Երջանկության բաղադրիչներն են՝

. Անշահախնդիր ու փոխադարձ սերը

. Սեփական կարիքները բավարարելու համար Մայր Բնության շնորհած բարիքներից ազատորեն օգտվելու հնարավորությունը

. Համատիեզերական օրինաչափությունների իմացությունը:

Երջանկությունը ծանր բեռ է, երբ շրջապատիդ մարդիկ երջանիկ չեն:

Մենք՝ հայերս, միշտ բարձրարժեք մշակույթի սերմնացանն ենք եղել հազարամյակներ շարունակ: Բայց հիմա, քանի որ կորցրել ենք այդ մշակույթը, այլազգիներից ընդօրինակում ենք նրանց ցածրարժեքը:

Ամենավտանգավոր զենքը գաղափարն է:

Իսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է: Հեղափոխությունը փողոցներում չեն անում, այլ՝ մարդկանց սրտերում: Դրա համար կարիք չկա փողոց դուրս գալ:

Իսկական առաջնորդը գաղափարն է, որ առաջնորդում է նույնիսկ առանց առաջնորդի:

Հեղափոխությունը տեղի կունենա, երբ գաղափարը տարածում գտնի: Նրանք, ովքեր գաղափարին ծանոթանալուց հետո չեն տարածում այն, ապա կասեցնում են հեղափոխությունը:

Եթե ամեն կարդացող չսահմանափակվի միայն կարդալով ու համաձայնվելով գաղափարի հետ, այլ նաև տարածի ու հորդորի բոլորին տարածել, ապա սայլը տեղից կշարժվի՝ հեղափոխությունը տեղի կունենա։

Գաղափարի հետ համաձայնվելը կամ չհամաձայնվելը հավասարապես պատասխանատու ընտրություններ են։ Ամենաանվնասն անտարբերությունն է՝ պատասխանատվությունից խուսափելու համար։

Մեր հիմնական առաջադրանքն այս կյանքում սովորելն է։ Մարդիկ հիմնականում սովորում են, երբ խնդիրների առաջ են հայտնվում։ Երբ փորձում ենք այս կամ այն կերպ խուսափել խնդրից, ապա ավելի մեծ խնդրի առաջ ենք հայտնվում։ Այլ կերպ ասած՝ որքան փախնում ենք դասից, այնքան ավելի ծանր առաջադրանքներ ենք ստանում վերևից։

Եթե մարդու երջանկությունը հիմնականում կախված է հենց իրենից, ապա նրա դժբախտությունը հիմնականում կախված է նրա մտերիմներից, ընդհանրապես՝ նրան շրջապատող մարդկանցից ու իրականությունից։ Դժբախտությունը ժառանգական հիվանդություն է։

Եթե չկա ուսմունք, ապա չի կարող լինել ազգ։ Եթե չկա ազգ, ուրեմն չկա հայրենիք ու պետություն։

Մարդուն ավելի շատ բնորոշում են նրա երազանքներն ու նպատակները, քան՝ ձեռքբերումները։ Ներկայումս ստիպված ենք մարդկանց դատել՝ ըստ նրանց գործերի, քանի որ ոչինչ չգիտենք նրանց միտումների ու նպատակների մասին։

Ճշմարտությունն անհետ չի կորում։ Այն միշտ մեր աչքերի առջև է։ Նկատելու համար միայն ցանկություն է պետք։

Աշխարհիկ գիտելիք կարելի է ձեռք բերել ուրիշի փորձով։ Բայց հոգևոր գիտելիք՝ միայն սեփական փորձով։

Անհնար բան չկա։ Մեծ փոփոխությունները մեծ ջանքեր ու ժամանակ են պահանջում։

Մարդը մեղքեր շատ ունի։ Ամենամեծն այն է, որ մենք չենք սիրում ճշմարտությունը։ Ամեն մեկս, մեր անձնական շահի համար, խեղում ենք այն ամեն քայլափոխի։

Ճշմարտությունը բոլոր խնդիրների լուծման բանալին է։

Հույսը՝ ցանկալիի անհիմն ակնկալիքն է։
Հավատը՝ ցանկալիի անորոշ ակնկալիքը։
Գիտելիքը՝ ցանկալիի հիմնավոր ակնկալիքը։
Հետևաբար՝ Հույսը խավար է։
Հավատը՝ կիսախավար։
Գիտելիքը՝ լույս։

Հույսը համեմատելի է սիրահարվածության, հավատը՝ համակրանքի, իսկ գիտելիքը՝ սիրո հետ։

Գիտելիքը ոչինչ է՝ առանց գործերի։ Գիտելիքի ճշտացիությունը հաճախ պարզ է դառնում միայն այն իրագործելուց հետո։

Մարդու գենետիկ կոդն իրեն ներհատուկ վիբրացիաներն ունի ու թելադրում է մարդու մտքերն ու ի վերջո ձևավորում նրա արժեհամակարգն ու ինքնությունը։

Եթե սկզբունքներդ խանգարում են երջանիկ ապրել, ապա փոխիր սկզբունքներդ։

Մեր ապագան հիմնականում մեր ձեռքերում է։ Պարզապես հաճախ չենք նկատում, թե ինչպես ենք այն ձևավորում մեր մեծ ու փոքր որոշումներով։ Ապագան սկսվում է մեր որոշմանը հաջորդող առաջին ակնթարթից։

Ճշմարտություն կա, թեկուզ, եթե այն անընդհատ փոփոխվում է։ Մեր պատկերացումները կարող են չհամընկնել այդ ճշմարտության հետ։ Բայց դա բավարար չէ հայտա-

բարելու, թե ճշմարտություն չկա, կամ, թե այն հարաբերական է։

Մարդն իր կարևորությունը չի ընկալի, մինչև չտեսնի իր ջանքերի արդյունքը։

Պետության կառուցումը սկսվում է ուսմունքից։
Առանց ուսմունքի պետություն չեն կառուցում։
Պետություն քանդում են հակառամունքով։

Շատ կարևոր է իմանալ սեփական ազգի ճշմարիտ պատմությունը։ Բայց դա որևէ արժեք չունի, եթե գաղափար չունես նրա արժեհամակարգի մասին։

Ազգն ինքն իրեն կճանաչի միայն այն արժեհամակարգով, որով ապրել են իր նախնիները։

Առանց անցյալի իմացության ո՛չ ներկայում կապրենք, ո՛չ էլ ապագա կունենանք։ Սա հատկապես մեր ազգային ուսմունքին է վերաբերում։ Մինչև չվերականգնվի մեր ուսմունքն ու արժեհամակարգը, ոչնչի էլ չենք հասնի։

Ոչ մի խնդիր չենք լուծի, եթե պետություն չկառուցենք։ Ու հենց պետություն կառուցելու ճանապարհին կլուծվեն մեր բոլոր խնդիրները։

Փիլիսոփայությունը հենց տրամաբանությունն է, հետևաբար՝ չի կարող անտրամաբանական լինել։

Միապետություն չունեցող ազգը որբ է ու անտեր։
Միապետություն չուզող ազգը դատապարտված է աննպատակ դեգերելու։
Միապետություն չհասկացող ազգը դատապարտված է կործանման։

Աշխարհում միայն մեկ ճշմարիտ ուսմունք կա։ Դա մեր Արարչական ուսմունքն է։ Բոլոր ուսմունքները մերինից սերված, բայց մերի ոչ ամբողջական ձևերն են։

Ըստ մեր Արարչական, Հայկ-նահապետական ուսմունքի՝
. Երկրում ամեն ինչ հավասարապես պատկանում է բոլորին։ Հետևաբար, տնտեսությունը պիտի ազգայնացվի։
. Տնտեսության կարևորագույն ոլորտները պիտի գտնվեն Համայն Հայոց Արքայի՝ ազգի գերագույն նահապետի, իշխանության տակ։
. Արքան է իր ազգի գերագույն նահապետը՝ հոգևոր, մտավոր, ռազմական, տնտեսական առաջնորդը, գերագույն օրենսդիրը, օրինապահն ու դատավորը։

Մեր ազգային ուսմունքը նահապետական կարգն է ու ազգայնացված տնտեսությունը։

Մարդու ամենակարևոր գործն է՝
. Ճանաչել ինքն իրեն.
. Հասկանալ իր առաքելությունն ու անելիքը.
. Իմանալ՝ ինչ է անհրաժեշտ դրա համար.
. Պատրաստ լինել ճանաչելու ճակատագրի պարգևը.
. Ունենալ քաջություն՝ ընդունելու այդ պարգևն ու անդորր՝ այն ըմբռնելու համար։

Մի մտահոգվիր այն բաների մասին, որոնք չես կարող փոխել։

Ճիշտը ճիշտ է՝ նույնիսկ, եթե ոչ ոք չի ընդունում այն։ Սխալն էլ սխալ է՝ նույնիսկ, եթե բոլորն են ընդունում այն։

Ավելի լավ է իմանալ, թե որն է սխալը, քան չիմանալ, թե որն է ճիշտը։ Բայց ամենալավն է՝ իմանալ ճիշտը, թեկուզ, եթե չգիտես, թե որն է սխալը։

«Երբ չգիտես՝ ուր նավարկել, ոչ մի քամի էլ չի օգնի». ասել է Սենեկան։ Բայց եթե նույնիսկ գիտես՝ ուր նավարկել, ապա հնարավոր է դիմահար քամիների էլ հանդիպես։ Հետևաբար, թիավարել է պետք իմանալ։

Գիտելիքի, նաև նյութական բարիքների աճի հետ զուգ-

ընթաց աճում է նաև մարդու գոռոզությունը։ Բայց, երբ այն հասնում է կրիտիկական կետի, ամեն բան կործանվում է։ Մարդը կորցնում է ամեն ինչ ու գահավիժում, հայտնվելով ներքևում՝ կոտրած տաշտակի առջև, ստիպված՝ ամեն ինչ սկսել նորից։ Աշխարհում բոլոր դժբախտությունների պատճառը մարդու գոռոզությունն է։

Կապիտալիզմը լեգալացված կողոպուտ է։ Երբ մարդ վարձատրվում է իր աշխատանքի արդյունքից պակաս, ապա դա շահագործում է. հետևաբար՝ կողոպուտ։

Կապիտալիզմն իր էությամբ անմարդկային է. այն փչացնում է լավ մարդկանց։ Սոցիալիզմն իր էությամբ մարդկային է. այն փչացնում են վատ մարդիկ։

Հայաստանը կորցրեց իր անկախությունը, երբ կորցրեց իր ազգային ուսմունքն ու սկսեց կախվել օտարների ուսմունքներից։ Մեր անկախության վերականգնման միակ ճանապարհը սեփական ուսմունքը վերականգնելն ու սերմանելն է։ Ազգի վերջը կգա, երբ այն վերջնականապես կորցնի իր գենետիկ կոդն ու այդ կոդից բխող համապատասխան ազգային ուսմունքի վերականգնման հույսը։

Առանց սեփական ուսմունքի ու անցյալի ժառանգության՝ ազգը նման է անարմատ ծառի։

Կինը հանելուկ չէ։ Նա անսահման խորն ու բազմաբնույթ արարած է ու կոչված է՝ սեր ճառագելով իր շուրջը, փրկել աշխարհը։

Անտանելի է, երբ մարդ թունդ արարչական գեներ ունի, իսկ շուրջը միայն ստորակարգ արարածներ են։

Անվախները միշտ ճիշտն են ասում։ Սուտ ասելը թույլերի բանն է։

Անկեղծությունը մտերմացնում է մարդկանց, իսկ մտերմությունը՝ պարտավորեցնում։ Ու քանի որ պարտավորությու-

նը համապատասխան զոհաբերություններ է պահանջելու, մարդիկ խուսափում են անկեղծությունից։

Սիրահարվածությունը ժամանակավոր է։ Սեր առաջանում է, երբ արժեհամակարգերի համապատասխանություն կա։ Դա միայն երկար շփումից հետո է երևում։

Սերը հոգեհարազատ էակի կարոտն է։

Սերը դիմացինի հանդեպ երևում է նրա մասին հոգատարության ու նրա համար անմնացորդ ինքնազոհաբերության պատրաստակամության մեջ։

Շուտ են նեղանում նրանից, ում հանդեպ անտարբեր չեն։

Կարևորը լավ երազանք ունենալն է։ Այն համատարած խավարում մոմի լույսի պես իրեն է ձգում մարդուն։ Ու մի որոշ ժամանակ անց, եթե մարդ համապատասխան համբերություն ունենա, ապա կհասնի իր նպատակին։

Մեր ազգի վերածննդի հարցում գլխավոր դերը կանանց է պատկանում։ Մեր թշնամիները նրանց միջոցով են քանդել մեր արժեհամակարգը, որի վերականգնման ողջ ծանրությունը հետևաբար կանանց ուսերին է։

Նույնիսկ ամենակատարյալ կառավարման համակարգը ոչ մի օգուտ չունի անբարոյական ժողովրդի համար։ Իսկ բարոյական ժողովրդին ոչ մի վնաս չի տա նույնիսկ ամենաանկատար կառավարման համակարգը։

Բոլոր ընտանեկան, նաև՝ նախաամուսնական դժբախտությունների պատճառն այն է, որ խեղված են մարդկանց պատկերացումները սեփական սեռի դերի ու առաքելության մասին։

Լիարժեքորեն չի ապրում նա, ով պատրաստ չի մեռնել բարու ու գեղեցիկի համար։

Մեր ամենավտանգավոր թշնամին մեր գոռոզությունն է։

Հավատն անզոր է՝ առանց գործերի։
Աղոթքը ևս անզոր է՝ առանց գործերի։

Մարդիկ հաճախ սխալվում են, որովհետև վախենում են սխալվելուց։ Մարդ մի քիչ էլ անզգույշ պիտի ապրի։

Հաճախ թռնել ենք սովորում միայն, երբ առանց պարաշյուտի մեզ օդանավից ցած են նետում։

Կնոջ գենետիկ առաքելությունը կյանքի շարունակությունն ապահովելն է, իսկ տղամարդունը՝ աշխարհը բարեփոխելը։

Տղամարդը կնոջ հոգատարության կարիքն ունի, այլապես չի կարողանա կատարել իր առաքելությունը՝ բարեփոխել աշխարհը։

Լարված միջավայրում մարդիկ դիմակներ են կրում ու թաքցնում իրենց իրական էությունը, բայց անկեղծ վերաբերմունք տեսնելով՝ կարող են հանել այդ դիմակը։

Անկեղծությունը միայն անկեղծ մարդիկ են գնահատում։
Անկեղծությունն ամենագնահատելի արժեքն է։

Հպարտությունը, մանավանդ գոռոզությունը, կանացի հատկություններ չեն։

Կանա՛յք, մի՛ նեղացրեք տղամարդկանց, նեղացած տղամարդն էլ ձերը չի։

Տղամարդը կնոջ սիրո կարիքն ավելի շատ ունի, քան կինը՝ տղամարդու։

Կյանքում շատերին ենք հանդիպում։ Պարզապես նկատում ենք նրանց, ում կարիքը տվյալ պահին ունենք։

Մատրիարխատ չի նշանակում մայրիշխանություն։ Այն միայն նշանակում է մոր պաշտամունք։ Նաև՝ Մայր Բնության պաշտամունք։ Մատրիարխատի ժամանակ կինն իր բազմաբնույթ էությամբ ու իմաստնությամբ ամուսնուն ամեն կերպ աջակցող ու նրա կողմից պաշտվող էակ էր։

Վիրտուալ իրականությունում հեշտ է սիրահարվելը, քանի որ մարդիկ ներկայանում են իրենց լավագույն որակներով, նույնիսկ հորինում են հատկանիշներ, որ չունեն, միևնույն ժամանակ թաքցնելով իրենց վատ կողմերը։

Ամենադժվարը սեփական ներսի ձայնը լսելն է։

Սերմ ցանելուց չեն մտահոգվում, թե ուր կընկնի։

Առաջնորդների վրա հույս դնող ազգը կործանման է դատապարտված։

Ժողովուրդը խորշում է իր «առաջնորդների» դատարկ կոչերից ու խոստումներից։

Անգաղափար՝ դատարկ, հայրենասիրական կոչերով, ժողովուրդը ոտքի չի կանգնի։

Երբ տղամարդն աշխարհը բարեփոխելու համար անդադար կռվի մեջ է, ապա նա կնոջ օժանդակության կարիքն ունի, նրա քնքուշ ու սիրող ձեռքերի, հատկապես՝ նրա հարմարավետ ու սնուցող գրկի։

Կնոջ անընդհատ պահանջկոտությունը նվաստացնող է տղամարդու համար։

Եթե կինը հոգ չի տանում ու սատարում, ապա տղամարդը մեկ ուրիշին կգտնի։ Տղամարդու համար միակ կին հասկացությունը չկա։ Տղամարդը պատրաստ է սիրել իրեն նվիրված բոլոր կանանց։

Կանայք սիրո էներգիա կարող են տալ միայն մեկ տղա-

մարդու։ Բայց տղամարդը սիրո էներգիա կարող է ընդունել մի քանի կանանցից միաժամանակ։

Ով չի գնահատում իր ունեցածը, ապա վաղ թե ուշ կկորցնի այն։

Մեր հանցագործ իշխանություններն ու իշխանավորները կան, որովհետև մեր մեջ կան նրանց սատարողներ։

Եթե անխուսափելիորեն բոլորն են մահանալու, ապա կարիք չկա սարսափել մահից կամ՝ անհանգստանալ։

Որքան էլ զղջանք ու լաց լինենք, նույնիսկ աղոթենք, միևնույն է՝ մեր արարքների հետևանքները վերացնել չի ստացվի։

Ոչ մի կառավարման կամ տնտեսավարման համակարգ կամ օրենսդրություն չի կարող կերտել բարոյական ժողովուրդ։ Միայն առաքինի ուսմունքն է ի զորու կերտել բարոյական ժողովուրդ։

Մոլորակին սպառնում է բարոյական, սոցիալական, տնտեսական ու էկոլոգիական աղետ։

Մարդու կողմից մարդու ցանկացած շահագործում կապիտալիզմ է։ Ստրկատիրությունն ու ճորտատիրությունը կապիտալիզմի ձևեր են։

Կեղծավորությունն ամենակործանարար բանն է։ Քրիստոսը ներել է գողերին, մարմնավաճառներին, անգամ՝ բռնակալներին, բայց ոչ երբեք՝ կեղծավորներին։

Արժեհամակարգային հեղափոխությունը միակ հեղափոխությունն է։ Դրա դեմ իշխանություններն անզոր են։ Միակ խոչընդոտը մեր մեջ է։

Նախ ամբողջ սրտով ուսումնասիրիր այն, ինչին ամբողջ սրտով ընդդիմանում ես։

Ժողովուրդը թեև գենետիկ, սակայն մշակութային ընդհանրություն չունեցող մարդկանց բազմությունն է։

Ազգը մշակութային ընդհանրություն ունեցող մարդկանց բազմությունն է։

Հայրենիքը մայր հողի վրա ապրող ու արարող ազգն է։ Հայրենիք է նույնիսկ երկու հոգեհարազատ մարդկանց բազմությունը։

Որտեղ քեզ չեն հասկանում, այնտեղ չի կարող քո հայրենիքը լինել։

Սիրո չես հասնի, մինչև գոռոզության հասնող արժանապատվությունդ վայր չդնես։ Սիրո մեջ տեղ չունեն արժանապատվության, հպարտության, մանավանդ՝ գոռոզության զգացումները։ Սրանք կարող են լինել միմյանց օտար, հակամարտ ու թշնամի մարդկանց միջև։

Կնոջ նվիրվածությունն ու հավատարմությունը տղամարդու համար ամենագնահատելի հատկություններն են։

Տիեզերքն անկողմնակալ է։ Մարդու ամեն սխալ պիտի փոխհատուցվի համապատասխան տառապանքով։ Սա տիեզերքի օրենքն է։ Մարդու բոլոր սխալները համապատասխան փոխհատուցում են պահանջում։

Պոեզիա ծնվում է միայն սրտի թրթիռից։ Սրտի ոչ մի թրթիռ չի կարելի բաց թողնել։

Բժշկի մի սխալից կտուժի մեկը։
Ինժեների մի սխալից՝ գուցե հարյուրները։
Իսկ ուսուցչի սխալից՝ մի ողջ սերունդ։

Առանց բավարարվածության, առանց բերկրանքի ոչինչ չի կարելի անել։ Դա ամայացնում է մարդու ներսը, զրկում կյանքի ներուժից։ Առանց բերկրանքի նույնիսկ ինքնազոհաբերություն չի կարելի անել։

Եթե իմանաս ուրիշների խնդիրների մասին, ապա քոնից չես հրաժարվի՝ նրանցը շալակելու պայմանով։

Մարդը չի ծնվում տառապելու համար։ Մարդը ծնվում է բերկրանքից ու ապրում բերկրանքով։ Առանց բերկրանքի կյանքը դանդաղ մահ է։

Մինչև չհասկանաս ու չընդունես բոլոր սխալներդ, նաև չպարզես սրտիդ ուզածը, ոչ մի դրական փոփոխություն տեղի չի ունենա։

Գործիր միայն անկեղծ սրտիդ թելադրանքով, ու ամեն բան լավ կլինի։

Մի՞թե հնարավոր է սիրել նրան, ով քեզ չի սիրում։

Ապագան կախված է մեր բոլորի հավաքական ջանքերից։

Համեստությունն արժեհամակարգային կատեգորիա է։ Ակնածանքը՝ նույնպես։ Ամաչկոտությունը վարքագիծ է, հետևանք, որ բխում է, երբ մարդն ունի համեստություն ու ակնածանք արժեհամակարգային կատեգորիաները։

Արտաքին միջավայրը սովորաբար ճնշում է մեր իսկական էությունը։ Երբ այդ ճնշումը մեծ է ու շարունակական, երբեմն անհնար է ձերբազատվել դրա ազդեցությունից։

Անարժան մեկի հանդեպ ազնվորեն վարվելն ամենաքիչն անմտություն է։

Մեր գենետիկ կոդը ձևավորման երկար ճանապարհ է անցել։ Դա է պատճառը, որ միաբջիջ ջրիմուռից սկսած, բոլոր էակների հատկություններն ունենք մեր մեջ ներփակված։ Նորածին երեխաներն, օրինակ, ջրից չեն վախենում ու լավ լողում են։

Լուծեք ձեր պրոբլեմների հարցերը, քանի դեռ նրանք չեն լուծել ձեր հարցերը։

Մեր մտքերը մեր գենետիկ կոդի վիբրացիաներն են։

Սիրո մեջ խորամանկություն չկա։ Սիրո մեջ տեղ չունեն նաև խարդավանքները։ Սիրող մարդը չի կշռադատում ինչ անի որևէ արդյունք ստանալու համար։ Ճիշտ է, կա միշտ մտավախություն, որ անկեղծությանդ նույն կերպ չեն պատասխանի։ Բայց կորցնելու ոչինչ չունես, գոնե կիմանաս, որ քեզ չեն սիրում ու հանգիստ կհեռանաս։

Իգական սեռն իրականության բծախնդիր ընկալում ունի։ Ոչինչ բաց չի թողնում լսածից ու տեսածից։ Դրանից է, որ դպրոցում գերազանցիկները հիմնականում աղջիկներն են։

Փոքր տարիքում տղաներն անուշադիր են, շատ վատ են տեսնում ու լսում։ Դժվարությամբ են ընկալում ասվածը։ Դրանից է, որ դպրոցում կաղում են առաջադիմությունից։

Բայց աղջիկները լսածի ու տեսածի, ընդհանրապես ընկալված ինֆորմացիայի կոհերենտ համադրումներ ու եզրահանգումներ անելու մեծ ունակություն չունեն։ Ի տարբերություն նրանց, տղաներն ունեն։ Դրանից է, որ բարձր դասարաններում կարելի է տեսնել առաջադիմությամբ աղջիկներին գերազանցող տղաների։

Սիրող կինը տղամարդու հանդեպ հոգատարություն ունի ու նրան չի անհանգստացնում պահանջներով, մանավանդ՝ քմահաճույքներով։

Կինը, հմայիչ լինելու հետ մեկտեղ, պիտի նաև իմաստուն լինի։

Կինը տղամարդու հետ չպիտի մրցի։ Պիտի միայն գնահատի նրան ու համագործակցի։

Կյանքը նույն անողոքն է բոլորի համար։ Պարզապես տարբեր մարդիկ տարբեր են ընկալում այն։ Մարդիկ նաև տարբեր մարդկանց են ձգում դեպի իրենց ու դրանով

տարբեր իրավիճակներ ստեղծում իրենց շուրջը։

Մշտապես ինքնազոհաբերությամբ ապրող մարդիկ չափազանց խոցելի թիրախ են։ Նրանց շուրջն արագորեն գոյանում է մշտապես կլանողների անշնորհակալ խումբ։

Համատիեզերական օրինաչափություն կա՝ դատարկությունը երկար չի պահպանվում։ Այն միանգամից լցվում է ինչ-որ բանով։

Մարդիկ դադարում են հետաքրքրվել քեզնով, երբ էլ տալու ոչինչ չունես։

Դիմացինի թեկուզ լուռ ակնկալիքը դատարկում է ողջ ներուժդ ու սպանում։

Մարդու հիմնական ձեռքբերումն իր փորձն ու գիտելիքն են։ Փորձն ու գիտելիքը մարդուց ոչ ոք չի կարող խլել։

Կանայք երբեմն տղամարդուն դիտում են՝ որպես նյութական արժեք ու ոչ մի խորամանկության ու խարդավանքի առջև կանգ չեն առնում՝ նրան ձեռք բերելու համար։ Սա նվաստացնող է տղամարդու համար։ Տղամարդիկ աստվածներ են։ Նրանց չի կարելի ձեռք բերել։ Նրանց կարելի է միայն հետաքրքրել։

Տղամարդուց սիրո խոստովանություն պահանջելը, նույնիսկ՝ ակնկալելը, չափազանց նվաստացնող է նրա համար։

Ողջ տիեզերքում առատություն է։ Արարիչը ստեղծել է մարդուն, առատորեն տվել նրան ամեն ինչ։ Սղությունը մարդու ձեռքի գործն է։ Մարդն է սղություն առաջ բերում ու դժբախտացնում մյուս մարդկանց ու, ի վերջո, նաև ինքն իրեն։

Տղամարդը կնոջ սիրո էներգիայի կարիքն ունի։ Իսկ կինը՝ տղամարդու ինտելեկտուալ էներգիայի։

Համացանցում սեփական անձի շուրջ հագեցած կերպարներ կերտելու փոխարեն ավելի արդյունավետ կլինի զբաղվենք արժեհամակարգային՝ ոամունքային, խնդիրներով։

Տղամարդիկ ի սկզբանե հավասարակշռված էակներ են։ Եթե տղամարդը խճճվել է ու այլևս բան չի հասկանում, ուրեմն նրա անմիջական շրջապատում կին կա։

Շտապողականությունը հեռու է վանում այն, ինչին ձգտում ենք։ Ամեն նպատակ իրեն հասնելու արագություն ունի։

Ինչին գլխապատառ ես ձգտում, հեռանում է։ Ինչից վախենում, փախչում ես, գալիս է դեպի քեզ։

Նախքան գործի անցնելը, մարդիկ հաճախ իրենց ձախողման պատճառաբանությունն են նախապատրաստում։

Սեր ստանալու համար նախ սիրում են։ Իսկ սիրելու հետ պահանջներ խառնել չի կարելի։ Անկեղծորեն սիրող սիրտը պահանջներ չի ներկայացնում։

Կինը կարիք չունի մրցելու, բանավիճելու տղամարդու հետ և այլն։ Կինը միայն պիտի ոգևորի ու աջակցի նրան։

Հույսը մարդուց հետո է մեռնում։ Ափսոս... Շուտ որ մեռներ, գուցե մի ելք կգտնեինք նախքան մեռնելը։

Մարդիկ հիմնականում անզգա են, մինչև չի կտրվում սնուցումը, չեն զգում, որ ուտում էին։

Մեզանում բարեկիրթ պահվածքը թույլության նշան է։ Ու քանի որ թույլերը մշտական թիրախ են, ապա հաճախ ձգտում են անկիրթ, գազան՝ ուժեղ, երևալ, ինքնապաշտպանության բնազդով, իհարկե։

Հիմա ամեն ինչ խառնվել է՝ ո՛չ տղամարդիկ խելք ունեն, ո՛չ էլ կանայք են իմաստուն։

Մեծահոգությունն աստվածային հատկություն է։

Գեղեցկությունը հոգեվիճակ է ու այն իհարկե իր արտաքին դրսևորումն ունի։

Հարմարվողականությունը հաճախ կասեցնում է առաջընթացը։

Երբ աշակերտը պատրաստ լինի, ապա կնկատի իր ուսուցչին։

Կարման մեր, բայց հիմնականում մեր նախորդների ու մերձավորների գործունեության հետևանքն է։ Այն մեզ ուղեկցում է մեր ծնված օրվանից։

Շատերն են ասում՝ ամեն մեկն իր ճիշտն ունի... Պարզապես ամեն մեկն իր արժեհամակարգն ունի, կամ՝ գնահատման սանդղակը։ Ճշմարտությունը, կամ ճշմարիտ ոամունքը միշտ էլ մեկն է, թեկուզ, եթե ոչ ոք այն լիովին չի կարողանում ընկալել։

Պատասխանատվությունն ու իրավունքը միմյանցից անբաժանելի կատեգորիաներ են։ Ողջ պատասխանատվությունն իր վրա վերցնողը վերցնում է նաև ողջ իրավունքը։ Ընտանիքում ողջ պատասխանատվությունը տղամարդն ու կինը պիտի հավասար կիսեն։ Ամուսինների դժբախտությունն այն է, որ պատասխանատվությունն անջատում են իրավունքից, ու մյուսի վրա դնելով ողջ պատասխանատվությունը, երբեմն ամբողջ իրավունքը վերապահում են իրենց։

Կինը շրջապատի բազմակողմանի ու միաժամանակյա ընկալում ունի։ Տղամարդը՝ հակառակը, շրջապատի բազմակողմանի ընկալում չունի, մանավանդ միաժամանակյա։ Տղամարդն ունի որևէ առանձին երևույթի խորացված ընկալում։ Հետևաբար, տղամարդու և կնոջ հատկությունները մեկը մյուսին լրացնում են։

Առաջնահերթը բարձրարժեք մշակույթ ունեցող ազգ ձևավորելն է: Անմշակույթ խառնամբոխի միջից միշտ էլ խուժան իշխանություններ են դուրս գալու:

Չարը սեփական շահի համար ուրիշներին կամ մայր բնությանը վնասելու միտումն է: Իսկ միտումի հեղինակը հենց ինքը՝ չարագործը:

Դիմացինից միայն ստանալու միտումն արդեն չարիք է:

Չարը ներդաշնակության բաղադրիչ չի: Չարի կարիքը չկա՝ ներդաշնակության հասնելու ու երջանիկ ապրելու համար: Չարը պետք է միայն վերացնել: Ներդաշնակություն կա միայն չարից զերծ միջավայրում: Ու միայն ներդաշնակ միջավայրում է մարդ իրեն երջանիկ զգում:

Երջանկությունն է մարդու բնական վիճակը: Մնացած բոլոր վիճակները սպանում են մարդուն:

Օրգանիզմի կենսագործունեության հետևանքով անխուսափելիորեն թափոններ են առաջանում: Իսկ կեղտը ոչ թե պահում են մարմնում, մանավանդ գլխին նստեցնում, որ շարունակի թունավորել օրգանիզմը, այլ դուրս են հանում ու դեն նետում:

Հազվադեպ է, երբ մարդ ինքն իրեն չի սիրում, բայց դա է հենց ամենասիրելու բանը:

Կա մտքի ազատություն, կա գործելու ազատություն, կա ազատություն բռնությունից և այլն: Մարդիկ, ազատություն ասելով, հիմնականում հասկանում են գործելու ազատություն ու ազատություն բռնությունից: Հաճախ էլ ամենաթողություն են հասկանում: Բայց իսկական ազատությունը մտքի ազատությունն է, որը գալիս է ճշմարիտ գիտելիքի հետ:

Մարդիկ դիմացինի հանդեպ «բարի» են այնքան ժամանակ, քանի դեռ որևէ շահ ունեն նրանից:

Ասում են. «Այն ժողովուրդը, որը չի ցանկանում ոչնչանալ, երբեք չի ոչնչանա»։ Ճիշտ է, գուցե չոչնչանա, բայց կապրի՞։

Բոլորն, ովքեր իրենց շնորհքով, իրենց քրտինքով են որևէ արժեք ստեղծում ու ապրում, «ուրիշի հաշվին» չի կարելի որակել։ Ուրիշի հաշվին է «վաստակում» նա, ով շահագործում է մյուսի աշխատանքը, ով ստիպողաբար կամ խաբեությամբ, երբեմն էլ դատարկ հայրենասիրական կոչերով ու խոստումներով, իր հետևից է տանում մարդկանց՝ նրանցից որևէ նյութական շահ ստանալու կամ իր փառասիրությունը բավարարելու համար։

Դիմացինին խայթելու միտումը հաճախ սեփական ես-ի ցուցադրումն է։ Նույն միտումով էլ մարդիկ վիրավորվածություն են ցույց տալիս՝ սեփական ես-ը ստվերից դուրս բերելու ու արհեստականորեն արժևորելու համար։

Ե՛վ կանայք, և՛ տղամարդիկ ուսմունքից հիմնականում անտեղյակ են, հետևաբար համատարած անկրթություն է տիրում աշխարհում։ Բայց ո՛չ բոլոր անտեղյակներն են դրսևորում ստորակարգ վարք։ Թունդ Արարչական գենակիրների վարքը, պայմանավորում է նրանց գենետիկ կոդը։

Սերն ու կարեկցանքը բացում են իմացության ու երջանկության բոլոր դռները։ Հիրավի իմաստուն է նա, ով սիրում է իր մերձավորին այնպես, ինչպես ինքն իրեն։

Երբ բոլորն իմանան, թե ինչ ազնվասիրտ ազգ ենք եղել, իրենք ևս կազնվանան։ Ու երբ բոլորն ազնվանան, այլևս խնդիր չենք ունենա։

Միայն ուսմունքով կա հայոց փրկություն։

Մեծերին պետք է գնահատել ու լսել, այլապես առաջընթացը կանգ կառնի։ Մարդկության առաջընթացը կանգ է առել հենց այն պատճառով, որ մարդիկ իրենց նախորդ-

ներին չեն լսել։ Իսկ, քանի որ համատիեզերական օրինաչափություն կա՝ եթե մարդ չի առաջադիմում, ուրեմն՝ հետ է գնում, ապա մենք դեռ հետ ենք գնում, որովհետև դեռ շարունակում ենք արհամարհել մեր նախորդների գիտելիքը։

Անուսումնք մարդը միանգամից գազանի է վերածվում։ Մենք հիմա բարձր տեխնոլոգիաներով զինված գազաններ են՝ քաղաքակիրթ դիմակներով։

Մարդուն սպանում են՝ վերացնելով նրա մարդկային ուսմունքը։ Հենց այսպես են սպանել մեզ՝ որպես ազգ։

Արարիչն աշխարհը չի ստեղծել չարագործների համար։ Չարագործները տեղ չունեն այս աշխարհում։ Արարիչն աշխարհն ստեղծել է ազնվասիրտ մարդկանց համար։

Չարագործներին հաճախ Արարիչը միանգամից չի պատժում՝ նրանց շարունակաբար ինքնաշտկվելու հնարավորություններ տալով։ Սակայն չարագործներն ամեն անգամ լցվում են անպատժելիության զգացումով, երես առնում ու շարունակում իրենց չար գործերը։ Բայց ամեն ինչ վերջ ունի։ Արարչի համբերությունը՝ ևս։

Արագ փոփոխություններ չեն լինում։ Մանավանդ մեծ փոփոխությունները մեծ ժամանակ են պահանջում։ Արագ փոփոխությունների հետևից ընկնելով՝ շատ ժամանակ ենք կորցրել ու դեռ շարունակում ենք կորցնել։

Ստրկամտությունը կեղեքիչներին հանդուրժելը չէ, այլ՝ նրանց ծառայելը։

Լավն ու վատը միմյանցից տարբերելը մեծ խնդիր չէ։ Լավն ու վատը մարդ տարբերում է միանգամից։ Լավի ու վատի, ճշտի ու սխալի, արդարության ու անարդարության ցուցիչը մարդու գենետիկ կոդում է։ Դժվարը տարբերելուց հետո լավի, արդարի, ընդհանրապես ճշմարտության կողմը պահելն է՝ ճշմարիտ կյանքով ապրելը, սրտիդ ուզածն

անելը։ Շրջապատող իրականությունն, ավաղ, չի թողնում։ Ճնշում է, խանգարում, տառապանքների մատնում, մեծ զոհաբերություններ պահանջում։

Գենետիկ կոդն է պայմանավորում ո՛չ միայն մարդու տաղանդը, այլ նաև նրա բարոյահոգևոր արժեքների համակարգը։ Այլապես հնարավոր չէ բացատրել, որ միևնույն ծնողներից ծնված, միևնույն ընտանիքում, միևնույն միջավայրում մեծացած, միևնույն ուսուցիչներն ունեցած երեխաները, հարազատ քույրեր ու եղբայրներ լինելով հանդերձ, կարող են շատ տարբեր տաղանդ ու արժեհամակարգ ունենալ։ Պարզապես երեխաների մեջ ամեն անգամ տարբեր գենետիկ համադրումներ են առաջանում։

Տարիների ընթացքում, շարունակական գենետիկ մուտացիաների հետևանքով, մարդկանց լայն զանգվածների մեջ շատ տարբեր համադրումներ են առաջանում։

Հասարակության խնդիրները լուծելու խնդիրը ողջ հասարակության խնդիրն է։

Խավարը երբեք լույս չի տա։ Բայց արի ու տես, որ կարողանում է փակել լույսի ճանապարհը։

Մեր սխալներն ուղղելու փոխարեն միայն զղջում ենք ու լաց լինում՝ աչքներս ուրիշի կարեկցանքին ու օգնությանը։

Մեր թշնամիներն ամեն կերպ փորձում են ջնջել մեր անցյալը, որպեսզի կարողանան վերացնել մեզ՝ որպես ազգ։ Չկա ինքնություն՝ առանց կենսագրության, առանց այն ձեռքբերումների, որ մարդն ունեցել է իր կյանքի ընթացքում։ Նմանապես ազգն է կորցնում իր ինքնությունը՝ կորցնելով այն արժեքները, որ ստեղծել է անցյալում։

Ցավալիորեն մարդու համար բացի իրենից ու իր շառավղից ուրիշ ոչ մի բան այդքան նշանակություն չունի։ Ազգովի կհամախմբվենք միայն այն ժամանակ, երբ բոլորիս ձեռնտու ուսմունք առաջանա։

Մեր ստորակարգ խուժանին համախմբված է պահում ոհմակային շահը: Տնտեսության ազգայնացումը կզրկի մարդկանց ոհմակների մեջ համախմբվելու որևէ իմաստից:

Ամեն հայ մի Հայաստան է: Ուր գնում, հետներս տանում ենք: Գուցե դրանի՞ց է, որ չենք կարոտում ու չենք ուզում հետ վերադառնալ:

Մեր ներկա ճգնաժամի մեղավորն ինքներս ենք: Դեռ երկար կշարունակենք պատժվել, եթե չգիտակցենք մեր մեղքը: Մեր գենետիկ կոդին ոչ համահունչ ապրելակերպը մեր ամենամեծ սխալն է: Մեր գենետիկ կոդից բխում է ազգայնացված տնտեսություն ու նահապետական՝ միապետական կառավարում: Կապիտալիզմն ու դեմոկրատիան մեր գենետիկ կոդին անհարիր կացութաձևեր են:

Մոտակա տիեզերքի ամենակարևոր օբյեկտը Երկիր մոլորակն է, իսկ ամենակարևոր արարածը՝ մարդը: Մարդը տիեզերքի կենտրոնն է: Մարդու միտքն ու գործն իր դրոշմն են թողնում ու ձևավորում տիեզերքը՝ նրա վիբրացիոն դաշտը:

Մարդը կամ ազգը ինքնափրկվելու փորձ չի անի, մինչև իրավիճակը ծայրաստիճան չվատանա:

Մտքերը ոչինչ են՝ առանց գործերի: Գործն է բնորոշում մարդուն: Մարդուն գործով են ճանաչում:

Հայը տարիք չունի: Ուրիշ ազգերն ունեն, բայց հայը չունի: Մենք եկել ենք դարերից, ավելի ճիշտ՝ հազարամյակներից, ու գնում ենք հաղթական դեպի դարերը նորից, դեպի պայծառ ապագան:

Կանանցից կարիք չկա վախենալ: Նրանք վտանգավոր են դառնում, երբ տեսնում են տղամարդու անտեղյակությունը, անվստահությունն ու վախը:

Տղամարդուն բարկացած կին պետք չէ:

Կնոջ համար լացն էլ է զենքի տեսակ։

Խաբեությամբ կամ բռնությամբ ձեռք բերածի կյանքը կարճ է։

Սրիկաների ազգը չի կարող երջանիկ լինել։ Երջանիկ կարող է լինել միայն այն ազգը, որն ապրում է առաքինի կյանքով՝ Արարչական օրենքներին համահունչ։

Որևէ առաջադիմություն ունենալու համար հարկավոր է նախ որևէ ուղեցույց ունենալ, այն ստանդարտը, որին պետք է հասնել։ Առանց ստանդարտի ո՛չ նպատակակետ կա, ո՛չ էլ՝ ուղղություն։

Քրիստոս աշխարհի փրկիչն է ոչ այն իմաստով, որ ինչ անենք-չանենք, միևույն է, փրկվելու ենք, այլ այն իմաստով, որ աշխարհին իր ուսմունքով փրկություն է բերել, եթե ընդունենք ու ապրենք՝ ըստ այդ ուսմունքի։

Եթե ինչ-որ մեկի հանդեպ որևէ բանի պահանջ կամ նույնիսկ ակնկալիք կա, ուրեմն չկա հարազատություն։

Սիրող մարդը երբեք ցավ չի պատճառի։ Դիմացինին ցավ պատճառելը սիրո բացակայությունից է։

Ամեն ծնող պարտավորություն է զգում ամեն ինչ անել իր զավակի համար։ Բայց զավակները հաճախ չեն հասկանում ծնողի արածը։ Նույնիսկ ծնողի ներկայությունը, երբեմն ծանր բեռ է դառնում նրանց համար։

Բոլոր ծնողները թյուրիմացաբար կարծում են, թե մեծանալով երեխաները գնահատելու են իրենց բոլոր զոհաբերությունները։

Եթե ընտանիքում չկա փոխադարձ հոգատարություն, ապա դժվար է այն ընտանիք կոչել։

Կյանքը շատ կարճ է՝ այն անօգուտ ու աննպատակ զրույց-

ներում վատնելու համար։

Սիրող մարդը չի խաբի ու ոչինչ չի թաքցնի, ընդհանրապես կվարվի ազնվորեն։ Թաքցնում են նրանից, ում հարգատ չեն համարում։ Եթե չկա հոգեհարազատություն, ուրեմն չկա սեր։

Չի կարելի ապրել՝ սեփական մարմինն անխնա զոհաբերելով։ Այն նվեր է Արարչից։ Նա ցավ է զգում, երբ իր նվերը վատնում ենք դես ու դեն, անարժան բաների վրա։

Ներդաշնակ կյանքի գաղտնիքն ամեն ինչ անհրաժեշտի սահմաններում պահելու մեջ է։ Բայց, դժբախտաբար, մարդը չափի զգացում չունի։

Ոչ մի կենդանի մյուսի մասին չի մտահոգված։ Նույնն էլ մարդն է։ Մարդը հիմնականում կլանելու ու կուտակելու մոլուցք ունի։ Երբեք դիմացինի դրության մեջ չի մտնում, չի պատկերացնում ուրիշի տառապանքը։

Մարդն ի սկզբանե եսակենտրոն է ու ագահ։ Երբ մեկն Արարչի կողմից բոլորին շնորհված նյութական բարիքները կողոպտում ու դիզում է սեփական բակում, ապա դրանով մյուսներին սովի ու մահվան է դատապարտում։ Կապիտալիզմը քաղցկեղի նախապայմանն է։

Լուրջ հարցադրմանը հումորով արձագանքելը մատնում է խնդրի լուծումից խուսափելու մարդու միտումը։

Մտածիր, բայց մի մտահոգվիր։

Ընդդիմության գործը միայն իշխանություններին վատաբանելը չէ։ Դա բոլորն են անում։ Ընդդիմության գործն այլընտրանք առաջարկելն է։ Եթե նման առաջարկություն չկա, ուրեմն չկա ընդդիմություն։

Դեժավյուն երևի մարդու ցանկությունների ու կանխատեսումների մոտավոր իրականացումն է։

Շրջապատի մարդիկ ուզում են, որ ամեն ինչ անես իրենց ուզածով: Երբ չես անում, վրդովվում են: Երբ համառորեն չես անում, պատերազմի են ելնում: Երբ հերոսաբար չես անում, հանձնվում են ու սկսում հարգել:

Վտանգավոր է կանանց խոստումներ տալ: Ամեն ինչ հիշում են: Դեռ մի բան էլ ավելի:

Ամենավերևում Արարիչն է: Արարչից մտավոր ու հոգևոր գիտելիք է ստանում տղամարդը: Տղամարդուց՝ կինը, որը կանգնած է մայր հողի վրա: Կինը մայր հողից էներգիա է ստանում ու լիցքավորում տղամարդուն: Իսկ տղամարդը, այդ էներգիայով լեցուն, շարունակում է արարել ու Արարչից գիտելիք ստանալով, փոխանցել կնոջը: Կինն իր ստացած գիտելիքով խնամում ու կրթում է երեխաներին: Այսպիսով, կինն ու տղամարդը կազմում են ադամանդակուռ ընտանեկան բուրգ: Սա է ներդաշնակությունն ու օրինակելի ընտանիքի մոդելը:

Մեր հիմնական խնդիրն այս կյանքում արարելն է ու շարարողներին՝ բացարձակ չարին, հայտնաբերելն ու վերացնելը: Այդ խնդրի լուծումից է կախված Արարչի կողմից մեր գնահատականի չափը:

Ասում են՝ մենք՝ հայերս, կրթել ու ձևավորել ենք աշխարհի բոլոր ազգերին. հատկապես՝ եվրոպական: Իսկ սեփական ազգի կրթության հարցում ո՞ւմ շնորհակալ լինենք:

Որքան մեծ է որևէ բանի հասնելու մեր ցանկությունն, այնքան քիչ ժամանակ կպահանջվի՝ դրան հասնելու համար:

Ծեծ ենք ուտում հիմնականում մեր գոռոզ ու անպատասխանատու վարքի պատճառով:

Ամեն ինչ նախ գլխով են կառուցում:

Համատիեզերական գիտելիքը մեկն է։ Լավագույն դեպքում մարդիկ նրա միայն որոշ մասն են նկատում ու տարբեր ձևերով շարադրում։

Իմաստուն թագուհիներն են թագավորների հաջողությունների գրավականը։

Գովաբանությունը նվաստացնող է տղամարդու համար։

Կանայք սկզբում փորձում են իրենց ենթարկել տղամարդուն, առանց մտածելու, որ հետո խորշելու են իրենց ոտքերի տակ ընկած տղամարդուց։

Լուրջ թեմաները պարտավորեցնող են։ Իսկ, քանի որ մարդիկ հիմնականում խուսափում են պատասխանատվությունից, ապա ուշադրություն են դարձնում միայն անլուրջ թեմաների վրա։

Դեմոկրատիայի, կապիտալիզմի ու լիբերալիզմի թունավոր խառնուրդը հատուկ զենք է՝ երկրներ կործանելու համար։

Ֆեմինիզմը տղամարդ էության հանդեպ կնոջ կողմից հարգանքի բացակայությունն է։

Համընդհանուր առաքինի մշակույթ ունեցող ժողովրդին ոչ մի ուժ չի կարող որևէ բան պարտադրել։

Ուրախ մարդիկ չեն հիվանդանում։ Նույնիսկ բուժում են իրենց շրջապատի մարդկանց։ Իսկ տխուր մարդիկ հիվանդանում են։ Ու նմանապես հիվանդացնում իրենց շրջապատի մարդկանց։

Առաքինությունը ուրիշին անհանգստություն չպատճառելու պատրաստակամությունն է։

Տարբեր արժեհամակարգերով թելադրված, մարդկանց տարբեր մղումներն ու շահերը մշտական բախման մեջ են։ Շահերի մշտական բախումը երբեք անդորր ու ներդաշ-

նակություն չի ապահովի։ Առանց ներդաշնակության չկա սեր ու երջանկություն։ Հետևաբար, միակ ճանապարհը առաքինի արժեհամակարգի սերմանումն է։ Եթե բոլորն ընդունեն ու ղեկավարեն առաքինի արժեհամակարգով, ապա կտիրի սեր ու երջանկություն։ Առանց երջանկության չկա կյանք։ Մարդ ծնվել է երջանիկ ապրելու համար։

Ամուսնու առաքինի արժեհամակարգը չընդունող կինը ոչ միայն ամուսնու թշնամին է, այլ նաև՝ ողջ հասարակության։

Բարօրության ամենամեծ թշնամին փառամոլ ու գոռոզ՝ ֆեմինիստ, կինն է։

Կնոջ հավատարմությունը չի ենթադրում միայն մարմնական հավատարմություն։ Այն առաջին հերթին ենթադրում է հոգևոր ու մտավոր հավատարմություն։ Կնոջ հոգևոր ու մտավոր անհավատարմությունը նույնքան անընդունելի է, որքան մարմնականը։ Կնոջ կողմից տղամարդու արժեհամակարգը չընդունելն ու նրան չսատարելը դավաճանություն է։

Անուամունք կինը հրեշ է, իսկ անուամունք տղամարդը՝ տըգետ։

Կնոջը հուսալի տղամարդ է պետք։ Իսկ հուսալի կարող է լինել միայն առաքինի տղամարդը։ Ու քանի որ մեր իրականությունը անբարոյական իրականություն է հիմնված անբարոյական նորմերի վրա, ապա առաքինի ու հուսալի տղամարդիկ համարյա չեն կարող առաջանալ։

Անբարոյական՝ միմյանց կոկորդի նստած, հասարակությունը ուժեղ լինել չի կարող։ Մենք կորցրեցինք մեր հըսկա երկիրը հենց այն պատճառով, որ որդեգրեցինք կապիտալիզմի անբարոյական արժեքները ու դեռ չենք հասկացել և շարունակում ենք կորցնել։

Անբարոյականություն է երբ կինը, չբավարարվելով ամուս-

նով, ձգտում է նկատված ու գնահատված լինել ուրիշ տղամարդկանց կողմից։

Երբ կանայք ի ցույց են դնում իրենց մարմնի բարեմասնությունները, ապա դա նշանակում է, որ նրանք ոչ մի հոգևոր արժանիք չունեն։

Կինն ու տղամարդը միմյանց փոխլրացնող էություններ են։ Նրանց միությունը մրցակցություն չի ենթադրում։ Եթե կա որևէ մրցակցություն նրանց միջև, մանավանդ՝ հակամարտություն, ապա առկա է կործանում տանող անհերդաշնակություն, որն անխուսափելիորեն տանելու է միայն դեպի ավելի մեծ դժբախտությունների։

Մեղքը շահադիտական նպատակով դիմացինին վնասելու միտումն է։

Երբ լծակներ չկան դրական արդյունքի հասնելու համար, ապա ցանկացած բողոքի ակցիա առնվազն ծիծաղելի է։

Ի սկզբանե ողջ տիեզերքը լիքն է նախանյութով։ Նյութի տիեզերքը ծագել է նախասկզբնական մայր նախանյութից այնպես, ինչպես մայր հողն է ծնում ու սնում իր բոլոր արարածներին, այնպես, ինչպես մայրն է երեխաներ ծընում ու սնում նրանց։ Մայր նախանյութին ներհատուկ բոլոր օրենքներն ու օրինաչափությունները արտահայտվում են նաև նյութական տիեզերքի մեջ։ Նյութական տիեզերքի ամենաբարձրակարգ արարածը մարդն է։ Ինքն իրեն ուսումնասիրելով, մարդը կբացհայտի տիեզերքի բոլոր օրենքներն ու օրինաչափությունները։

Տիեզերքն առաջադիմելու և ինքնակատարելագործվելու մըղում ունի, ու դրան վերջ չկա։ Տիեզերքի առաջադիմության ու ինքնակատարելագործման ճանապարհին անխուսափելիորեն առաջանում են ստորակարգ արարածներ ու իրենց կործանարար վիբրացիաներով լցնում շուրջը։ Ստորակարգ վիբրացիաներով լի միջավայրում կատարյալ արարածները չեն կարող ապրել բերկրանքով ու գիտելիք ձեռք բերել

համատիեզերական օրինաչափությունների մասին: Հետևաբար, կանգ կառնի տիեզերքի առաջընթացն ու ինքնակատարելագործումը: Նման միջավայրում ոչ բերկրալի կյանք ապրելով, մենք միայն կճանաչենք ստորակարգ աշխարհի բնույթն ու օրինաչափությունները: Բայց դա համատիեզերական օրինաչափությունների մի չնչին ու անկարևոր մասն է միայն: Ամբողջը ճանաչելու համար հարկավոր է ապրել բերկրանքով, սիրով, ամեն դեպքում՝ սրտաբաց:

Մարդը ծնվել է բերկրանքով ապրելու համար: Միայն ներդաշնակության մեջ ապրելով ու բերկրանքով է հնարավոր ճշմարիտ գիտելիք ձեռք բերել համատիեզերական օրենքների ու օրինաչափությունների մասին: Միայն բերկրանքով ապրելն է հարստացնում մարդու ներսն ու առաջադիմության մղում նրան:

Տիեզերքը միայն մեր՝ մարդկանց, միջոցով է կարողանում առաջադիմել: Այս կյանքում ապրած մեր բերկրանքի զգացումները շատ կարևոր են տիեզերքի համար: Միայն մարդու միջոցով է հնարավոր տիեզերքի առաջադիմությունը: Տիեզերքը մեզ հենց դրա համար է ստեղծել: Մեր ինքնակատարելագործումը տիեզերքի ինքնակատարելագործումն է: Մեզնից հետո ավելի կատարյալ էակներ են գալու, որ, ավելի բարձր ու բերկրալի զգացումներ ապրելով, ավելի հարստացնեն ու կատարելագործեն տիեզերքը:

Առանց զոհողության իհարկե ոչինչ հնարավոր չէ անել: Բայց սեփական առողջությունը զոհել չի կարելի: Առողջությունը հենց կյանքն է: Զոհաբերության ենթակա է միայն մարդու էգոն:

Բան գրելը, մանավանդ բանաստեղծություն, կուտակված հոգու ճիչ է: Մարդ պիտի բան ունենա կուտակված, որ ճչա:

©Դավիթ Միրզոյան 2013-2015
www.davitmirzoyan.com

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԱԿՆԱՐԿՆԵՐ
ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Խմբագրողներ՝ Արշալույս Դավթյան
Հելեն Բերբերյան
Ձևավորող՝ Դավիթ Միրզոյան
Սրբագրող՝ Սիրանուշ Միրզոյան

Գրքից օրինակ ձեռք բերելու համար կարող եք դիմել հեղինակին՝
www.davitmirzoyan.com
davitmirz@gmail.com

ՏՊԱՐԱՆ՝

ԵՐԵՎԱՆ-2015